



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն
փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ

Թողարկողի ֆիրմային անվանումը

Փակ բաժնետիրական ընկերություն

Կազմակերպա-իրավական ձևը

0047 Հայաստանի հանրապետություն, ք. Երևան, Նորք-մարաշ, Գ. Հովսեփյան 32/6,

հեռ. (37410) 510000,

Էլ. Փոստ՝ info@fcc.am

Ինտերնետային կայք՝ www.fastcredit.am

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը

Փակ բաժնետիրական ընկերություն

Կազմակերպա-իրավական ձևը

0010 Հայաստանի հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 10,

հեռ. (37460) 757000, (37411) 757000,

Էլ. Փոստ՝ info@armswissbank.am

Ինտերնետային կայք՝ www.armswissbank.am

«ՀՀ կենտրոնական բանկի կողմից Ազդագրի գրանցումը չի հավաստում ներդրման
ապահովությունը, ներկայացված տեղեկատվության ճշտությունը կամ իսկությունը»:

Երևան 2020



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

	Առաջին տրանշ	Երկրորդ տրանշ
Արժեթղթի դասը, տեսակը	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	Անվանական արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթի ձևը	Ոչ փաստաթղթային	Ոչ փաստաթղթային
Թողարկման արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	40,000 (քառասուն հազար)	40,000 (քառասուն հազար)
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը	400,000,000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ	4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամտաբերություն	10% տարեկան	6.5% տարեկան
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	կիսամյակային	կիսամյակային
Շրջանառության ժամկետը	36 ամիս	36 ամիս



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	5
ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	7
1. Տեղեկատվություն թողարկողի և թողարկողի գործունեության վերաբերյալ	7
2. Թողարկողին և թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր	12
3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ	15
4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ	16
5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	16
6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները	17
7. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները	19
ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	21
8. Ռիսկային գործոններ	21
9. Հիմնական տեղեկատվություն	23
10. Տեղեկատվություն թողարկվող պարտատոմսերի մասին	23
11. Առաջարկի ժամկետները և պայմանները	35
12. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	39
13. Լրացուցիչ տեղեկատվություն	40
ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	41
14. Անկախ աուդիտորները	41



ԱԶԴԱԳԻՐ







«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

15. Ռիսկային գործոններ	41
16. Տեղեկատվություն Թողարկողի մասին	50
17. Բիզնեսի նկարագիրը	52
18. Թողարկողի կառուցվածքը	54
19. Զարգացման վերջին միտումները	55
20. Թողարկողի կառավարման մարմինները	56
21. Թողարկողի գործադիր տնօրենի տեղակալների եվ գլխավոր հաշվապահի գործառույթները 63	
22. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը	64
23. Հսկող անձինք	69
24. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	69
25. Էական պայմանագրերը	71
26. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	71
27. Այլ տեղեկատվություն	72


ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:


ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

Վահե Բադալյան	Խորհրդի նախագահ		22.06.2020
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վիգեն Բադալյան	Խորհրդի անդամ		22.06.2020
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Համբարձումյան	Խորհրդի անդամ		22.06.2020
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հակոբ Ղոնջեյան	Գործադիր տնօրեն, Վարչության նախագահ		23.06.2020
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կամո Մայիլյան	Գործադիր տնօրենի տեղակալ, Վարչության անդամ		23.06.2020
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Լիլիա Մովսիսյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ		22.06.2020
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՏԵՂԱԲԱՇԽՈՂԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

Գևորգ Մաչանյան	Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ		23.06.2020
<hr/> (անուն, ազգանուն)	<hr/> (պաշտոն)	<hr/> (ստորագրություն)	<hr/> (ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են՝

Հակոբ Ղոնջեյան	Գործադիր տնօրեն, Վարչության նախագահ		23.06.2020
<hr/> (անուն, ազգանուն)	<hr/> (պաշտոն)	<hr/> (ստորագրություն)	<hr/> (ամսաթիվ)



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ԲԱԺԻՆ 1. ԱՍՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Թողարկող կամ Կազմակերպություն**) պարտատոմսերի ազդագրի (այսուհետ՝ **Ազդագիր**) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա: Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Թողարկողի և/կամ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ **Տեղաբաշխող**) գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ www.fastcredit.am, www.armswissbank.am

2017, 2018 և 2019 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրը Թողարկողի տարեկան ֆինանսական հաշվետվություններն են, իսկ մնացած տվյալների ներկայացման աղբյուրն է Կազմակերպության ներքին տեղեկատվական համակարգը, ինչպես նաև պետական մարմինների և այլ կազմակերպությունների կողմից պաշտոնապես հրապարակված տեղեկատվությունը:

1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն,

ռուսերեն՝ «Фаст Кредит Капитал» Универсальная Кредитная Организация Закрытое Акционерное Общество,

անգլերեն՝ “Fast Credit Capital” Universal Credit Organization Closed Joint Stock Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ,

ռուսերեն՝ «Фаст Кредит Капитал» УКО ЗАО,

անգլերեն՝ “Fast Credit Capital” UCO CJSC,



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Նորք- Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+ 374 10) 510 000

Էլ. փոստ՝ info@fcc.am

ինտերնետային կայք՝ www.fastcredit.am

Կոնտակտային անձ՝

Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել՝ Գլխավոր գանձապետ Էդմոնդ Էլոյան Էլ. հասցե՝ dealing@fcc.am

Հեռ.՝ 010 510000 (1070)

Թողարկողի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն:

Կազմակերպությունը գրանցվել է 2011թ.-ի հոկտեմբերի 14-ին, Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) կողմից գրանցման համար՝ 37: Ներկայումս Կազմակերպությունն ունի 11 մասնաճյուղ Երևանում և ևս 13 մասնաճյուղ՝ ՀՀ տարբեր մարզերում:

Կազմակերպության տեսլականն է

Լինել դինամիկ զարգացող ֆինանսական կառույց Հայաստանում և արագ ու որակյալ սպասարկման միջոցով հաճախորդներին մատուցել բազմաբնույթ ֆինանսական ծառայություններ:

Կազմակերպությունը աշխատում է շաբաթը 7 օր, օրը 24 ժամ աշխատանքային ռեժիմով, ինչը շատ հարմար է իր հաճախորդների համար: Որպես նորարարություն հարկ է նշել, որ Կազմակերպությունը աշխատում է իր սեփական FC Bank ծրագրով, ինչպես նաև ունի շատ հարմար հավելված հեռախոսների համար:

Իր առջև ունենալով նպատակ դառնալ բանկ ընկերությունը օրեցօր բարելավում է իր սպասարկման որակը, ավելացնում ծառայությունները ինչպես նաև հաճախորդների



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

սպասարկումն առավել հարմարավետ դարձնելու նպատակով ավելացնում մասնաճյուղերի թիվը՝ ոչ միայն Երևանում այլև ՀՀ մարզերում:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 7,000,000,000 (յոթ միլիարդ) ՀՀ դրամ, որը կազմված է 1,400,000. (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Վահե Բադալյանը և Վիգեն Բադալյանը տիրապետում են Կազմակերպության 100% բաժնետոմսերին, յուրաքանչյուրը 50% և միաժամանակ հանդիսանում են Կազմակերպության խորհրդի անդամ:

Կազմակերպության ստեղծման նպատակն է վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որն իրավունք ունի իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպության գործունեություն՝ ՀՀ ԿԲ-ի կողմից վարկային կազմակերպության լիցենզիա ստանալու օրվանից:

Կազմակերպությունը, վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները և կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է վարկային կազմակերպության գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրության շրջանակներում կարող է՝

ա) իրավաբանական անձանցից, իրենց մասնակիցներից, ՀՀ-ից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ,

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ինչպես նաև ՀՀ օրենքով չարգելված եղանակով ներգրավել փոխառություններ, այդ թվում հրապարակային օֆերտայի միջոցով,

գ) տրամադրել երաշխիքներ,

դ) թողարկել, գնել (գեղչել), վաճառել արժեթղթեր, կատարել նման այլ գործառնություններ,

ե) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

զ) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

է) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և մետաղադրամ.

ը) գնել և վաճառել արտարժույթ, ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

թ) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժա) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

ժբ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

ժգ) ԿԲ-ի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների


Կազմակերպության կառուցվածք

ՀԱՏՏԱՏՎԱԾ Է՝

Հավելված 1

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ
 Խորհրդի 2019թ. հուլիսի 1-ի նիստի
 թիվ 19/07/01-01 որոշմամբ
 ՈւՎԿ մեջ է մտնում 2019 թ-ի հուլիսի 1-ից
 Խորհրդի նախագահ՝ Վահե Բաղայան

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
«ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ





2. Թողարկողին և Թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկեր

Գոյություն ունեն Թողարկողին և վերջինիս գործունեության ոլորտին հատուկ մի շարք գործոններ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով ազդեցություն ունենալ թողարկված արժեթղթերի ռիսկայնության մակարդակի վրա:

Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթն ու դրանցից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկերի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից:

Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել Թողարկողի գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը:

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հետ և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը:

Իրացվելիության ռիսկ, երբ Կազմակերպության ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Կազմակերպության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:

Վարկային ռիսկը, երբ Կազմակերպության նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չեն կատարվում, ինչը կարող է վնաս հասցնել Կազմակերպության կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը Թողարկողի կարևորագույն խնդիրներից է:



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Տոկոսադրույքի ռիսկը, երբ շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, տոկոսային եկամուտների և ի վերջո նաև կապիտալի վրա:

Արտարժույթային ռիսկը սահմանվում է որպես փոխարժեքի փոփոխության հետևանքով Կազմակերպության ֆինանսական արդյունքների և կապիտալի վրա ունեցած բացասական ազդեցության ռիսկ:

Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ:

Կախված ռիսկի ծագման աղբյուրից՝ գործընկերոջ ռիսկը կարելի է տրոհել ռիսկերի հետևյալ տեսակների.

Մայր գումարի կորստի ռիսկը դրամական այն միջոցների կորստի ռիսկն է, որոնք Կազմակերպությունը գործընկերոջը տրամադրել է որպես վարկ կամ ստացվելիք փոխանցման դիմաց կանխավճար/փոխանցում և որոնք գործընկերը չի վերադարձրել կամ հետ չի վճարել ժամանակին՝ պայմանագրով սահմանված ամբողջ գումարի չափով (գործընկերոջ դեֆոլտ): Մայր գումարի կորստի ռիսկը հավասար է վճարման/փոխանցման ենթակա դրամական միջոցներին՝ գործարքի գումարին, եթե գործարքը նախատեսվում է կատարել մեկ փոխանցումով, կամ համապատասխան մնացորդային գումարին, եթե գործարքը նախատեսվում է կատարել մի քանի փոխանցումներով:

Փոխարինման ռիսկը վնասի այն չափն է, որը հավասար է տվյալ գործարքը շուկայում համարժեք գործարքով փոխարինման հետևանքով կրած ծախսերին: Փոխարինման ռիսկն առկա է այն դեպքերում, երբ Կազմակերպությունն ունի գործընկերոջից որոշակի ժամանակ հետո ստացվելիք դրամական հոսքեր:

Առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ: Հաճախ իմաստ ունի տարանջատել այս երկու կատեգորիաները, քանի որ որոշ գործառնությունների գծով գործընկերոջ ռիսկը տարբեր է գործարքի կյանքի ընթացքում: Այն գործարքների դեպքում, երբ կողմերից երկուսն էլ փոխանակում են դրամական հոսքեր, ռիսկն ավելի բարձր է գործարքով նախատեսվող վճարումների իրականացման օրը (երբ Կազմակերպությունն իրականացնում է վճարումն առանց ստանալու հաստատումը, որ գործընկերոջ հանդիպակաց վճարումը հաշվեգրված է), քան վճարումների օրվան նախորդող ժամանակաշրջանում, երբ Կազմակերպությունը հնարավորություն ունի գերծ մնալ իր վճարումների կատարումից, եթե ակնհայտ է, որ գործընկերը չի կատարելու իր վճարումը:

Թողարկողի ռիսկ: Գործընկերոջ ռիսկի համատարած օգտագործվող ենթակատեգորիա է հանդիսանում թողարկողի ռիսկը, որը սահմանվում է որպես արժեթուղթ թողարկողի դեֆոլտի կամ սնանկության հետևանքով հնարավոր կորստի հավանականություն:



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Կազմակերպության կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով: Դա կարտահայտվի Կազմակերպության կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեության լիցենզավորման և կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա:

Գործառնական ռիսկ, որը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործունի կամ արտաքին գործունեների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է կորուստ բերել Թողարկողի կապիտալի և/կամ շահույթի վրա: Կազմակերպությունում գործառնական ռիսկը կառավարվում է «Անձնակազմի հսկողության» բաժնի կողմից:

Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

շուկայում իրեն շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանն:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժույթային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության, հետևաբար՝ իրացվելիության վրա:

3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Կազմակերպության գործունեությունը մշտապես գտնվում է Կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ակտիվները կազմել են 38,449,192 հազ. ՀՀ դրամ, / 28.1% աճ նաղորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ/ պարտավորությունները՝ 28,656,348 հազ. ՀՀ դրամ /12.9% աճ նաղորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ/, կապիտալը՝ 9,792,844 հազ. ՀՀ դրամ: 2019 թվականի կուտակված զուտ շահույթը կազմել 1,149,598 հազ. ՀՀ դրամ:

Կազմակերպության փաստացի համալրված կանոնադրական կապիտալը 2020 թվականի հունվարի 31-ի դրությամբ կազմել է 7,000,000,000 ՀՀ դրամ, որը բաղկացած է 1,400,000 հաստ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Կազմակերպության դեմ չկան և չեն սպասվում դատական հայցեր, որոնք կարող են նյութական, բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ Կազմակերպության զարգացման հեռանկարների վրա:

4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ

Կազմակերպության 2017, 2018 և 2019 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «ԳՐԱՆՏ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Աուդիտորական կազմակերպություն), որը գրանցվել է ՀՀ-ում 1990 թվականին:

Աուդիտորական կազմակերպության հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Վաղարշյան 8/1 հեռ.՝ +374 10 26-09-64, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.grantthornton.am:

Աուդիտորական կազմակերպության տնօրենն է Գագիկ Գյուլբուրդյանը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: Աուդիտորական կազմակերպության եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Թողարկողի կանոնադրությունով սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները՝

1. Ընդհանուր ժողով,
2. Խորհուրդ,
3. Վարչություն,
4. Գործադիր տնօրեն:

Ընդհանուր ժողովը Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Խորհուրդը բաղկացած է 3 անդամից և ընտրվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Վարչությունը և Գործադիր տնօրենը կառավարում են Կազմակերպության առօրյա ընթացիկ գործունեությունը:

Կազմակերպության Խորհուրդը.



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
Վահե Ռոմիկի Բադայան	Խորհրդի նախագահ	31 տարի
Վիգեն Ռոմիկի Բադայան	Խորհրդի անդամ	31 տարի
Հարություն Աշոտի Համբարձումյան	Խորհրդի անդամ	12 տարի

Կազմակերպության Վարչությունը.

Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
Հակոբ Ղոնջեյան	Գործադիր տնօրեն, Վարչության նախագահ	18 տարի
Կամո Մայիլյան	Գործադիր տնօրենի տեղակալ, Վարչության անդամ	13 տարի
Լիլիա Մովսիսյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ	22 տարի

Կազմակերպության վերստուգողն է Լուսինե Հարոյանը:

Կազմակերպության աշխատակիցների թիվը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 506:

6. Կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի հիմնական տվյալները.

Կազմակերպությունը թողարկել է բաժնետոմսեր և պարտատոմսեր:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 7,000,000,000 (յոթ միլիարդ) ՀՀ դրամ, որը կազմված է 1,400,000. (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատ հասարակ անվանական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Վահե Բադայանը և Վիգեն Բադայանը տիրապետում են Կազմակերպության 100% բաժնետոմսերին, յուրաքանչյուրը 50% և միաժամանակ հանդիսանում են Կազմակերպության խորհրդի անդամ:

Հաշվի առնելով կազմակերպության կազմակերպաիրավական ձևը՝ վերջինիս կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում:



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

2018թթ. ընթացքում կազմակերպությունը թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր ներքոնշյալ աղյուսակում ներկայացված հիմնական պայմաններով:

Տարբերակիչ ծածկագիր ISIN	Թողարկման ծավալ/անվանական	Տեղաբաշխված ծավալ/անվանական	Շրջանառության ժամկետ	Արժեկտրոն	Արժեկտրոնի վճարման պարբերականություն
AMFSCRB21ER7	100,000,000 ՀՀ դրամ	100,000,000 ՀՀ դրամ	24 ամիս	10.00%	կիսամյակային
AMFSCRB22ER5	1,000,000 ԱՄՆ դոլար	1,000,000 ԱՄՆ դոլար	24 ամիս	6.90%	կիսամյակային

Տեղաբաշխված պարտատոմսերը ցուցակված են/թույլատրված են առևտրին Բոքսայում և գնանշվում են կազմակերպության և «ԱրմենԲրոք» ԲԲԸ ընկերությունների միջև կնքված շուկա ստեղծողի ծառայությունների մատուցման պայմանագրի հիմքով:

Կազմակերպության՝ առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

	Առաջին տրանշ	Երկրորդ տրանշ
Արժեթղթի դասը, տեսակը	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	
Արժեթղթի ձևը	Ոչ փաստաթղթային	
Թողարկվող արժեթղթերի ծավալը	400,000,000 ՀՀ դրամ,	4,000,000 ԱՄՆ դոլար
Թողարկվող արժեթղթերի քանակը	40,000 հատ	40,000 հատ
Մեկ արժեթղթի անվանական արժեքը	10,000 ՀՀ դրամ	100 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամտաբերություն	10%	6.5%
Շրջանառության ժամկետը	36 ամիս	
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը	Կիսամյակային	
Արժեկտրոնի հաշվարկման առաջին օր	Պարտատոմսերի տեղաբաշխման օր, որը հանդիսանում է նաև թողարկման օր	



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ժամանակ Կազմակերպության և Տեղաբաշխողի կողմից սահմանվում է պոտենցիալ Շուկա ստեղծողի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալ /տվյալ տրանշի ընդհանուր ծավալի առնվազն 10%-ի չափով/, որը Շուկա ստեղծողի կողմից ձեռք է բերվում տվյալ տրանշի աճուրդի ընթացքում ձևավորված միջին կշռված գնով:

Պարտատոմսերի տեղաբաշխման օրը, որը հանդիսանում է նաև թողարկման օր, ենթակա է որոշման Թողարկողի Վարչության կողմից և ենթակա է հրապարակման Թողարկողի www.fastcredit.am և տեղաբաշխողի www.armswissbank.am ինտերնետային կայք էջերում, Պարտատոմսերի տեղաբաշխման օրվանից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ **Բորսա**) անդամները, որոնց ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական կայքում՝ www.amx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել Բորսայի անդամների միջոցով:

Թողարկողը նախատեսում է կնքելու շուկա ստեղծողի ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ (այսուհետ նաև՝ **Շուկա ստեղծող**)՝ պարտատոմսերի իրացվելիության ապահովման նպատակով:

Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցները հավասարապես ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

7. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

(հազ. դրամ)

Ցուցանիշի անվանումը	2019թ	2018թ	2017թ
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,149,598	1,481,322	2,010,218
Մեփական կապիտալի միջին մեծություն	7,218,045	3,932,650	3,822,816



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Մեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%	15.93%	37.67%	52.58%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	34,228,795	27,297,011	22,005,022
Ակտիվների շահութաբերություն (ROA)%	3.36%	5.43%	9.14%
Գործառնական եկամուտ	5,792,649	4,320,518	4,411,916
Զուտ շահույթի մարժա (NPM), %	19.85%	34.29%	45.56%
Ակտիվների օգտագործման գործակից (AU)	16.92%	15.83%	20.05%
Մեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	4.74	6.94	5.76
Զուտ տոկոսային եկամուտ	5,441,194	4,049,957	4,047,544
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	31,292,334	25,131,727	20,372,886
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	17.39%	16.11%	19.87%
Տոկոսային եկամուտ	7,849,763	6,382,862	6,002,978
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	25.09%	25.40%	29.47%
Տոկոսային ծախսեր	2,408,569	2,332,905	1,955,434
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	25,935,439	23,238,448	17,656,244
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	9.29%	10.04%	11.08%
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	1,400,000	600,000	400,000
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	0.82	2.47	5.03
Մպրեդ	15.80%	15.36%	18.39%

Կազմակերպության տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ կից ծանոթագրությունները տեղադրված են Կազմակերպության ինտերնետային էջում, հետևյալ հասցեով

<http://www.fastcredit.am/>



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. Ռիսկային գործոններ

Արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Կազմակերպության վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնում ենք, որ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

Թողարկողի կողմից առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Պարտատոմսերի **իրացվելիության ռիսկը**՝ պարտատոմսերի շուկայի զարգացվածության ցածր մակարդակի պայմաններում, շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության, ինչպես նաև, Կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ պարտատոմսի սեփականատերը ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների բախվի: Մասնավորապես, հնարավոր է, որ պարտատոմսի սեփականատերը չկարողանա իր ուզած պահին վաճառել պարտատոմսը կամ ստիպված լինի այն վաճառել ցածր գնով, կրելով վնասներ: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով Կազմակերպությունը նախատեսում է ապահովել թողարկվող պարտատոմսերի համար շուկա ստեղծողի գործառույթների իրականացում, այդ դեպքում ներդրողը ցանկացած պահին կկարողանա վաճառել իր պարտատոմսերը, բայց դա չի երաշխավորում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից շահավետ գնով վաճառք: Համաձայն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՄԱ» ԲԲԸ «Շուկա ստեղծողի կանոնների»՝ Կորպորատիվ պարտատոմսերի յուրաքանչյուր դասի /տրանշի/ համար գնման և/կամ վաճառքի հայտում նշվող նվազագույն գնանշման ծավալը սահմանվում է մեկ արժեթղթի ճշտությամբ՝ տվյալ դասի



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

/տրանշի/ թողարկված պարտատոմսերի քանակի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Վարկային/դեֆոլտի ռիսկը՝ ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները մյուս կողմի նկատմամբ:

Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս (ապահովված պարտատոմսերի դեպքում ավելի քիչ) իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերը իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժույթային ռիսկը՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում վնաս կրելու հավանականությունն է, որը կարող է առաջանալ փոխարժեքի տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Թողարկողի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա:

Արտարժույթի ռիսկը առաջանում է ազգային դրամի փոխարժեքի տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի պարտատոմսերից ստացված եկամուտների վրա, երբ ներդրողը պարտատոմսից ստացված եկամուտը գնահատում է ՀՀ դրամով (օրինակ՝ ներդրում կատարելու համար ներդրողը ՀՀ դրամը փոխարկել է արտարժույթի և պարտատոմսի մարումից հետո ստացված արտարժույթը փոխարկում է ՀՀ դրամի): Մասնավորապես, ազգային արժույթի արժեվորման դեպքում, պարտատոմսի մարումից ստացված գումարները (ներառյալ տոկոսները) փոխարկելու դեպքում, ՀՀ դրամով հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից քիչ (բացասական) լինել::

Տոկոսադրույքի ռիսկը՝ Տոկոսադրույքի ռիսկը առաջանում է շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով՝ տոկոսադրույքների աճի դեպքում պարտատոմսերի գինը նվազում է, ինչը կարող է հանգեցնել նրան, որ ներդրողը, մինչև մարումը պարտատոմսը վաճառելու դեպքում կարող է կրել վնասներ, կամ չստանալ նախատեսված եկամուտը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը՝ որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

9. Հիմնական տեղեկատվություն

Կազմակերպության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը: Ընդ որում, պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման հետևանքով մոտավոր կանխատեսվող գումարները՝ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 4.000.000 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի թողարկման դեպքում՝ 400.000.000 միլիոն ՀՀ դրամը նախատեսվում է բաշխել հավասարապես կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

10. Տեղեկատվություն Թողարկվող պարտատոմսերի մասին

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով թողարկվող անվանական, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ **Կենտրոնական դեպոզիտարիա**) կողմից:

	Առաջին Տրանշ	Երկրորդ տրանշ
Պարտատոմսերի տեսակը	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	
Պարտատոմսի ձևը	Ոչ փաստաթղթային	
Պարտատոմսի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի	
Արժեթղթերի Միջազգային Տարբերակիչ Ծածկագիր	AMFSCRB23ER3	AMFSCRB24ER1
Պարտատոմսերի թողարկման արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տաս հազար) ՀՀ դրամ	100 (հարյուր) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը	40,000 (քառասուն հազար) հատ	40,000 (քառասուն հազար) հատ
Պարտատոմսերի թողարկման ծավալը`	400,000,000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ	4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար
Պարտատոմսի գնի հաշվարկման բանաձև	<p>Պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով.</p> $DP = \frac{C}{f} \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{P}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>որտեղ`</p> <p>DP- Պարտատոմսի գինն է,</p> <p>DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,</p> <p>DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,</p> <p>P – պարտատոմսի անվանական արժեքը,</p> <p>f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,</p> <p>N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը</p> <p>C- տարեկան արժեկտրոնի գումարը.</p> <p>y- մինչև մարում եկամտաբերություն</p>	



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Արժեկտրոնային տոկոսադրույք	Տարեկան 10% (տասը)	Տարեկան 6.5% (վեց ամբողջ հինգ տասնորդական)
Արժեկտրոնի գումար	500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ մեկ հատ պարտատոմսի դիմաց: Վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով:	3.25 (երեք ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) ԱՄՆ դոլար մեկ հատ պարտատոմսի դիմաց: Վճարումն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով, հաշվարկված վճարման իրականացման օրվա համար գործող ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով:
Արժեկտրոնների կուտակման մեթոդը	Փաստացի/Փաստացի	
Արժեկտրոնի արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար, որը ենթակա է վճարման ՀՀ դրամով, հաշվարկված վճարման իրականացման օրվա համար գործող ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով
Արժեկտրոնների վճարման ամսաթիվը	Արժեկտրոնների հաշվարկման և վճարման օր է հանդիսանում պարտատոմսերի տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրերը: Եթե արժեկտրոնային եկամտի վճարման օրը լինի ոչ աշխատանքային օր, ապա վճարումը կկատարվի հաջորդող աշխատանքային օրը: Պարտատոմսերի արժեկտրոնների մարման և վճարման ամսաթվերը նույնն են: Կազմակերպության և/կամ տեղաբաշխողի ինտերնետային կայքերում՝ www.fastcredit.am , www.armswissbank.am տեղաբաշխումից առաջ լրացուցիչ կհրապարակվի նաև տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների	



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

	վճարման, ինչպես նաև պարտատոմսերի մարման ժամանակացույցը հստակ ամսաթվերով:
Արժեկտրոն ստացողները	Արժեկտրոնների վճարումներն և պարտատոմսերի մարման իրականացում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Կազմակերպությունը մարման օրը համապատասխան գումարները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի՝ համապատասխան բանկային հաշիվներին (ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով,) (այսուհետ՝ բանկային հաշիվ): ԱՄՆ դոլարով և իրականացվող վճարումները /փոխանցումները/ ներդրողի՝ ՀՀ տարածքից դուրս գործող Բանկային հաշվեհամարներին փոխանցվելու պարագայում, միջազգային փոխանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է տվյալ Ներդրողը (վերջնական շահառուն)::
Պարտատոմսեր թողարկման տեղաբաշխման ամսաթվերը	և Թողարկողը Առաջին և Երկրորդ տրանշերով տեղաբաշխումը իրականացնելու է նույն օրը: Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը տեղի կունենա ՀՀ ԿԲ-ի կողմից պարտատոմսերի ազդագրի գրանցումից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողի Վարչության որոշմամբ: Տեղաբաշխման և թողարկման հստակ օրվա մասին տեղեկատվությունը կիրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ քան 3 (երեք) աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.fastcredit.am և www.armswissbank.am : Թողարկման և տեղաբաշխման օրերը համընկնում են:
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը	36 (երեսունվեց) ամիս
Պարտատոմսերի մարման ամսաթիվ	Պարտատոմսերի մարման օրը տեղաբաշխման օրվան հաջորդող օրվանից հետո 36-րդ ամսվա համապատասխան օրն է: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա մարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Պարտատոմսերի մարման արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Մեկ պարտատոմսի մարման արժեքը	10,000 (տաս հազար) ՀՀ դրամ	100 (հարյուր) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի շրջանառության ձևը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո՝ բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով	
Տեղաբաշխող	Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվելու են մասնագիտացված տեղաբաշխողի՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից՝ համաձայն կողմերի միջև 14.01.2020 թվականին կնքված՝ Պարտատոմսեր չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին պայմանագրի	
Տեղաբաշխման ձևը	Չերաշխավորված	
Տեղաբաշխման գործընթացը	36,000 (երեսունվեց հազար) հատ պարտատոմսերը «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:	36,000 (երեսունվեց հազար) հատ պարտատոմսերը «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

	4,000 (չորս հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերելու Շուկա ստեղծողը աճուրդի ընթացքում ձևավորված միջին կշռված գնով:	4,000 (չորս հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերելու Շուկա ստեղծողը աճուրդի ընթացքում ձևավորված միջին կշռված գնով:
Առևտրին թույլատրումը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում (հնարավորինս սեղմ ժամկետներում) Թողարկողը դիմելու է «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ տեղաբաշխված արժեթղթերը կարգավորվող շուկայում ցուցակելու/առևտրին թույլատրելու համար: Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պարտատոմսերի ցուցակումից/առևտրին թույլատրումից հետո պարտատոմսերով գործարքները կարող են իրականացվել միայն «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ հարթակում (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի):	
Շուկա ստեղծող	Թողարկողը նախատեսում է կնքելու համապատասխան պայմանագիր «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ՝ Կազմակերպության պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով:	Թողարկողը կնքելու է համապատասխան պայմանագիր «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ՝ Կազմակերպության պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով:
Պարտատոմսերի առաջարկի և ազատ շրջանառելիության սահմանափակումներ	Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ պարտատոմսերի ձեռքբերման քանակի, ազատ շրջանառելիության հետ կապված որևէ սահմանափակումներ չեն սահմանվել՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի: Մասնավորապես, կարգավորվող շուկայում ցուցակումից/առևտրին թույլատրումից հետո տվյալ շուկայից դուրս առևտուրը արգելվում է:	
Տեղաբաշխման սահմանափակումներ	Չկան	

Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Կազմակերպության առաջարկվող պարտատոմսերի մարումների և Կազմակերպության կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Կազմակերպության սնանկության դեպքում Կազմակերպության գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ:

Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ սույն բաժնում՝ **Օրենք**) 31-րդ հոդվածով սահմանված կարգով: Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները՝ կբավարարվեն Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ հետևյալ հերթականությամբ.

Բանկի¹ պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

1. ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից Օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ԿԲ խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,
2. այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,
3. ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 10 միլիոն դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ, իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է կյանքի ապահովագրություն, և ոչ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրություն,

¹Օրենքի իմաստով «բանկը» ներառում է բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ, ներդրումային ֆոնդի կառավարիչներ և ապահովագրական ընկերություններ, եթե «բանկ» բառի օգտագործման կոնկրետ դեպքից չի բխում, որ խոսքը միայն բանկի մասին է:



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

4. բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,
5. պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.
6. ստորադաս փոխառություններից բխող պահանջները,
7. բանկի մասնակիցների պահանջները:

Տվյալ ազդագրով տեղաբաշխված պարտատոմսերի դիմաց պահանջները բավարվում են՝ «4» ենթակետով սահմանված հերթում: Բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության «3», «4» և «6» ենթակետերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում բանկի մասնակիցները և բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են՝ «7» ենթակետով սահմանված հերթում:

«3» ենթակետով սահմանված անձի՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 10 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 10 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է՝ «3» ենթակետով սահմանված հերթում, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ «4» ենթակետով սահմանված հերթում:

Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Միևնույն հերթի պարտատերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:

Եթե լուծարային միջոցները չեն բավարարում որևէ հերթի բոլոր պարտատերերի պահանջներն ամբողջությամբ, ապա դրանք բավարարվում են համամասնորեն կամ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է՝ հիմք ընդունելով պարտավորությունների չափի մեծությունը՝ փոքրից դեպի ավելի մեծ առաջնահերթությամբ: Սույն մասով սահմանված պարտավորությունների բավարարման սկզբունքը հաստատում է դատարանը ԿԲ-ի միջնորդությամբ՝ միջնորդությունը ստանալու պահից 5-օրյա ժամկետում՝ հաշվի առնելով այն, թե որ սկզբունքի կիրառման դեպքում հնարավոր կլինի բավարարել առավել մեծ քանակությամբ պարտատերերի պահանջները: Դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Տեղեկություններ պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքների վերաբերյալ

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

- Ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը,



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

- իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ,
- թողարկման օրվանից հաշված կիսամյակային պարբերությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
- պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
- Կազմակերպության կողմից պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը,
- Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք,
- օգտվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՄԲ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորներից որևէ մեկում ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման նպատակով:

Պարտատոմսերի առևտին թույլատրումից հետո Կազմակերպության պարտատոմսերը չեն կարող գնվել և վաճառվել կարգավորվող շուկայից դուրս:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիան՝ հաշվի օպերատորների միջոցով:



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Կազմակերպության անվանական պարտատոմսերի թողարկման մասին Կազմակերպության խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

Արժեկտրոնային եկամուտի, ինչպես նաև պարտատոմսի մարման գումարի վճարումները կատարվելու են Կենտրոնական դեպոզիտարիայից ստացված սեփականատերերի ցուցակում նշված սեփականատերերի բանկային հաշիվներին:

Պարտատոմսերի արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Պարտատոմսերի արժեկտրոնների տարեկան տոկոսադրույքը Կազմակերպության Խորհրդի կողմից սահմանվել է 6.5%՝ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար, և 10%՝ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար: Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը պարտատոմսերի տեղաբաշխման օրն է, որը նաև հանդիսանում է թողարկման օր, որը ենթակա է որոշման Թողարկողի Վարչության կողմից և ենթակա է հրապարակման Թողարկողի www.fastcredit.am և տեղաբաշխողի www.armswissbank.am ինտերնետային կայք էջերում, Պարտատոմսերի տեղաբաշխումն օրվանից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

Արժեկտրոնային եկամուտների վճարումը Թողարկողի կողմից կատարվելու է արժեկտրոնի հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24:00-ի դրությամբ Կենտրոնական դեպոզիտարիայից ստացված սեփականատերերի ցուցակում ներառված անձանց՝ փոխանցելով այդ ցուցակում նշված համապատասխան բանկային հաշիվներին:

Կենտրոնական դեպոզիտարիայից ստացված սեփականատերերի ցուցակում նշված սեփականատիրոջ հաշվին արժեկտրոնային եկամուտների վճարման կամ մարման գումարի փոխանցման անհնարինության դեպքում Կազմակերպությունը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցելու է նոտարի դեպոզիտ մինչև սեփականատիրոջ կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը, ընդ որում, նոտարի դեպոզիտի ծառայության գումարը վճարվում/հատուցվում է սեփականատիրոջ կողմից:

Պարտատոմսերի մարման ժամկետը

Պարտատոմսերի մարման օրը թողարկման օրվան հաջորդող 36-րդ ամսվա համապատասխան օրն է: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա մարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը Պարտատոմսերը մարվելու են անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ: Մարումն իրականացվելու է պարտատոմսերի անվանական արժեքով, ընդ որում, ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերը մարվելու են ՀՀ դրամով, իսկ ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերը մարվելու են ԱՄՆ դոլարով:



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Կազմակերպության պարտատոմսեր թողարկելու որոշման համառոտ բովանդակություն

Կազմակերպության անվանական պարտատոմսերը թողարկվելու են Կազմակերպության Խորհրդի 2019թ. դեկտեմբերի 10-ի «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից պարտատոմսերի թողարկումը, տեղաբաշխումը, տեղաբաշխման և շուկա ստեղծողի պայմանագրի կնքումը հաստատելու վերաբերյալ թիվ 19/12/10-01 որոշման հիման վրա, որոնց հիմնական պայմաններն են.

400,000,000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ և 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար թողարկման ընդհանուր անվանական ծավալով, արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ, մեկ պարտատոմսի անվանական արժեքը սահմանվել է համապատասխանաբար 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ և 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար,

պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը սահմանվել է համապատասխանաբար 10 (տասը) տոկոս՝ ՀՀ դրամով պարտատոմսերի համար և 6.5 (վեց ամբողջ հինգ տասնորդական) տոկոս՝ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի համար, միաժամանակ սահմանել, որ պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:

Կազմակերպության Խորհրդի որոշմամբ սահմանվել է, որ Կազմակերպության կողմից պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում:

Տեղաբաշխվող պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Ընդհանուր առմամբ, պարտատոմսերից եկամուտ ստացվում է հետևյալ տեսքով.

- Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոս),
- Կապիտալի հավելած (ձեռք բերումից հետո պարտատոմսի գնի աճ, իսկ կապիտալի հավելածը հաշվարկվում է, որպես մինչև մարումը վաճառքի և ձեռք բերման գնի դրական տարբերություն):

Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

- Եկամտային հարկ
- Շահութահարկ



ԱԶԴԱԳԻՐ

«Ճաստ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Շահութահարկ վճարող են համարվում ՀՀ տարածքում գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքով /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 104/ սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 110/ դրական տարբերությունն է: Ներկայումս շահութահարկի դրույքը կազմում է հարկվող շահույթի 18%: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի (տոկոսներ, կապիտալի հավելած) համար կազմում է 10%: Բանկի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Բանկը հանդիսանում է հարկային գործակալ:

Եկամտային հարկ վճարող են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձիք: Ռեզիդենտությունը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ: Հարկվող եկամուտը հաշվարկվում է, որպես ֆիզիկական անձի՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված համախառն եկամտի /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 141/ և սահմանված նվազեցումների /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 147/ դրական տարբերություն: Ֆիզիկական անձանց համար պարտատոմսերից ստացված միայն տոկոսային եկամուտն է ենթակա հարկման, իսկ հարկման դրույքաչափը ներկայումս սահմանված է 10%:

Թողարկվող պարտատոմսերում ներդրում իրականացնելու ցանկություն հայտնող անձինք պետք է հաշվի առնեն նաև 24/01/2020թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունված օրենքը, համաձայն որի փոփոխություններ են մտցվել ՀՀ հարկային օրենսգրքում, մասնավորապես՝

- 1.1 Լրամշակվել է ՀՀ հարկային օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում նաև ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը, բացառությամբ բանկերի կողմից թողարկված այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը փոքր է 2 տարուց:
- 1.2 1.1 կետով սահմանված արժեթղթեր ձեռք բերելու դեպքում ֆիզիկական անձանց՝ պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամուտը **հարկման ենթակա չէ:**
- 1.3 Լրամշակվել է նաև ՀՀ հարկային օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝
 - ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ինչպես նաև տվյալ բաժնետոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով
 - ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:



ԱԶԴԱԳԻՐ

«Տասը Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Վերը նշված փոփոխությունները վերաբերում են ՀՀ ֆոնդային բորսայի՝ բաժնետոմսերի և պարտատոմսերի հիմնական ու երկրորդային ցուցակներում ընդգրկված արժեթղթերին և ուժի մեջ են մտել **2020թ. մարտի 1-ից** և տարածվում են այն արժեթղթերի (դրանց դասերի) վրա, որոնք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ քան **2024 թվականի դեկտեմբերի 31-ը**:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թողարկողը Թողարկվող պարտատոմսերի մասով Ազդագրում սահմանված ժամկետներում նախաձեռնելու է ցուցակման գործընթաց, Բորսայի կողմից դրական եզրակացության դեպքում՝ Թողարկվող պարտատոմսերի վրա կտարածվեն 2020թ. մարտի մեկից ուժի մեջ մտած փոփոխությունները:

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ: ՉՆԱՅԱԾ ԱՅՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԻ, ՈՐ ԹՈՂԱՐԿՈՂԸ, ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՎ ԻՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՋԱՆՔԵՐԸ և ԱՌԿԱ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ՍՈՒՅՆ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ԱՐԺԵԹՂԹԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ, ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ ԹՈՂԱՐԿՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՅՏԱՐԱՐԵԼ, ՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐՆ ԱՅՆ ՉՊԵՏՔ Է ՀԱՄԱՐԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԱՆԵԼԻՍ ՀԻՄՆՎԵՆ ՄԻԱՅՆ ԱՅՍ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆՅՈՒԹԻ ՎՐԱ: ԹՈՂԱՐԿՈՂԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ, ՈՐ ՆԵՐԴՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՊԱՀԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾԻՆ, ԿԱՄ ՀԱՄԱՐԺԵՔՈՐԵՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ՑԱՆԿԱՅԱԾ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ ՕԳՏՎԵԼ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ: ԹՈՂԱՐԿՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՅՏԱՐԱՐԵԼ, ՈՐ ՍՈՒՅՆՈՎ ՋԵՐԾ Է ՄՆՈՒՄ ՑԱՆԿԱՅԱԾ ՆԵՐԴՐՈՂԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԿՄԱՆ ՄԵՒԱՆԻՉՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ:

11. Առաջարկի ժամկետները և պայմանները

Առաջարկի պայմանները, ժամանակացույցը և առաջարկից օգտվելու համար անհրաժեշտ գործողությունները

Ազդագրի հիման վրա տեղաբաշխվող պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը կազմում է 400,000,000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ և 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար: Մեկ պարտատոմսի գինը կազմում է համապատասխանաբար 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ և 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար: Ընդ որում ԱՄՆ դոլարով թողարկվող առնվազն 40,000 (քառասուն հազար) հատ պարտատոմսերից 4,000 (չորս հազար) հատ պարտատոմսերը և ՀՀ դրամով թողարկվող



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

40,000 (քառասուն հազար) հատ պարտատոմսերից 4,000 (չորս հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերելու Շուկա ստեղծողը՝ աճուրդի ընթացքում ձևավորված միջին կշռված գնով:

Պարտատոմսերի տեղաբաշխման օրը, որը հանդիսանում է նաև թողարկման օր, ենթակա է որոշման Թողարկողի Վարչության կողմից և ենթակա է հրապարակման Թողարկողի www.fastcredit.am և տեղաբաշխողի www.armswissbank.am ինտերնետային կայք էջերում, Պարտատոմսերի տեղաբաշխումն օրվանից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին **ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:**

Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդը իրականացվելու է դրամական միջոցների և պարտատոմսերի նախնական դեպոնացմամբ՝ Կենտրոնական դեպոզիտարիաի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված կարգով: Տեղաբաշխման ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված դրամական միջոցների սահմաններում, իսկ տեղաբաշխողը՝ նախապես դեպոնացված արժեթղթերի սահմաններում: Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում գնորդները կարող են կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումներ և ապադեպոնացումներ՝ Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» և Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված ընթացակարգերի համաձայն:

Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական կայքում՝ www.amx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն անհրաժեշտ է, որպեսզի ուսումնասիրեն Բորսայի տարբեր անդամների կողմից աճաջարկվող պայմանները՝ իրենց համար օպտիմալ տարբերակ գտնելու և իրենց կողմից աճուրդին մասնակցելու գործընթացի վերաբերյալ առավել սպառիչ և մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

Գնորդները պարտատոմսերի ձեռք բերման նպատակով գնման մրցակցային հայտեր են ներկայացնում տեղաբաշխման համակարգ տեղաբաշխման օրվա ժամը 11:00-ից մինչև 13:30-ը: Գնորդներն իրավունք ունեն փոփոխել կամ հետ կանչել իրենց կողմից ներկայացված հայտերը և նոր հայտեր մուտքագրել մինչև 13:30-ը: Տեղաբաշխողի կողմից աճուրդի անցկացումը, որի ընթացքում տեղի է ունենում արժեթղթերով առուվաճառքի գործարքների կնքման գործընթացը տևում է մինչև տեղաբաշխման օրվա ժամը 15:00-ն: Գնման մրցակցային հայտով գործարքները կնքվում են այն գներով, որոնք նշված են գնման հայտերում՝ ըստ գնի նվազման



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

հաջորդականության: Միննույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված մրցակցային հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի համար սահմանափակումներ չկա: Գնորդը կարող է տեսնել միայն իր կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը: Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է չեղյալ համարվել Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ով և «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված ընթացակարգերով և դեպքերում:

Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկ իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում:

Տեղաբաշխման ավարտից հետո Բորսան «Տեղեկատվության բացահայտման կանոններ»-ին համապատասխան կազմակերպում է տեղաբաշխման արդյունքների հրապարակումն իր պաշտոնական կայքում:

Թողարկողն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.fastcredit.am տեղաբաշխման ավարտից հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է աճուրդի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկայացնելով առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված գինը (եկամտաբերությունը) և այլն:

Թողարկողի պարտատոմսերի դիմաց սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորի կողմից հաստատված կարգով և ժամկետներում:

Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին:

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո, մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը Բորսայի իրավասու ստորաբաժանումը Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ին համապատասխան ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականները և ուղարկում Բորսայի համապատասխան անդամին: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն



ԱԶԴԱԳԻՐ

«Ճաստ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

իրենց հայտերի բավարարման մասին տեղեկանում են Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին:

Առաջարկի գինը

Տեղաբաշխման համակարգում գրանցվելուց հետո տեղաբաշխման մասնակիցները տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից համակարգ են մուտքագրում պարտատոմսերի գնման հայտերը: **Հայտերի բավարարման կտրման նվազագույն գինը առաջին տրանշի դեպքում սահմանվել է 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ, իսկ երկրորդ տրանշի դեպքում 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար մեկ պարտատոմսի դիմաց, որից ցածր գնով ներկայացված հայտերը չեն բավարարվի: Կտրման գնի վերաբերյալ տեղեկատվությունը կներառվի նաև պարտատոմսերի տեղաբաշխման վերաբերյալ հայտարարության մեջ:**

Բորսայի անդամ հանդիսացող ներդրողներից տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվում են միջնորդավճարներ Բորսայի՝ «Սակագների մասին կանոններ»-ով սահմանված կարգով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց կողմից ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվող միջնորդավճարների մասին կարող են տեղեկանալ Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին:

Տեղաբաշխումը

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվելու են մասնագիտացված տեղաբաշխողի՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից՝ համաձայն կողմերի միջև 14.01.2020 թվականի կնքված՝ «Պարտատոմսեր չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին պայմանագրի»:

Տեղաբաշխողի հասցեն է՝ Վազգեն Սարգսյան 10, 0010 Երևան, Հայաստան, հեռ.՝ (+374 60) 757-000, (+374 11) 757-000, էլ. փոստ՝ info@armswissbank.am, պաշտոնական ինտերնետային կայք՝ www.armswissbank.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (երաշխավորված կամ չերաշխավորված), պարտատոմսերի ծավալը, քանակը, պարտատոմսերի տեղաբաշխման կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի իրավունքներն ու պարտականությունները, Տեղաբաշխողին վճարման ենթակա գումարի չափն ու կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի պատասխանատվությունը սահմանվել են վերջիններիս միջև կնքված պայմանագրով և դրա հիման վրա ներկայացվող հանձնարարականներով:

Տեղաբաշխման միջնորդավճարը կազմում է 1 տոկոս /առանց ԱԱՀ/ տեղաբաշխված ընդհանուր ծավալից /հավաքագրված ընդհանուր գումար/:



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.amx.am

Տեղաբաշխումից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի առուվաճառքի գործարք կնքելու համար ներդրողները պետք է դիմեն կամ ներդրումային ընկերություններին, կամ բրոքերային ծառայություն մատուցող բանկերին:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք կամ նրանց անվանատերերը պետք է ունենան արժեթղթերի հաշիվներ, որոնք բացվում և սպասարկվում են Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.cda.am:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը, պարտավոր է նաև ցանկացած բանկում իր անվամբ բացել դոլարային և/կամ դրամային բանկային հաշիվ՝ նման հաշիվներ չունենալու դեպքում:

12. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Ազդագիրը ԿԲ-ի կողմից գրանցվելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո՝ կարգավորվող շուկայում պարտատոմսերը ցուցակման/առևտրին թույլատրման նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետներում դիմելու է Բորսային: Մույն կետում նշված ցուցակման/առևտրին թույլատրման հայցը կարող է նաև մերժվել Բորսայի կողմից: Այս դեպքում տեղաբաշխումը կհամարվի չեղյալ, իսկ վերադարձման ենթակա գումարները՝ տեղաբաշխումը չեղյալ համարելու որոշումն ընդունելու օրվանից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողի կողմից ենթակա են վերադարձման, ինչն իրականացվելու է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ: Տեղաբաշխումը չեղյալ համարելու որոշման կայացման դեպքում տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և տեղաբաշխումը չեղյալ համարելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակահատվածի համար:

Թողարկողը նախատեսում է կնքել համապատասխան պայմանագիր Շուկա ստեղծողի հետ՝ Կազմակերպության պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Այս նպատակով Շուկա ստեղծողը ձեռք է բերելու Առաջին և Երկրորդ տրանշերով թողարկվող պարտատոմսերը աճուրդի ընթացքում ձևավորված միջին գնով՝ յուրաքանչյուր տրանշի թողարկման ծավալի առնվազն 10 տոկոսի չափով:



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և Շուկա ստեղծողի կանոններով:

13. Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման և մշակման համար, որը վերաբերում է պարտատոմսերի թողարկման կարգին, որպես խորհրդատու Թողարկողը օգտվել է Տեղաբաշխողի ծառայություններից: Ներկայացված տեղեկատվությունն անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

Կազմակերպությանը և Կազմակերպության կողմից տեղաբաշխված պարտատոմսերին վարկանշող կազմակերպությունների կողմից որևէ վարկանիշ չի շնորհվել:



ԱԶԴԱԳԻՐ

«Ճասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Անկախ աուդիտորները

Կազմակերպության 2017, 2018 և 2019 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է Աուդիտորական կազմակերպությունը, որը հանդիսանում է «Grant Thornton International Ltd»-ի անդամ:

Աուդիտորական կազմակերպությունը գրանցվել է ՀՀ-ում 1990 թվականին:

Աուդիտորական կազմակերպության հասցեն է՝ ՀՀ ք. Երևան Վաղարշյան 8/1, հեռ.՝ +374 10 26-09-64, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.grantthornton.am:

15. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա: Ելնելով նշվածից՝ Թողարկողը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը.

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա: Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Կազմակերպության վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Կազմակերպության հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Կազմակերպության գործունեության վրա: Դա կարտահայտվի Կազմակերպության կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Կազմակերպությունում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում է տնտեսության վիճակի հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների

վերլուծություններ: Նման վերլուծությունները և սցենարներն անընդհատ քննարկվում են Կազմակերպության Ռազմավարական պլանավորման և բյուջետավորման վարչության կողմից: Նման հաճախականությունը հնարավորություն է տալիս արագ արձագանքել շուկայում սպասվող կամ տեղի ունեցող փոփոխություններին և մշակել գործունեության պլան՝ փոփոխված իրավիճակին համապատասխան:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպությունների ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա: Կազմակերպությունը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում: ՀՀ -ում վարկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են նաև արտերկրի վարկային կազմակերպությունների դուստր կառույցները, որոնք ունեն հզոր ֆինանսական կարողություններ և անկայուն իրավիճակներում ֆինանսական ներարկումներ ստանալու մեծ հնարավորություններ, առաջավոր և փորձարկված տեխնոլոգիաներ, որի շնորհիվ նրանք ունեն պոտենցիալ առավելություններ ստանալու հավակնություն: Կազմակերպությունը, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու առումով, հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է վարկավորման ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող սպասարկումների որակը և մատչելիությունը:

Կադրերի հոսունության ռիսկ, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման ռեպրում Կազմակերպության վնասներ կրելու հավանականությունը: Բարձրորակ մասնագետների առկայությունը Կազմակերպության աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի պատճառով՝ առաջանում է նաև կադրերի հոսունության ռիսկ, որի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով՝ Կազմակերպության ղեկավարությունը նպատակային և հետևողական միջոցառումներ է իրականացնում աշխատողների որակավորման բարձրացման, նյութական խրախուսման և սոցիալական



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների

ապահովման խնդիրների բարելավման ուղղությամբ: Ձևավորված պրակտիկայի համաձայն՝ տարին մեկ անգամ նախատեսվում է իրականացնել աշխատավարձերի վերանայում: Կազմակերպության Խորհրդի կողմից հաստատվել է աշխատակիցների վարձատրության հաշվարկման և վճարման կարգը յուրաքանչյուր ստորաբաժանման գծով՝ լրավճար, պարզավճար, հաստիքավճար: Կազմակերպվում են ներքին վերապատրաստումներ: Յուրաքանչյուր ստորաբաժանումում ունի իր վերապատրաստման տեղական կետը: Կազմակերպվում են անզերենի դասընթացներ՝ անվճար:

Վարկային ռիսկ, որին Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք Կազմակերպությանը կարող են կորուստներ պատճառել: Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Թողարկողը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը:

Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, վարկային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսավորման կազմակերպությունների ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Կազմակերպությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով: Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Կազմակերպության Վարկային վարչության և Խորհրդի կողմից: Առօրյա ռիսկերի կառավարումն իրականացվում է լիազորված ստորաբաժանումների կողմից:

Կազմակերպության վարկային քաղաքականությունը սահմանված է Վարկային ձեռնարկում, որտեղ հստակ սահմանված են բոլոր առնչվող ընթացակարգերը և պահանջները՝ համապատասխան վերահսկողական մեխանիզմների հետ մեկտեղ, ներառյալ վարկի տրամադրումը, չվճարված վարկերի մոնիտորինգը, ժամկետանց վարկերի հետ աշխատելու գործընթացը և այլն: Վարկային կոմիտեն վերլուծող մարմին է, որը պատասխանատու է վարկային հայտերում ամփոփված տեղեկատվությունը վերլուծելու և վարկային ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար: Վարկային կոմիտեն Կազմակերպության ներսում անկախ մարմին է, որը լիազորված է կայացնելու վերջնական որոշում վարկային հայտը ֆինանսավորելու կամ մերժելու վերաբերյալ:

Կազմակերպությունը բաշխում է վարկային ռիսկի մակարդակը՝ սահմանափակելով մեկ վարկառուի գծով կամ վարկառուների խմբի գծով: Վարկային ռիսկի սահմանաչափերն ըստ վարկառուի և ըստ վարկատեսակի հաստատում է Խորհուրդը և Կազմակերպության Գործադիր մարմինը: Փաստացի ռիսկերի համապատասխանությունը սահմանաչափերին հսկվում է օրական կտրվածքով՝ Կազմակերպության կողմից սահմանված վարկային սահմանաչափերի և



ԱԶԴԱԳԻՐ
«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

վարկունակության ուղեցույցների խախտումը բացառելու համար: Ըստ նպատակահարմարության և վարկերի մեծ մասի դեպքերում, Կազմակերպությունն ընդունում է գրավ կամ անձնական երաշխավորություն: Վարկերի զգալի մասն անհատական են, որտեղ որպես ապահովության միջոց հանդես են գալիս երաշխավորությունները: Այսպիսի ռիսկերը մոնիթորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների: Վերանայված պայմաններով վարկերն իրենցից ներկայացնում են վարկեր, որոնք վերակառուցվել են՝ վարկառուի ֆինանսական դրության վատթարացման արդյունքում: Կազմակերպությունը կատարում է զիջումներ, որոնք այլապես չէր դիտարկվի:

Կազմակերպության վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է անհատական ռիսկերից, ինչպես նաև ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին՝ նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը: Կազմակերպությունը սկզբունքորեն կիրառում է ռիսկերի կառավարման միևնույն քաղաքականությունը հաշվեկշռային և հետ հաշվեկշռային ռիսկերի համար: Կազմակերպությունում մշակվել է վարկառուի գնահատման կենտրոնացված մոտեցում՝ փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությունները գնահատելու և դրանց վարկավորման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով: Այդ մոտեցումը ենթադրում է ստանդարտ վարկատեսակների հաստատում գլխամասային գրասենյակի կողմից՝ ելնելով վարկառուների արդյունավետության հիմնական ցուցանիշներից՝ վարկային պատմությունից, ֆինանսական վիճակից, վարկառուների հետ հարաբերություններից, կառավարման որակից, նպատակային օգտագործումից, գրավից և այլն:

Ստորև ներկայացվում է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	31.12.2019	31.12.2018	31.12.2017
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,015,248	1,784,782	1,389,657
Բանկերում տեղաբաշխված միջոցներ			
Հաճախորդներին տրամադրված վարկեր	34,962,879	27,621,788	22,641,666
Ընդամենը	36,978,127	29,406,570	24,031,323
Առևտրային և գյուղատնտեսական վարկեր			
Ժամկետանց պորտֆել	23,469	20,078	46,610



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Ոչ ժամկետանց	3,531,252	2,158,964	1,556,948
1-90 օր ժամկետանց	23,469	18,110	46,610
91-180 ժամկետանց		1,968	
181-270 ժամկետանց			
271 օր ու ավել ժամկետանց			
Ընամենը	3,554,721	2,179,042	1,603,558
Հիփոթեքային վարկեր			
Ժամկետանց պորտֆել	183,408	23,102	10,901
Ոչ ժամկետանց	4,494,747	4,140,262	2,779,926
1-90 օր ժամկետանց	114,382	8,080	10,265
91-180 ժամկետանց	65,109	14,571	
181-270 ժամկետանց	3,917	450	636
271 օր ու ավել ժամկետանց			
Ընամենը	4,678,155	4,163,364	2,790,827
Սպառողական վարկեր			
Ժամկետանց պորտֆել	3,363,118	3,653,673	3,154,282
Ոչ ժամկետանց	23,366,885	17,625,709	15,092,999
1-90 օր ժամկետանց	3,085,465	3,300,194	2,840,072
91-180 ժամկետանց	268,581	346,653	284,745
181-270 ժամկետանց	9,073	6,826	29,465
271 օր ու ավել ժամկետանց			
Ընամենը	26,730,003	21,279,382	18,247,281



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների

Այլ դադարեցված վարկեր			
Ժամկետանց պորտֆել	0	0	0
Ոչ ժամկետանց			
1-90 օր ժամկետանց			
91-180 ժամկետանց			
181-270 ժամկետանց			
271 օր ու ավել ժամկետանց			
Ընամենը	0	0	0
Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր, որից	3,569,996	3,696,852	3,211,793
ոսկու գրավով ապահովված	3,347,187	3,609,071	3,125,637
Ժամկետանց պորտֆել /առանց ոսկու ապահովվածությամբ	222,809	87,781	86,156
Ընդամենը վարկեր, որից	34,962,879	27,621,788	22,641,666
ոսկու գրավով ապահովված	24,104,705	21,583,194	17,826,863
Խնդրահարուց վարկեր/ Վարկային պորտֆել	10.21%	13.38%	14.19%

Իրացվելիության ռիսկ, որը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնասներ կրելու ռիսկը:

Կազմակերպության իրացվելիությունը գտնվում է տնօրինության ուշադրության կենտրոնում, որը վերահսկում է Կազմակերպության իրացվելիության ռիսկերը ժամկետայնության վերլուծության միջոցով: Կազմակերպության դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն երկարաժամկետ, կարճաժամկետ և միջնաժամկետ ժամկետային



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

փոխառություններ, ինչպես նաև դրամական միջոցների կարճաժամկետ ներգրավումներ ՀՀ բանկերից:

Ստորև ներկայացված է կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքը 2019թ. դեկտեմբերի 31 դրությամբ:

Հազ. ՀՀ դրամ

	Մարման ժամանակահատվածը							
	Ցպահանջ և մինչև 1ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1- 3 տարի	3 տարուց ավել	Անժամկետ	Ժամկետ անց	Ընդամենը
Ակտիվներ	2,383,029	403,820	2,778,855	24,650,763	4,656,281.9	1,289.40	3,575,153	38,449,192
Պարտավորություններ	375,827	2,271,300	5,964,269	2,694,708	17,350,244.6	-	-	28,656,348
Ակտիվների և պարտավորությունների կուտակային իրացվելիության տարբերություն (GAP)	2,007,202	(1,867,480)	(3,185,413)	21,956,055	(12,693,962.7)	1,289.40	3,575,153	9,792,844

Տոկոսադրույքի ռիսկ, որը ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, որն էլ իր հերթին կարող է ազդել Կազմակերպության զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Կազմակերպության ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև այն նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Կազմակերպությունը կառավարում է իրական արժեքով տոկոսադրույքի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով պոտենցիալ կորուստները, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից: Կազմակերպության ղեկավարությունն իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ֆինանսական գործունեության մոնիթորինգ, գնահատում է Կազմակերպության իրական արժեքով տոկոսադրույքի փոփոխությունների զգայունությունը և դրա ազդեցությունը Կազմակերպության շահութաբերության վրա: Զգայունության վերլուծություններն իրականացվում են՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ոչ ածանցյալ գործիքների գծով տոկոսադրույքի ռիսկը: Սողացող տոկոսադրույքով պարտավորությունների համար վերլուծությունները պատրաստվում



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների

են՝ ենթադրելով, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված պարտավորության գումարն այդպիսին է եղել ամբողջ տարվա ընթացքում:

Արտարժույթային ռիսկ, որը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Կազմակերպությունը կիրառում է արտարժույթային ռիսկի կառավարման հետևյալ սկզբունքները.

- Կազմակերպությունը ձգտում է միանգամից փակել արտարժույթային դիրքերը և զերծ մնալ սպեկուլյատիվ գործառնություններից:
- Կազմակերպությունն արտարժույթային շուկաներում չի բացում սպեկուլյատիվ դիրքեր: Ածանցյալ գործիքները կարող են օգտագործվել միայն հեջավորման նպատակով՝ փակելու դիրքը:
- Կազմակերպությունը ձգտում է համապատասխանեցնել ակտիվների և պարտավորությունների արժույթներն ինչպես գումարներով, այնպես էլ ժամկետներով՝ պաշտպանված լինելու համար փոխարժեքային տատանումներից:
- Կազմակերպությունը վերահսկում է արտարժույթային դիրքն օրական:

Կազմակերպության Գանձապետարանը վերահսկում է արտարժույթի ռիսկը՝ կառավարելով արժույթային բաց դիրքն ԱՄՆ դոլարի արժեզրկման և այլ մակրոտնտեսական ցուցանիշների գնահատումների հիման վրա, ինչը Կազմակերպությանը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել վնասներն ազգային արժույթի նկատմամբ փոխարժեքի զգալի տատանումներից:

Ստորև ներկայացված են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը ըստ արտարժույթի:

Հազ. ՀՀ դրամ

	31.12.2019	31.12.2018	31.12.2017
ԱՄՆ դոլար			
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	668,361.77	533,200.90	514,753.00
Բանկերում տեղաբաշխված միջոցներ, թղթակցային հաշիվներ	282,179.71	456,559.62	60,897.48
Հաճախորդներին տրամադրված վարկեր	7,909,960.00	6,362,609.00	4,272,815.00



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Ընդամենը ակտիվներ	8,860,501.48	7,352,369.52	4,848,465.48
Պարտավորություններ			
Վարկեր, փոխառություններ, պարտատոմսեր	9,773,411.00	7,183,782.00	4,944,460.00
Ընդամենը պարտավորություններ	9,773,469.00	7,183,782.00	4,944,460.00
Զուտ դիրք	(912,967.52)	168,587.52	(95,994.52)

Գործընկերոջ ռիսկ, որի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ գործընկերոջ գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ:

Կազմակերպությունը ձգտում է նվազեցնել գործընկերոջ ռիսկը՝

- սահմանափակելով գործընկերների ցանկը կառավարելի քանակով,
- կիրառելով գործընկերների հաստատման հիմնավոր գործընթաց մինչև ցանկացած նոր գործընկերոջ հետ որևէ գործառնության կնքումը,
- սահմանափակելով Կազմակերպության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ:

Գործառնական ռիսկ, որը այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառնությունները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Կազմակերպության հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգող հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Կազմակերպությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիթորինգի և դրանց հակազդման միջոցով:

Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

Կազմակերպվում են անգլերենի անվճար դասընթացներ: Կազմակերպությունը յուրաքանչյուր ստորաբաժանումում ունի վերապատրաստման պատասխանատու, ով կազմակերպում է վերապատրաստումներ տվյալ ստորաբաժանման համար: Կազմակերպությունն օգտվում է նաև ինստիտուցիոնալ վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների ծառայություններից: Գործում է Կազմակերպության Խորհրդի կողմից հաստատված վարձատրության հաշվարկման և վճարման կարգ, որը ըստ ստորաբաժանման, յուրաքանչյուր հաստիքի համար նախատեսում է լրավճար, պարզևավճար և հաստիքավճար: Ավելին, նախատեսվում է տարին մեկ անգամ աշխատավարձի վերանայում: Գիտակցելով վերը նշված ռիսկերը, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Կազմակերպությունը պատրաստ է իրականացնել այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով ապահովել ծրագրավորված ակտիվապասիվային և եկամտային ցուցանիշների կատարումը:

Պոտենցիալ ներդրողների կողմից Կազմակերպության իրացվելիության մասին գնահատական տալու համար անհրաժեշտ տեղեկատվություն կարող է հանդիսանալ նաև ունիվերսալ վարկային կազմակերպությունների գործունեության վերահսկման նպատակով ՀՀ ԿԲ կողմից սահմանված տնտեսական նորմատիվների մասով Կազմակերպության ցուցանիշների մակարդակը, որը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Նորմատիվի անվանումը	ՀՀ ԿԲ-ի սահմանած նորմատիվի նվազագույն սահմանաչափ	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2018թ.	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2019թ.	Նորմատիվի փաստացի մեծություն 29.02.2020թ.
Կանոնադրական կապիտալի նվազագույն չափը (մլն. դրամ)	150	3000	7000	7000
Ընդհանուր կապիտալի նվազագույն չափը (մլն. դրամ)	150	4,643.8	6,859.4	7,653.9
Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ)	10%	14.46%	18.14%	21.6%
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավել-լագույն չափը (Ն3 նորմատիվ)	25%	3.74%	19.34%	18.9%

16. Տեղեկատվություն Թողարկողի մասին

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն,
ռուսերեն՝ «Фаст Кредит Капитал» Универсальная Кредитная Организация Закрытое Акционерное Общество,
անգլերեն՝ “Fast Credit Capital” Universal Credit Organization Closed Joint Stock Company



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ,
ռուսերեն՝ «Фаст Кредит Капитал» УКО ЗАО,
անգլերեն՝ “Fast Credit Capital” UCO CJSC,

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

Ընկերությունը գրանցված է ԿԲ-ում, գրանցման համարը՝ 37

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Նորք- Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+ 374 10) 510 000,

էլ. փոստ՝ dealing@fcc.am

ինտերնետային կայք՝ www.fastcredit.am

Թողարկողի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն:

Թողարկողի կողմից գրանցված ապրանքային նշանը՝



Թողարկողի պատմությունը՝

Կազմակերպությունը գրանցվել է 2011թ. հոկտեմբերի 14-ին ԿԲ-ի կողմից N266 Ա որոշմամբ, թիվ 129 գրանցման վկայականով և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով ՀՀ օրենսդրության շրջանակներում:

Այն ստեղծվել է մանր և միջին ձեռնարկություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց վարկեր և փոխառություններ տրամադրելու նպատակով:

Կազմակերպությունը այժմ հանդիսանում է ՀՀ խոշորագույն և առաջատար վարկային կազմակերպություններից մեկը՝ ունենալով 130,000 մշտական ակտիվ



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

հաճախորդներ: Ներկայումս այն ունի 11 մասնաճյուղ Երևանում և 13 մասնաճյուղ՝ ՀՀ տարբեր մարզերում:

17. Բիզնեսի նկարագիրը

2019 թվականի արդյունքների վերլուծությունները ցույց են տալիս, որ Կազմակերպությունն որոշ ցուցանիշներով առաջատար դիրքեր է զբաղեցնում վարկային կազմակերպությունների մեջ:

Կազմակերպությունը աշխատում է շաբաթը 7 օր, օրը 24 ժամ աշխատանքային ռեժիմով, ինչը շատ հարմար է իր հաճախորդների համար: Որպես նորարարություն հարկ է նշել, որ Կազմակերպությունը աշխատում է իր սեփական FC Bank ծրագրով, ինչպես նաև ունի շատ հարմար հավելված հեռախոսների համար:

Հարկ է նշել, որ ոչ լուրճարդային վարկերը չունեն որևէ թաքնված վճարներ, իսկ անշարժ և շարժական գույքի գնահատման ծախսերը կազմակերպությունը վերցնում է իր վրա:

Հիմնական գործունեությունը

Թողարկողն իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և իր Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ:

Կազմակերպությունը կարող է իրավաբանական անձանցից, իր մասնակիցներից, անհատ ձեռնարկատերերից, ՀՀ-ից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ: Կազմակերպության գործունեության հիմնական ուղղվածությունը վարկերի տրամադրումն է, որոնք էլ ձգտում է հասանելի դարձնել տնտեսության տարբեր հատվածների, ինչպես նաև հասարակության լայն շրջանակների համար: Կազմակերպությունը, որպես հիմնական գործունեություն, ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրության շրջանակներում կարող է՝

ա) իրավաբանական անձանցից, իրենց մասնակիցներից, ՀՀ-ից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ,



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ինչպես նաև ՀՀ օրենքով չարգելված եղանակով ներգրավել փոխառություններ, այդ թվում հրապարակային օֆերտայի միջոցով,

գ) տրամադրել երաշխիքներ,

դ) թողարկել, գնել (գեղչել), վաճառել արժեթղթեր, կատարել նման այլ գործառնություններ,

ե) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

զ) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),

է) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և մետաղադրամ,

ը) գնել և վաճառել արտարժույթ, ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

թ) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժա) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

ժբ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

ժգ) ԿԲ-ի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

Կազմակերպության կողմից պլանավորվում է իրականացնել ծրագրային վարկերի տրամադրում: Վերջին տարվա ընթացքում Կազմակերպությունը առաջ է բերել երկու հատ նոր վարկային պրոդուկտ: Կազմակերպությունը փորձում է կիրառել ավտոմատացված համակարգեր, որը գործում է ոսկով ապահովված վարկերի դեպքում: 2011թ-ից ի վեր ունեցած բազայի վերլուծության հիման վրա մշակվում է սքորինգ (գնահատման) բազա:

Կազմակերպությունում իրականացվում է հաճախորդների գրադացիա և ըստ այդմ՝ համապատասխան ծառայությունների արտոնությունների սահմանում: Նախատեսվում է ընդլայնել ՓՄՁ պորտֆելը /առանց գրավի ապահովմամբ:

Հիմնական շուկաները



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների

ՀՀ ֆինանսական շուկայում կազմակերպությունը առանձնանում է միկրոֆինանսական ծառայությունների լայն մատուցմամբ, նպատակ հետապնդելով՝ նպաստելու միկրո, մանր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, հատկապես գյուղական վայրերում՝ վարկեր, փոխառություններ տրամադրելու և օրենսդրությամբ սահմանված այլ ծառայություններ մատուցելու միջոցով, ինչպես նաև սպառողական վարկավորման զարգացմանը: Կազմակերպությունը փորձում է հասանելի դարձնել ֆինանսական ծառայությունները հասարակության տարբեր խավերին, և նույնիսկ նրանց, ովքեր մինչ օրս հնարավորություն չեն ունեցել ստանալ այդ ծառայություններն այլ բանկերից և վարկային կազմակերպություններից:

Ընդհանուր համակարգում թողարկողը մասնավոր վարկային կազմակերպությունների միջև առաջատար դիրքեր է զբաղեցնում մի շարք ցուցանիշների համաձայն:

Թողարկողի դիրքն այլ վարկային կազմակերպությունների համեմատ 31.12.2019թ. դրությամբ հետևյալն է. 2

	Ակտիվներ	Վարկային ներդրումներ	Պարտավորություններ	Ընդհանուր կապիտալ	Թողարկված պարտատուներով ներգրավված միջոցներ	Զուտ շահույթ	Ակտիվների շահութաբերություն (ROA)	Կապիտալի շահութաբերություն (ROE)
Հազար ՀՀ դրամ	38,449,192	34,962,879	28,656,348	9,792,844	599,148	1,149,598	3.4%	15.9%
Տեղը շուկայում	1-ին տեղ	1-ին տեղ	1-րդ տեղ	4-րդ տեղ	3-րդ տեղ	1-ին տեղ	7-րդ տեղ	3-րդ տեղ

Աղյուսակից երևում է, որ թողարկողը հիմնական ֆինանսական ցուցանիշներով ամուր տեղ է զբաղեցնում առաջին հնգյակում, իսկ որոշ ցուցանիշներով նույնիսկ առաջին եռյակում:

Թողարկողի իրական դիրքը գնահատելու համար հաշվարկին չեն մասնակցել ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորում իրականացնող՝ «Ազգային հիփոթեքային ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» վարկային կազմակերպությունները, ինչպես նաև «Էքսպորտ ֆայնենս» վարկային կազմակերպությունը:

18. Թողարկողի կառուցվածքը

Կազմակերպությունը չի հանդիսանում ոչ մի ընկերության դուստր կամ կախյալ ընկերություն, ինչպես նաև չունի դուստր կամ կախյալ ընկերություն:

² Տեղը շուկայում դիրքորոշելիս հաշվի չեն առնվել Ազգային ֆիոթեքային ԿԿԿ ՓԲԸ, Բնակարան երիտասարդների ԿԿԿ ՓԲԸ, Էքսպորտ ֆայնենս ՈՒՎԿ ՓԲԸ ցուցանիշները:



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների

Հարկ է նշել, որ Կազմակերպության բաժնետերերն ունեն բաժնեմասեր հետևյալ կազմակերպություններում, յուրաքանչյուրը 50% (բացառությամբ հատուկ նշվածների):

Կազմակերպության անվանում

- «Բադալյան Եղբայրներ» ՍՊԸ / Badalyan Eghbairner LLC/
- Հին Նորք ՓԲԸ / Hin Norq CJSC/
- Գետառ Բիզնեսս Կենտրոն ՍՊԸ /Getar Business Centre/
- Հին Նորք Բիզնես Կենտրոն ՓԲԸ / Hin Norq Business Centre/
- Վահագն Բադալյան Բարեգործական Հիմնադրամ ՀԿ / Vahagn Badalyan Charitable Foundation NGO/
- Կիբերսպորտի Համահայկական Ֆեդերացիա ՀԿ / Panarmenian Cybersport Federation NGO/
- Կովկաս Ագրո ՍՊԸ / Kovkas Agro LLC)/ /Վահե Բադալյան 100%/
- Վբեթ ՍՊԸ / Vbet LLC/
- ԷֆՍԻ Կապիտալ (Մալթա) Լիմիթիդ / FC Capital (Malta) Limited/
- Ֆասթ Թոքեն Լիմիթիդ / Fasttoken Limited/
- ԷֆՍԻ Նեթվորք Լիմիթիդ / FC Network Limited/
- ԷսՍԻ Հոլդինգ Լիմիթիդ / S.C. Holding Limited/
- Ռադոն ՍՊԸ / Radon B.V./
- ԷսՍԻ ԱյՓԻ Լիմիթիդ /SC IP Limited/
- «Ֆասթ Շիֆթ» ՍՊԸ
- FC Capital LIMITED
- FJewellery LIMITED
- Էն Էո Էո ՓԲԸ /Վիզեն Բադալյան 100%/
- Վիվառո գրուպ ՍՊԸ

19. Զարգացման վերջին միտումները

Տնտեսության ներքին և արտաքին հատվածներում ընթացող զարգացումներով պայմանավորված Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների սակագները պարբերաբար վերանայվում են՝ նպաստելով վերջիններիս մրցունակության բարձրացմանը և մատչելիության ապահովմանը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Թողարկողի ակտիվապասիվային հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն, որը ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Միջոցների ներգրավում	31.12.2019	31.12.2018	31.12.2017
Վարկեր բանկերից և ֆինանսական հաստատություններից	8,753,592	5,541,195	4,539,471
Ստորադաս փոխառություններ	0	0	0
Պարտավորություն հետգնման պայմանագրերի գծով	0	0	0
Միջոցների տեղաբաշխում			
Հաճախորդներին տրված վարկեր	34,962,879	27,621,788	22,641,666
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	0	0	0

Թողարկողի գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ իմանալու համար ներդրողը կարող է ծանոթանալ Կազմակերպության տարեկան և միջանկյալ հաշվետվություններին, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի www.fastcredit.am «Հաշվետվություններ» բաժնում:

20. Թողարկողի կառավարման մարմինները


Կազմակերպության կառավարման մարմիններն են՝

1. Ընդհանուր ժողով,
2. Խորհուրդ,
3. Վարչություն,
4. Գործադիր տնօրեն:



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների

ՀԱՏՏԱՏՎԱԾ Է՝
Հավելված 1
 «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ Խորհրդի 2019թ. հուլիսի 1-ի նիստի թիվ 19/07/01-01 որոշմամբ ՈւՎԿ մեջ է մտնում 2019 թ-ի հուլիսի 1-ից Խորհրդի նախագահ՝ Վահե Բաղայան



20.1 Ընդհանուր ժողովը

- 20.1.1 Ընդհանուր ժողովը Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է:
- 20.1.2 Տարեկան ժողովը գումարվում է ոչ ուշ, քան ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:
- 20.1.3 Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:
- 20.1.4 Ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը, վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են Ընդհանուր ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

20.1.5 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ) Կազմակերպության վերակազմակերպումը,

գ) Կազմակերպության լուծարումը,

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը,

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Կազմակերպության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

թ) Կազմակերպության գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ժ) Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ժա) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ժբ) Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ժգ) Կազմակերպության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Կազմակերպության այլ արժեթղթերի Կազմակերպության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

ժդ) Ընդհանուր ժողովի վարման կարգը,

ժե) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

ժզ) Կազմակերպության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը,

ժէ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,

ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ ՈԲաժնետիրական ընկերությունների մասին՝ ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում,

ժթ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ ՈԲաժնետիրական ընկերությունների մասին՝ ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում,



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ի) Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

իա) Կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի, անդամների և Գործադիր տնօրենի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,

իբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

իգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,

իդ) հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,

իե) հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը,

իզ) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

20.1.6. 20.1.5 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Կազմակերպության Գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ այլ անձի:

20.1.7. Ժողովի որոշմամբ 20.1.5 կետի ՈՒԳՈՒ և ՈՒԵՈՒ ենթակետերով սահմանված հարցերով որոշումների ընդունումը կարող է փոխանցվել Ընկերության գործադիր մարմնին, իսկ ՈՒԵՈՒ, ՈՒԳՈՒ և ՈՒԻԲ-ԻԵՈՒ ենթակետերով սահմանված հարցերով՝ խորհրդին:

20.1.8. Ընդհանուր Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Կազմակերպության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Կազմակերպության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50 (հիսուն)-ից ավելի տոկոսին:

20.1.9. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ձայների թվի առնվազն 3/4 (երեք/չորրորդ) մեծամասնությամբ, եթե օրենքով ավելի մեծ չափ նախատեսված չէ: Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

20.1.10. Ընդհանուր ժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում՝ առնվազն 2 (երկու) օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

20.2 Խորհուրդը

20.2.1. Խորհուրդն իրականացնում է Կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը:

20.2.2. Խորհուրդը բաղկացած է 3 (երեք) անդամից: Խորհրդի անդամ կարող է լինել նաև Կազմակերպության բաժնետեր չհանդիսացող անձը:

20.2.3. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

բ) տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի

գ) Ընդհանուր ժողովների օրակարգի հաստատումը,

դ) Ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը,

ե) 20.1.5 կետի բ, ժգ, ժզ, ժէ-ի ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ընդհանուր ժողովների քննարկմանը,

զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,

է) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ ՈԲԲՖՏԻԻՐԿԿԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ մասին՝ ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով,

ը) Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում Կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,

թ) Կազմակերպության Գործադիր տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների սահմանումը,

ժ) Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,

ժա) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

ժբ) Կազմակերպության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,

ժգ) Կազմակերպության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամսյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,

ժդ) Կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ժզ) Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

ժէ) Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը,

ժե) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,

ժը) Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում,



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ժթ) Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը,

ի) Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

իա) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

իբ) Կազմակերպության հաստիքացուցակի հաստատումը,

իգ) օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

20.2.4. Կանոնադրության 20.2.3 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Կազմակերպության Գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ այլ անձի:

20.2.5. Խորհուրդն իրավասու է (քվորում ունի), եթե ներկա են խորհրդի անդամների առնվազն 2/3 (երկու երրորդ)-ը:

20.2.6. Խորհրդի որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն 2/3 (երկու երրորդ) մեծամասնությամբ, եթե տվյալ որոշման կայացման համար օրենքով ավելի մեծ չափ նախատեսված չէ:

20.2.7. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում: Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

20.2.8. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

20.2.9. Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

բ) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

դ) նախագահում է Ընդհանուր ժողովներում:

20.2.10. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

20.2.11. Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

20.2.12. Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի և Կազմակերպության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով: Խորհուրդը կարող է ընդունել որոշումներ նաև հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

20.3 Գործադիր մարմին

20.3.1. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Կազմակերպության գործադիր մարմինը՝ Կազմակերպության Վարչությունը և Կազմակերպության Գործադիր տնօրենը: Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Վարչության անդամ չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում ԿԲ-ի որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել Կազմակերպության ղեկավար: Վարչության կազմում պարտադիր ընդգրկվում են Գործադիր տնօրենը, նրա տեղակալները և գլխավոր հաշվապահը:

20.3.2. Կազմակերպության Վարչությունը՝

ա) սահմանում է Կազմակերպության կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների սակագները,

բ) հաստատում է Կազմակերպության աշխատատեղերը, աշխատանքի խթանման և խրախուսման պայմանները,

գ) քննարկում և որոշումներ է ընդունում վերստուգումների, ստուգումների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ,

դ) քննարկում և որոշումներ է ընդունում Կազմակերպության գույքի օտարման գործարքների վերաբերյալ,

ե) քննարկում և որոշումներ է ընդունում մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահամարության մասին,

զ) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

20.3.3. Կազմակերպության Վարչության նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով (հարցման միջոցով) մասնակցում են Վարչության անդամների կեսից ավելին: Կազմակերպության Վարչության որոշումներն ընդունվում են նիստին ներկա Վարչության անդամների ձայների մեծամասնությամբ: Վարչության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Քվեարկության ժամանակ Վարչության յուրաքանչյուր անդամ ունի ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Վարչության այլ անդամի) չի թույլատրվում:

20.3.4. Գործադիր տնօրենն ունի որոշիչ ձայնի իրավունք:

20.3.5. Դեմ կամ ձեռնպահ քվեարկած անդամը պարտավոր է հիմնավորել իր կարծիքը:

20.3.6. Կազմակերպության Վարչության նիստերը գումարում է Գործադիր տնօրենը՝ առնվազն ամիսը մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

20.3.7. Վարչության նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում է Կազմակերպության ներքին աուդիտի ղեկավարը:



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների

20.3.8. Վարչության նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում:

20.3.9. Վարչության նիստերը կազմակերպում և վարում է Գործադիր տնօրենը, որը ստորագրում է նիստերի որոշումները:

20.3.10. Գործադիր տնօրենը՝

ա) տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

բ) ներկայացնում է Կազմակերպությունը ՀՀ-ում և արտասահմանում,

գ) գործում է առանց լիազորագրի,

դ) տալիս է լիազորագրեր,

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

զ) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

է) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին,

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ժա) իրականացնում է Վարչության նախագահի գործառույթները՝

- կազմակերպում է Վարչության աշխատանքները,
- գումարում և նախագահում է Վարչության նիստերը,
- կազմակերպում է Վարչության նիստերի արձանագրությունների վարումը,
- ներկայացնում է Վարչությունը Խորհրդի նիստերին,
- ստորագրում է Վարչության նիստերի որոշումները:

20.3.11. Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ օրենքով և Կանոնադրությամբ Ընդհանուր ժողովի, Խորհրդի և Վարչության բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

20.3.12. Գործադիր տնօրենը կազմակերպում է ժողովի, Վարչության և Խորհրդի որոշումների կատարումը:

21. Թողարկողի գործադիր տնօրենի տեղակալների եվ գլխավոր հաշվապահի գործառույթները



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

- 21.1. Կազմակերպության Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ:
- 21.2. Գործադիր տնօրենի տեղակալները նշանակվում են Ընդհանուր ժողովի կողմից՝ Կազմակերպության Գործադիր տնօրենի ներկայացմամբ:
- 21.3. Կազմակերպության Գործադիր տնօրենի տեղակալը (տեղակալները) պատասխանատվություն է (են) կրում գործունեության կոնկրետ ոլորտներում իրեն (իրենց) վերապահված պարտականությունների կատարման համար, ինչպես նաև իրականացնում է (են) Կազմակերպության տարածքային ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացումը:
- 21.4. Կազմակերպության գլխավոր հաշվապահին իրականացնում է Ոչաշվապահական հաշվառման մասին Ո Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
- 21.5. Կազմակերպության գլխավոր հաշվապահի գործառույթները սահմանվում են Կազմակերպության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ստորաբաժանման կանոնակարգով:
- 21.6. Կազմակերպության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, Գործադիր տնօրենին կամ այլ անձի:
- 21.7. Կազմակերպության գլխավոր հաշվապահը նշանակվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ Կազմակերպության Գործադիր տնօրենի ներկայացմամբ:
- 21.8. Կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, դրանցում արժանահավատ տեղեկատվություն արտացոլելու, ինչպես նաև Կազմակերպության Ժողովին, Խորհրդին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներում Կազմակերպության մասին անկողմնակալ ֆինանսական տեղեկություններ արտացոլելու համար:
- 21.9. Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Կազմակերպության բոլոր աշխատողների համար:
- 21.10. Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ Կազմակերպության Գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ Գործադիր տնօրենի կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է Գործադիր տնօրենը:
- 21.11. Կազմակերպության գլխավոր հաշվապահը պետք է ունենա այդ պաշտոնում աշխատելու համար ԿԲ-ի կողմից տրված որակավորման վկայական:

22. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը



ԱԶԴԱԳԻՐ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

1. Խորհրդի նախագահ՝ Վահե Ռոմիկի Բաղայան

Բնակության վայրը	ք. Երևան, Հյուսիսային պող., 2. 3, բն. 17
Իրավասությունները	Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է ժողովներում:
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Հանդիսանում է սույն բաժնի 18-րդ կետում նշված ընկերությունների բաժնետեր:

Կազմակերպության և Կազմակերպության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

2. Խորհրդի անդամ՝ Վիգեն Ռոմիկի Բաղայան

Բնակության վայրը	ք. Երևան, Հյուսիսային պող., 2. 5, բն. 129
Իրավասությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Հանդիսանում է սույն բաժնի 18-րդ կետում նշված ընկերությունների բաժնետեր:



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների

Կազմակերպության և Կազմակերպության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

3. Խորհրդի անդամ՝ Հարություն Աշոտի Համբարձումյան

Բնակության վայրը	ք. Երևան, Շենգավիթ 10 փ., 4 նրբ., 23 տուն
Իրավասությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Հանդիսանում է մի քանի կազմակերպությունների գործադիր տնօրեն և «Հյուրընկալ» ՍՊԸ-ի միակ մասնակից:

Կազմակերպության և Կազմակերպության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

1. Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն՝ Հակոբ Ղոնջեյան

Բնակության վայրը	ք. Երևան, Կոմիտաս 542., բն. 46
Իրավասությունները	Իրականացնում է Կազմակերպության ընթացիկ



ԱԶԴԱԳԻՐ
«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Պարտականությունները	կառավարումը: Պատասխանատու է հաճախորդներին բարձրորակ ֆինանսական ծառայություններով ապահովման, կորպորատիվ, ֆինանսական, ռիսկերի կառավարման լավագույն փորձի կիրառման, անձնակազմի զարգացման, Կազմակերպության Կանոնադրության, ընթացակարգերի և ծրագրերի ներդրման և իրականացման համար:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Կազմակերպության և Կազմակերպության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

2. Վարչության անդամ - Գործադիր տնօրենի տեղակալ՝ Կամո Մայիլյան

Բնակության վայրը	ք. Երևան, Հալաբյան 432., բն. 7
Իրավասությունները	Կազմակերպության վարկավորման գծով զարգացմանն ուղղված աշխատանքների
Պարտականությունները	իրականացում, կոորդինացում, կազմակերպում և վերահսկում, Գործադիր տնօրենի կառավարման աշխատանքների աջակցում՝ նպաստելով կազմակերպության զարգացմանն ու առաջընթացին:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Կազմակերպության և Կազմակերպության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

3. Վարչության անդամ - գլխավոր հաշվապահ՝ Լիլիա Մովսիսյան

Բնակության վայրը	ք. Երևան, Օգանովի 302., բն. 28
Իրավասությունները	Կազմակերպության հաշվապահական հաշվառման վարչության աշխատանքների կոորդինացում, Կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման ապահովում, Միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմում, Տարեկան բյուջեի կատարողների նկատմամբ հսկողության իրականացում:
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Կազմակերպության և Կազմակերպության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

Կազմակերպության «Սեբաստիա» և «Շրջանային» մասնաճյուղերում կենտրոնացված է Կազմակերպության ակտիվների 10 (տասը) և ավելի տոկոսը: Այդ մասնաճյուղերի կառավարիչներն են՝

1. Սեբաստիա մասնաճյուղի կառավարիչ – Մանվել Հակոբյան Մուշեղի

Բնակության վայրը	ք. Երևան, Դավիթաշեն 4 թ., 202, 49բն.
Իրավասությունները	Ղեկավարվել և առաջնորդվել մասնաճյուղի կանոնադրությանը համապատասխան



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Պարտականությունները	<ul style="list-style-type: none"> • Կազմակերպել և հսկել մասնաճյուղի աշխատակիցների աշխատանքը • Կազմակերպել և ղեկավարել մասնաճյուղի ամենօրյա գործունեությունը, ապահովել մասնաճյուղի կողմից ֆինանսական գործառույթների կատարումը Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված կարգերին համապատասխան • Կազմել և Գործադիր տնօրենին ներկայացնել մասնաճյուղի հաշվետվությունները
---------------------	--

2. Շրջանային մասնաճյուղի կառավարիչ – Հսկող Հարությունյան Մնացականի

Բնակության վայրը	ք. Երևան 16 թղմ., շ. 15, բն. 5
Իրավասությունները	<ul style="list-style-type: none"> • Ղեկավարվել և առաջնորդվել մասնաճյուղի կանոնադրությանը համապատասխան
Պարտականությունները	<ul style="list-style-type: none"> • Կազմակերպել և հսկել մասնաճյուղի աշխատակիցների աշխատանքը • Կազմակերպել և ղեկավարել մասնաճյուղի ամենօրյա գործունեությունը, ապահովել մասնաճյուղի կողմից ֆինանսական գործառույթների կատարումը Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված կարգերին համապատասխան • Կազմել և Գործադիր տնօրենին ներկայացնել մասնաճյուղի հաշվետվությունները

23. Հսկող անձինք

Կազմակերպության հսկող անձինք են հանդիսանում՝ Վահե Ռոմիկի Բաղայանը և Վիգեն Ռոմիկի Բաղայան, ովքեր տիրապետում են կազմակերպության 100% բաժնետոմսերին, ամեն մեկը 50% և միաժամանակ հանդիսանում են Կազմակերպության խորհրդի անդամ:

Բաժնետերերը հանդիսանում են Խորհրդի երեք անդամներից երկուսը:

24. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին



ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Կազմակերպության 2017, 2018 և 2019 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով ներկայացված են սույն Ազդագրին կից: Ցանկության դեպքում ներդրողները Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Կազմակերպության գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում:

Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2019 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի են ունեցող Թողարկողի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների որոշակի փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

	31/03/20	31/12/19
1. Սեփական կապիտալ	10,719,223	9,792,844
2. Ընդհանուր ակտիվներ	43,622,846	38,449,192
3. Ընդհանուր պարտավորություններ	32,903,624	28,656,348
4. Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	1,182,683	1,404,270
5. Զուտ տոկոսային եկամուտ	1,893,690	5,441,194
6. Գործառնական եկամուտ	1,994,891	5,792,649

Հարկ է նշել որ սեփական կապիտալի աճը պայմանավորված է առաջին եռամսյակի զուտ շահույթի աճով: Ընդհանուր ակտիվների աճի մեջ /5.17 մլրդ/ գերակշիռ մասը բաժին է ընկնում վարկային ներդրումներին, այս միտումը համեմատած նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ բնականոն է համարվում (հաշվետու տարվա աճի տեմը 3 տոկոսային կետով է գերազանցում նախորդ տարվա տեմպը) և առավելապես պայմանաորված է



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատուների

հաճախորդների թվի և սպառողական վարկերի նկատմամբ պահանջարկի ավելացմամբ: Պարտավորությունների աճը /4.24 մլրդ/ պայմանավորված է ակտիվների աճի պահանջն ապահովելու համար ներգրավված միջոցներով:

Կազմակերպության շուկայի մեծությունը պայմանավորված է ինչպես նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գործառնական եկամուտների ավելացումամբ, մասնավորապես ներդրումային գործունեությունից ստացված եկամուտներով, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բացակայում էր, այնպես էլ առաջին եռամսյակի ընթացքում կազմակերպության ակտիվների դասակարգման և պահուստավորման կարգում համապատասխան փոփոխությունների իրականացմամբ, որի արդյունքում կազմակերպությունը առավել խիստ դրույքաչափերով պահուստավորման սկզբունքից անցում կատարեց առավել ցածր դրույքաչափերով պահուստավորմանը: Ջուտ տոկոսային եկամուտների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ պայմանավորված համեմատվող ժամանակահատվածների համար ակտիվների մոտ 30 տոկոս աճով, ընդ որում զուտ տոկոսային եկամուտների և ակտիվների հարաբերական ցուցանիշն էլ / զուտ տոկոսային եկամուտներ հարաբերած դիտարկվող ժամանակահատվածների ակտիվների միջին մեծությունների վրա/ նախորդի տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է մոտ 27 տոկոսով: Կազմակերպության գործառնական եկամուտների աճը ևս գրանցվել է վերը նշված գործոնների ազդեցությամբ:

Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 (տասներկու) ամսվա ընթացքում Կազմակերպությունը ներգրավված չէ ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներում:

25. Էական պայմանագրերը

Կազմակերպությունում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 (մեկ) տարվա ընթացքում Կազմակերպության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Կազմակերպության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 (հինգ) տոկոսը:

26. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը



ԱԶԴԱԳԻՐ

«Տասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

Բացի Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Որպես սույն բաժնում ներկայացված տեղեկատվության ստացման աղբյուր, երրորդ անձինք ներգրավված չեն:

27. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.fastcredit.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Կազմակերպության գլխամասային գրասենյակ՝ 0047, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6:

ՈՐՈՇՈՒՄ N 19/12/10-01

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից պարտատոմսերի թողարկումը, տեղաբաշխումը, տեղաբաշխման և շուկա ստեղծողի պայմանագրերի կնքումը հաստատելու վերաբերյալ

Քննարկելով «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, տեղաբաշխման և շուկա ստեղծողի պայմանագրերի կնքման հարցերը՝ **խորհուրդը որոշեց՝**

1. Հաստատել պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումը:
2. 4,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 6.5 տոկոս տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ, 40,000 հատ ոչ փաստաթղթային արժեկտրոնային պարտատոմսեր,
3. 400,000,000 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 10 տոկոս տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ, 40,000 հատ ոչ փաստաթղթային արժեկտրոնային պարտատոմսեր:
4. Արժեկտրոնի հաշվարկը սկսվում է պարտատոմսերի տեղաբաշխման առաջին օրվանից, որը հանդիսանում է նաև թողարկման օր, ընդ որում պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Թողարկողի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխումից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ, ինչը կիրառարակվի Թողարկողի ինտերնետային կայքում՝ հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն մեկ օր առաջ:



5. ԱՄՆ դոլարով թողարկվող 40,000 հատ և ՀՀ դրամով թողարկվող 40,000 հատ պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:
6. Պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում՝ բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու հայտի՝ Բորսայի կողմից մերժման դեպքի, որի պարագայում տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:
7. Սույն որոշմամբ չկարգավորված հարցերը ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ և Վարչության իրավական ակտերով:
8. Հանձնարարել Գործադիր տնօրենին «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի հետ կնքել պարտատոմսերի տեղաբաշխման և շուկա ստեղծողի պայմանագիրները:
9. Պայմանագրերի պայմանների հաստատման իրավասությունը փոխանցել Գործադիր տնօրենին:
10. Սույն որոշմամբ չկարգավորված հարցերը ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ և Վարչության իրավական ակտերով:
11. Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝

Վահե Բադալյան

Խորհրդի քարտուղար՝

Աննա Սարգսյան



«ՀԱՅԲԻՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝ 374 10 592020
Ֆաքս՝
Էլ. փոստ՝

Վճարման հանձնարարագիր N 001720

Ամսաթիվ	13/02/2020	Նույնացուցիչ	b9441e9c-22c1-433a-bc13-9029e7224fc7
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1150017813563550	900005016119	AMD	50,000.00
Վճարողի անվանում	«ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ		
Վճարողի բանկ	«ՀԱՅԲԻՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ		
ՀՎՀՀ	02251606		
Շահառուի անվանում	Կենտրոնական Գանձապետարան		
Շահառուի բանկ	Գանձապետական բաժանմունք		
Գումարը բառերով	Հիսուն հազար դրամ		
Նպատակ	Ազդագիր գրանցելու համար		
Առաջին ստորագրող	Lilia Movsisyan	Երկրորդ ստորագրող	Kamo Mayilyan
Ամսաթիվ	13/02/2020 10:52:51.957	Ամսաթիվ	13/02/2020 10:46:31.573
Սարքի անվանում	SMS	Սարքի անվանում	SMS
Սարքի սերիալ N	37499990175	Սարքի սերիալ N	37477341686
Ստորագրման տվյալ	SMS	Ստորագրման տվյալ	SMS
Ստորագրություն	32316	Ստորագրություն	41422



Կատարված է բանկի կողմից

12.02.2020 թ. գրություն ուղղված

V-20102112-01

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ



- ԻՎ
- ՀՀՎ
- ԱՄՎ
- ՏՏՎ
- ՌԼՎ
- ՀՍՎ
- մ/6
- ԳՏՏ
- ԾՎԿ
- ՄՈՎ
- Մեթոդ.
- Ռազմ. և պլան.
- Առողիտ
- Գիտություն
- Ի տնօրինություն
- Պատասխանել
- Ներկ. բանավոր
- Հրատապ
- _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan Tel.: (37410) 561 554 Fax: (37410) 565 496	0010, Երևան, Վազգեն Սարգսյան 6 Հեռ. (37410) 561 554 Ֆաքս (37410) 565 496	0010, Ереван, Вазгена Саркисяна, 6 Тел.: (37410) 561 554 Факс: (37410) 565 496
---	--	--

12.02.2020թ. N 13.1-22/000.319-20
06.02.2020թ. Ձեր N Ե-20/02/06-02 Գրություն

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ
գործադիր տնօրեն/վարչության նախագահ՝
պարոն Հակոբ Ղոնջեյանին

Հարգելի պարոն Ղոնջեյան

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.4 կետը, ինչպես նաև հաշվի առնելով «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ նաև Կազմակերպություն) կողմից 07.02.2020թ. ՀՀ ԿԲ ներկայացրած պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու մտադրության վերաբերյալ դիմումը (36 ամիս մարման ժամկետով, 4,000,000 ԱՄՆ դոլար դոլարային և 400,000,000 ՀՀ դրամ ծավալով դրամային պարտատոմսերի) Ֆինանսական վերահսկողության վարչությունը՝ Կազմակերպության կողմից պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու վերաբերյալ, առարկություն չունի:

Հարգանքով՝

Ֆինանսական վերահսկողության
վարչության պետ՝

Հրանտ Սուվարյան



ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

Ա. Ջալալյան

14.10.2011թ.


Վարկային կազմակերպության իրացնելիս թիվ 37

Սույն իրացնելիս տրվում է

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով վարկային կազմակերպության գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Գրանցման թիվը 37



Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ
վարկային կազմակերպություն փակ
բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2019թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտի անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 34-ի վրա, որտեղ ներկայացված է նոր տիպի COVID-19 հիվանդության տարածման ազդեցությունը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4.4.6-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 31.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Ընկերության՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդաբանության հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Ընկերության՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Ընկերության՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:

- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Ընկերության փոլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Ընկերության կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Ընկերության ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Ընկերության համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին

հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և,

հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:


Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը, Արմեն Հովհաննիսյանն է:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն,
Առաջադրանքի պատասխանատու



10 մարտի 2020թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2019	2018
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	7	7,849,763	6,382,862
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	7	(2,408,569)	(2,332,905)
Զուտ տոկոսային եկամուտներ		5,441,194	4,049,957
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	8	492	243
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	8	(9,398)	(23,257)
Զուտ կոմիսիոն և այլ ծախսեր		(8,906)	(23,014)
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտ	9	334,036	196,014
Այլ եկամուտներ	10	26,325	97,561
Արժեզրկման ծախս	11	(2,133,713)	(331,019)
Անձնակազմի գծով ծախսեր	12	(1,707,720)	(1,498,746)
Հիմնական միջոցների մաշվածություն	17	(184,014)	(125,533)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	18	(7,407)	(18,656)
Այլ ծախսեր	13	(355,525)	(508,461)
Շահույթ մինչև հարկումը		1,404,270	1,838,103
Շահութահարկի գծով ծախս	14	(254,672)	(356,781)
Տարվա շահույթ		1,149,598	1,481,322
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,149,598	1,481,322

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 77-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ	15	2,015,248	1,784,782
Հաճախորդներին տրված վարկեր	16	34,962,879	27,621,788
Հիմնական միջոցներ	17	1,107,626	335,576
Ոչ նյութական ակտիվներ	18	31,192	30,416
Կանխավճարներ շահութահարկի գծով		152,289	-
Հետաձգված հարկային ակտիվ	14	-	47,126
Այլ ակտիվներ	19	179,958	188,710
Ընդամենը՝ ակտիվներ		38,449,192	30,008,398
<i>Պարտավորություններ և սեփական կապիտալ</i>			
<i>Պարտավորություններ</i>			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	20	8,753,592	5,541,195
Վարկեր և փոխառություններ	21	17,988,955	18,694,544
Թողարկված պարտքային արժեթղթեր	22	599,148	603,387
Վարձակալության գծով պարտավորություններ	26	775,581	-
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		-	250,918
Հետաձգված հարկային պարտավորություն	14	208,597	-
Այլ պարտավորություններ	23	330,475	275,108
Ընդամենը՝ պարտավորություններ		28,656,348	25,365,152
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	24	7,000,000	3,000,000
Գլխավոր պահուստ		378,755	308,755
Չբաշխված շահույթ		2,414,089	1,334,491
Ընդամենը՝ սեփական կապիտալ		9,792,844	4,643,246
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		38,449,192	30,008,398

Ֆինանսական հաշվետվությունները, ներկայացված 8-ից 27 էջերում, ստորագրվել են Ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2020թ. մարտի 10-ին:

Հակոբ Ղոնջեյան

Գործադիր տնօրեն



Լիլիա Մուրադյան

Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացվել է ընթացիկ այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից 31-ին և 77-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ/ (Կուտակված վնաս)	Ընդամենը
Հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,000,000	308,755	1,334,491	4,643,246
Տարվա շահույթ	-	-	1,149,598	1,149,598
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	-	1,149,598	1,149,598
Բաժնետիրական կապիտալի ավելացում	4,000,000	-	-	4,000,000
Հատկացում պահուստին	-	70,000	(70,000)	-
<i>Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ</i>	4,000,000	70,000	(70,000)	4,000,000
Հաշվեկշիռը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,000,000	378,755	2,414,089	9,792,844
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,000,000	259,755	962,299	3,222,054
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը (ծանոթ. 6)	-	-	(150,130)	(150,130)
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	2,000,000	259,755	812,169	3,071,924
Տարվա շահույթ	-	-	1,481,322	1,481,322
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	-	1,481,322	1,481,322
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,000,000	-	-	1,000,000
Հատկացում պահուստին	-	49,000	(49,000)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(910,000)	(910,000)
<i>Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ</i>	1,000,000	49,000	(959,000)	90,000
Հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,000,000	308,755	1,334,491	4,643,246

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 77-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2019	2018
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահույթ մինչև հարկումը	1,404,270	1,838,103
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածության և անորտիզացիոն մասհանումներ	191,421	144,189
Հնարավոր կորուստների արժեզրկման ծախս	2,133,713	331,019
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթային վերագնահատումից զուտ (օգուտ)/վնաս	(39,300)	13,710
Հիմնական միջոցների վաճառքից զուտ վնաս	277	-
Բռնագանձված գույքի վաճառքից զուտ վնաս	17,736	-
Ստացվելիք տոկոսներ	(42,863)	(47,323)
Վճարվելիք տոկոսներ	65,918	222,075
<i>Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները</i>		
	3,731,172	2,501,773
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Հաճախորդներին տրված վարկեր	(9,475,289)	(5,451,937)
Այլ ակտիվներ	(25,606)	(23,273)
<i>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Այլ պարտավորություններ	55,792	41,574
<i>Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը</i>		
	(5,713,931)	(2,931,863)
<i>Վճարված շահութահարկ</i>		
	(402,156)	(495,068)
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>		
	(6,116,087)	(3,426,931)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր

Հիմնական միջոցների առք	(107,793)	(102,222)
Ոչ նյութական ակտիվների առք	(8,183)	(17,635)
Հիմնական միջոցների վաճառք	-	834
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(115,976)	(119,023)

Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր

Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	3,274,220	1,016,786
Վարկեր և փոխառություններ	3,299,483	2,292,294
Պարտքային արժեթղթերի թողարկում	-	580,657
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(125,465)	-
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	1,000,000
Շահաբաժիններ բաժնետերերին	-	(910,000)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	6,448,238	3,979,737
Դրամական միջոցների զույգ աճ	216,175	433,783

Դրամական միջոցներ տարվա սկզբի դրությամբ	1,784,782	1,389,657
Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը	197	(197)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	14,094	(38,461)
Դրամական միջոցներ տարվա վերջի դրությամբ (ծանթ. 15)	2,015,248	1,784,782

Լրացուցիչ տեղեկատվություն՝

Ստացված տոկոսներ	7,806,900	6,335,539
Վճարված տոկոսներ	(2,342,651)	(2,130,442)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 77-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2011թ. հոկտեմբերին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2011թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N266 Ա որոշմամբ, թիվ 129 գրանցման վկայականով:

Ընկերությունը ստեղծվել է մանր և միջին ձեռնարկություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց վարկեր և փոխառություններ տրամադրելու նպատակով:

Ընկերության գլխավոր գրասենյակը և 11 մասնաճյուղերը գտնվում են Երևանում և 12 մասնաճյուղերը ՀՀ տարբեր մարզերում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ 0047, ք.Երևան, Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան 32/6:

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն: Շարունակելով 2018 թ. գրանցված աճի համոզիչ տեմպը՝ 2019թ. տարեկան տնտեսական աճը մնացել է կայուն: Տնտեսության մեջ առանցքային դեր են ունեցել առևտրի, ծառայությունների և արդյունաբերության ոլորտները:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՍԿ):

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2019թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ»

ՖՀՄՍ 16-ը «Վարձակալություններ» փոխարինում է ՀՀՄՍ 17-ը «Վարձակալություն», առկա երեք մեկնաբանությունների հետ մեկտեղ (ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ 15 «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»):

Այս նոր ստանդարտի կիրառումը հանգեցրել է նրան, որ Ընկերությունն իր բոլոր նախկին գործառնական վարձակալությունների համար ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ այն վարձակալությունների, որոնք որոշակիացված են որպես փոքրարժեք ակտիվի վարձակալություն կամ ստանդարտի սկզբնական կիրառման պահին 12 ամսից կարճ վարձակալական ժամկետ ունեցող վարձակալություն:

Նոր ստանդարտը կիրառվել է՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց մոտեցումը՝ ՖՀՄՍ 16-ի կիրառման միասնական ազդեցությունը ճանաչելով սեփական կապիտալում որպես կուտակված արդյունքի սկզբնական մնացորդի ճշգրտում ընթացիկ ժամանակաշրջանում: Նախորդ ժամանակաշրջանները չեն վերաներկայացվել: Բացի այդ, ՖՀՄՍ 16-ում բացահայտման պահանջները հիմնականում չեն կիրառվել համադրելի տեղեկատվության համար:

Ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար Ընկերությունն ընտրել է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալության սահմանման օգտագործումը և չի կիրառել ՖՀՄՍ 16-ը նախկինում ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալություն չճանաչված համաձայնությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվի՝ այն է 2019թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գործառնական վարձակալությունների համար Ընկերությունն ընտրել է սկզբնավորման ուղղակի ծախսումները չներառել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափման մեջ: Այդ ամսաթվին

Ընկերությունը նաև ընտրել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափել անցման օրվա դրությամբ առկա վարձակալական պարտավորությանը հավասար գումարով՝ ճշգրտված բոլոր կանխավճարների կամ հաշվեգրված վարձակալական վճարների չափով:

Ելնելով վերը նշվածից՝ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ.

- 848,548 հազար դրամի օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչվել և ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Հիմնական միջոցներ» տողում:
- 848,548 հազար դրամի լրացուցիչ վարձակալության գծով պարտավորությունները ճանաչվել և ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ առանձին տողում:
- ՖՀՄՍ 16-ի ընդունումը որևէ ազդեցություն չի ունեցել Ընկերության չբաշխված շահույթի վրա:

Հետևյալ աղյուսակում արտացոլված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալության գծով պարտավորությունների համադրումը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների հետ.

Հազար ՀՀ դրամ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ	21,062
Վարձակալության երկարաձգման այլընտրանքի խելամիտ համոզումներ	656,001
Ճանաչումից ազատումներ.	
• Վարձակալություն 12 ամսից կարճ ժամկետով	(11,720)
Գործառնական վարձակալության գծով պարտավորությունները մինչև զեղչումը	665,343
Զեղչումը՝ օգտագործելով լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը	(177,922)
2019թ. հունվարի 1-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ	487,421

Սկզբնական կիրառման անսաթվին օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեզրկման ստուգում կատարելու փոխարեն, Ընկերությունը հիմնվել է պատմական գնահատման վրա՝ արդյոք վարձակալություններն անբարենպաստ են, թե ոչ, անմիջապես նախքան ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթիվը:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես գործառնական վարձակալություններ և որոնց մնացորդային ժամկետը 12 ամսից պակաս է, նաև փոքրաթեք վարձակալությունների համար, անցման ժամանակ Ընկերությունը կիրառել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես ֆինանսական վարձակալություններ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալական պարտավորությունը սկզբնական կիրառման ամսաթվին չափվում են այն գումարով, որով չափվել են անմիջապես նախքան սկզբնական կիրառման ամսաթիվը՝ ՀՀՄՍ 17-ի կիրառմամբ:

ՖՀՄՍ 16-ին անցնելիս վարձակալության գծով պարտավորության նկատմամբ կիրառված լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը կազմում է 10%:

Վարձակալությունը երկարաձգելու կամ դադարեցնելու այլընտրանքները դիտարկելիս Ընկերությունն օգտվել է հետադարձ ամսաթվով դատողություններ կիրառելու հնարավորությունից՝ վարձակալության ժամկետը որոշելու համար:

ՖՀՄՍ 16-ի կիրառման քանակական ազդեցությունը 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 6-ում:

Ներքոհիշյալ այլ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2019թ-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՍ 9 (Փոփոխություններ) «Ֆինանսական գործիքներ» կանխավճարների առանձնահատկությունները՝ բացասական փոխհատուցմամբ»,
- ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 23 «Շահութահարկով հարկման մուրեցումների վերաբերյալ անորոշություն»,
- ՀՀՄՍ 19 (Փոփոխություններ) «Պլանի փոփոխություն, դադարեցում կամ ներդրում»,
- 2015-2017թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից):

3.5 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,
- «Էականության սահմանումը» (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները գեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու սպասվող պարտքային վնասը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ սպասվող պարտքային վնասը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տես 4.4.6 ծանոթագրությունում:

Կումիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում, այդ հոդվածում են ներկայացված նաև ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	479.70	483.75
ՀՀ դրամ/1 Եվրո	537.26	553.65

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուղվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների

դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Ընկերությունը սկզբնապես ճանաչում է տրամադրած վարկերը, ստանձնած փոխառությունները և թողարկված պարտքային արժեթղթերը դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Ընկերության՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են դրանց ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման դեպքում ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Առևտրային նպատակներով չափվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» կազմված է փողի ժամանակային արժեքի և պարտքային ռիսկի փոխհատուցումից, այլ ռիսկերի և ֆինանսական ակտիվի պահպանման հետ կապված ծախսերի փոխհատուցումից (օրինակ՝ իրացվելիության ռիսկ և վարչական ծախսեր), ինչպես նաև շահույթի մարժայից: Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Ընկերությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Ընկերությունը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման առանձնահատկությունները,
- վաղաժամկետ մարման և երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Ընկերության պահանջը (օրինակ՝ առանց ռեզրեսի պահանջի իրավունքի ակտիվների պայմանավորվածություններ) և
- առանձնահատկությունները, որոնք փոխում են դրամի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Ընկերությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա տարածվող հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված

փոխհատուցման գումարի տարբերությունը (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են առոչինչ: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տես 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տես 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմաններով հիմնավորված նոր ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն գտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՄ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Ընկերության առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

Ընկերությունը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Ընկերությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով. բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Ընկերությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

Ընկերությունը համարում է, որ պարտքային արժեթղթերը ունեն ցածր պարտքային ռիսկ այն դեպքում, երբ վեջինիս պարտքային ռիսկի վարկանիշը համապատասխանում է համընդհանուր ընդունված «ներդրումային» վարկանիշի սահմանմանը:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք պայմանավորված են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում տեղի ունեցող դեֆոլտ առաջացնող իրադարձություններով:

Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում դեֆոլտի բոլոր հնարավոր դեպքերի հետևանքով:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Ընկերությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 30.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1՝ երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Ընկերությունը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2՝ երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Ընկերությունը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3՝ արժեզրկված վարկեր: Ընկերությունը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ՝ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները դեֆոլտի հավանականության, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի, դեֆոլտի ժամանակ վնասի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Դեֆոլտի հավանականություն (PD): Այն տվյալ ժամանակահատվածում դեֆոլտի հավանականության գնահատումն է: Դեֆոլտ կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակաշրջանի միայն որոշակի ժամանակահատվածում, եթե պարտականությունը նախկինում չի ապաճանաչվել և շարունակում է մնալ պորտֆելում:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD): Այն ներկայացնում է դեֆոլտի ապագա ամսաթվի դրությամբ ռիսկի ենթարկված գումարի չափի գնահատումը՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ռիսկի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսագումարների մարումը՝ անկախ նրանից պայմանագրով նախատեսված է, թե ոչ, պարտավորության սպասվող օգտագործումը և չկատարված վճարումների հաշվեգրված տոկոսները:

Վնասը դեֆոլտի ժամանակ (LGD): Այն արտահայտում է վնասի չափը, որը առաջանում է տվյալ ժամանակահատվածում վարկի դեֆոլտային կարգավիճակում: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն հույս ունի ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը: Որպես կանոն, այն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի (EAD) նկատմամբ տոկոսով:

Դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը և դեֆոլտի ժամանակ վնասը ավելի մանրամասն բացահայտվում են 30.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող

Ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տես՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- էմիտենտի կամ փոխառուի էական ֆինանսական դժվարություններ,
- պայմանագրային պայմանների խախտում, օրինակ՝ դեֆոլտ կամ վճարման ուշացում,
- վարկերի պայմանների այնպիսի վերանայում, որը Ընկերությունն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորման հավանականություն,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Փոխառուի ֆինանսական դժվարությունների հետևանքով վերանայված վարկը սովորաբար դիտարկվում է որպես արժեզրկված, միայն եթե առկա չէ վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր չստանալու ռիսկը էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների (FVOCI) արժեզրկումից կորուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այդ ակտիվների համարժեքը հավասար է

իրենց իրական արժեքին: Այնուամենայնիվ, արժեզրկումից կորուստները բացահայտվում և ճանաչվում են իրական արժեքի ճշգրտման պահուստում,

- վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
 - Վարկային պարտավորվածության չօգտագործված մասի գծով գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Ընկերությունը գնահատում է վարկային պարտավորվածությունների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակտնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները գեղջվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
 - եթե ֆինանսական գործիքը ունի ինչպես օգտագործված, այնպես էլ չօգտագործված բաղադրիչ, և Ընկերությունը հնարավորություն չունի վարկերի տրամադրման պարտավորվածության ակնկալվող պարտքային կորուստները առանձնացնել օգտագործված բաղադրիչի ակնկալվող պարտքային կորուստներից, ապա Ընկերությունը ներկայացնում է ակնկալվող պարտքային կորուստների համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի համախառն գումարի նկատմամբ արժեզրկումից կորուստների ցանկացած գերազանցում ներկայացվում է պահուստի տեսքով:
 - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Ընկերության պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները գեղջվում են դիսկոլ ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստների շրջանակում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Ընկերությունը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Ընկերություն պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.5 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են կանխիկ դրամից և ՀՀ առևտրային բանկերում հաշիվներից:

Դրամական միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Հաճախորդներին տրված վարկեր

Վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Վարձակալություն

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 3.4-ում, Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 16-ը՝ օգտագործելով վերաձևափոխված հետընթաց մոտեցումը, այդպիսով համադրելի տեղեկատվությունը չի վերաներկայացվել: Դա նշանակում է, որ համադրելի տեղեկատվությունը դեռևս ներկայացված է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն:

2019թ. հունվարի 1-ից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ընկերությունը որպես վարձակալ

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Ընկերությունը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք գեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզումներ:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ընկերությունը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Գործառնական վարձակալություն՝ Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.8 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	20	5
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Համակարգիչներ և կապի միջոցներ	1	100
Գույք և գրասենյակային սարքավորումներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով (մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող):

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.9 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.10 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

4.11 Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.12 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.13 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Ընկերությունը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.4.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 28):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման հնարավորություններ

Երբ Ընկերությունն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար: 11,720 հազար ՀՀ դրամի վարձակալության հնարավոր վճարները չեն ներառվել վարձակալության գծով պարտավորություններում, քանի որ ողջամտորեն հիմնավորված չէ երկարաձգման հնարավորության կիրառումը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տես՝ ծանոթագրություն 31.1.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես՝ ծանոթագրություն 4.4.6):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ 24 ծանոթագրությունը:

6 Անցման բացահայտում

6.1 ՖՀՄՍ 9

Ստորև նկարագրվում է ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և չբաշխված շահույթի վրա՝ ներառյալ ՀՀՄՍ 39-ի կրած պարտքային կորուստների հաշվարկների՝ ՖՀՄՍ 9-ի ակնկալվող պարտքային կորուստներով փոխարինման ազդեցությունը:

ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվեկշռային արժեքների համադրումը ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված մնացորդների միջև ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերադասակարգում	Վերաչափում (ականավիղ պարտքային կորուստներ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
<i>Ամորտիզացված արժեք</i>				
<i>Դրանմական միջոցներ</i>				
Տարեսկզբի մնացորդ	1,389,657			
Վերաչափում		-	(97)	
Տարեվերջի մնացորդ				1,389,560
<i>Վարկեր հաճախորդներին</i>				
Տարեսկզբի մնացորդ	22,641,666			
Վերաչափում		-	(182,410)	
Տարեվերջի մնացորդ				22,459,256
<i>Այլ ֆինանսական ակտիվներ</i>				
Տարեսկզբի մնացորդ	13,076			
Վերաչափում		-	(5,155)	
Տարեվերջի մնացորդ				7,921
Ընդամենը ամորտիզացված արժեք	24,044,399	-	(187,662)	23,856,737
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
<i>Ամորտիզացված արժեք</i>				
<i>Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</i>				
Տարեսկզբի մնացորդ	4,539,471	-	-	4,539,471
Վարկեր և փոխառություններ	16,210,959	-	-	16,210,959
Այլ ֆինանսական պարտավորություններ	198,355	-	-	198,355
Ընդամենը ամորտիզացված արժեք	20,948,785	-	-	20,948,785

ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը պահուստների և չբաշխված շահույթի վրա ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Պահուստներ և չբաշխված շահույթ
<i>Չբաշխված շահույթ</i>	
Տարեվերջի մնացորդ ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31)	962,299
ՖՀՄՍ 9-ի համաձայն ականավիղ պարտքային կորուստների ճանաչում	(187,662)
Հետաձգված հարկ	37,532
Տարեսկզբի մնացորդ ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1)	812,169
Ընդամենը սեփական կապիտալի փոփոխություններ ՖՀՄՍ 9-ի ներդրման հետևանքով	(150,130)

Հետևյալ աղյուսակը համադրում է.

- ՀՀՄՍ 39-ի համաձայն ֆինանսական ակտիվների արժեզրկումից վերջնական պահուստը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:
- ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների սկզբնական պահուստը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	ՀՀՄՍ 39 համաձայն վարկերի գծով կորուստների պահուստ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերա-չափում	ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստներ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Արժեզրկումից պահուստ</i>			
Դրամական միջոցներ	-	97	97
ՀՀՄՍ 39-ի համաձայն վարկեր և դեբիտորական պարտքեր/ ՖՀՄՍ 9-ի համաձայն ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվներ	1,280,649	182,410	1,463,059
Այլ ակտիվներ	-	5,155	5,155
Ընդամենը արժեզրկումից պահուստ	<u>1,280,649</u>	<u>187,662</u>	<u>1,468,311</u>

7 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Հաճախորդներին տրված վարկեր	7,849,608	6,382,666
Եկամուտներ բանկային հաշիվներից	155	196
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	<u>7,849,763</u>	<u>6,382,862</u>
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	527,489	383,322
Վարկեր և փոխառություններ	1,785,440	1,929,993
Թողարկված պարտքային արժեթղթեր	43,142	19,590
Վարձակալության գծով պարտավորություններ	52,498	-
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	<u>2,408,569</u>	<u>2,332,905</u>

8 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Ապահովագրական գործակալի գործունեությունից	466	243
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	26	-
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	492	243
Դրամարկղային գործառնություններ	3,417	2,088
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	1,400	7,041
Վարկային գծի տրամադրման միջնորդավճար	4,183	14,048
Այլ վճարներ	398	80
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	9,398	23,257

9 Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	294,736	209,724
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթային վերագնահատումից զուտ եկամուտ	39,300	(13,710)
Ընդամենը արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ	334,036	196,014

10 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Տույժերից և տուգանքներից եկամուտ	25,715	92,661
Այլ եկամուտներ	610	4,900
Ընդամենը այլ եկամուտներ	26,325	97,561

11 Արժեզրկման ծախս/(հակադարձում)

Հազար ՀՀ դրամ

2019

Ծանոթ.	12-ամսյա ականալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ականալվող պարտքային կորուստներ		Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ականալվող պարտքային կորուստներ		Ընդամենը
Դրամական միջոցներ	15	(197)	-	-	-	(197)
Վարկեր հաճախորդներին	16	103,627	415,389	1,598,311		2,117,327
Այլ ֆինանսական ակտիվներ	19	16,583	-	-		16,583
Ընդամենը արժեզրկման ծախս		<u>120,013</u>	<u>415,389</u>	<u>1,598,311</u>		<u>2,133,713</u>

Հազար ՀՀ դրամ

2018

Ծանոթ.	12-ամսյա ականալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ականալվող պարտքային կորուստներ		Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ականալվող պարտքային կորուստներ		Ընդամենը
Դրամական միջոցներ	15	100	-	-	-	100
Վարկեր հաճախորդներին	16	(115,740)	143,125	311,099		338,484
Այլ ֆինանսական ակտիվներ	19	(7,565)	-	-		(7,565)
Ընդամենը արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)		<u>(123,205)</u>	<u>143,125</u>	<u>311,099</u>		<u>331,019</u>

12 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ

2019

2018

Աշխատակիցների հատուցումներ՝ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	1,706,051	1,498,400
Անձնակազմի ուսուցման ծախսեր	1,669	346
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	<u>1,707,720</u>	<u>1,498,746</u>

13 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների պահպանման և սպասարկման ծախսեր	31,545	24,981
Գովազդի ծախսեր	25,233	32,949
Գործուղման ծախսեր	5,658	3,545
Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր	12,125	14,947
Գործառնական վարձակալության գծով ծախսեր*	-	143,160
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	7,817	15,582
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	5,040	11,640
Անվտանգության գծով ծախսեր	58,618	56,226
Բռնագանձված գույքի վաճառքից զուտ վնասներ	17,736	-
Ներկայացուցչական ծախսեր	1,579	1,475
Գրասենյակային ծախսեր	36,330	38,023
Ինկասացիոն ծախսեր	6,665	5,236
Ֆինանսական համակարգի հաշտարարին վճարներ	21,087	17,225
Կոմունալ ծախսեր	31,940	31,031
ԱՔՐԱ-ի գծով ծախս	9,142	9,653
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	33,953	28,968
Վարկային պարտավորվածությունների զիջման ծախսեր	-	59,635
Արժեթղթերով գործարքներ	9,384	2,672
Հիմնական միջոցների վաճառքից զուտ վնաս	277	-
Ակտիվների կարճաժամկետ վարձակալության ծախսեր*	25,600	-
Այլ ծախսեր	15,796	11,513
Ընդամենը այլ ծախսեր	355,525	508,461

* Համադրելի տեղեկատվության բացակայությունը պայմանավորված է ՖՀՄՍ 16-ի կիրառմամբ (տես ծանոթագրություն 26):

14 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	378,708
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	(1,051)	-
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում	255,723	(21,927)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	254,672	356,781

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2018թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև:

2019թ. հունիսին փոփոխություններ կատարվեցին ՀՀ հարկային օրենսգրքում: Հետևաբար, 2020թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկի դրույքաչափը նվազեցվել է 20-ից 18% -ի: Այս փոփոխությունները հանգեցրել են Ընկերության հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների վերաչափման գծով 56,943 հազար դրամ վնասի, որը ճանաչվել է 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում:

Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% (2018: 20%) հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	Արդյունավետ դրույքաչափ		Արդյունավետ դրույքաչափ	
	2019	(%)	2018	(%)
Շահույթ մինչև հարկումը	1,404,270		1,838,103	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	280,854	20	367,621	20
Չնվազեցվող ծախսեր	4,857	-	(11,893)	(1)
Արտարժույթի (դրական)/ բացասական փոխարժեքային տարբերություն	(7,860)	-	2,742	-
Հարկային տոկոսադրույքի փոփոխման ազդեցություն	(23,179)	(2)	-	-
Շահութահարկի այլ արտոնություններ	-	-	(1,689)	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	254,672	18	356,781	19

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019				
	31 դեկտեմբերի 2018	Շահույթում կամ վնասում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ	(13,067)	13,067	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	36,482	(703,769)	(667,287)	-	(667,287)
Հիմնական միջոցներ	-	17,740	17,740	17,740	-
Հարկային վնաս	-	428,636	428,636	428,636	-
Այլ ակտիվներ	(7,023)	5,677	(1,346)	-	(1,346)
Վարձակալության գծով պարտավորություններ	-	(13,134)	(13,134)	-	(13,134)
Այլ պարտավորություններ	30,734	(3,940)	26,794	26,794	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	47,126	(255,723)	(208,597)	473,170	(681,767)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018					
	31 դեկտեմբերի 2017	ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցու- թյունը	Շահույթում կամ վնասում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ	-	19	(13,086)	(13,067)	-	(13,067)
Հաճախորդներին տրված վարկեր	(37,154)	36,482	37,154	36,482	36,482	-
Այլ ակտիվներ	-	1,031	(8,054)	(7,023)	-	(7,023)
Վարկեր և փոխառություններ	3,209	-	(3,209)	-	-	-
Այլ պարտավորություններ	21,612	-	9,122	30,734	30,734	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(12,333)	37,532	21,927	47,126	67,216	(20,090)

15 Դրամական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Կանխիկ դրամական միջոցներ	1,619,539	1,292,168
Բանկային հաշիվներ	395,709	492,811
	2,015,248	1,784,979
Արժեզրկումից պահուստներ	-	(197)
Ընդամենը դրամական միջոցներ	2,015,248	1,784,782

Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	
		Ընդամենը
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	197	97
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(197)	100
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	197

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյական արժեքի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում այս աղյուսակում:

2019թ. ընթացքում Ընկերությունը չի իրականացրել անկանխիկ գործառնություններ վարկային պարտավորությունների մարումներ գրավների բռնագանձման միջոցով (2018թ. ընթացքում իրականացրել է անկանխիկ գործառնություններ վարկային պարտավորությունների մարումներ գրավների բռնագանձման միջոցով 15,950 հազար դրամ գումարի չափով):

2019թ. ընթացքում Ընկերությունն ավելացրել է բաժնետիրական կապիտալը 4,000,000 հազար դրամով նախորդ հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության բաժնետերերից ներգրաված փոխառությունների հաշվին:

16 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			31 դեկտեմբերի 2018թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>						
Հիփոթեքային վարկեր	4,854,811	(176,656)	4,678,155	4,300,357	(136,993)	4,163,364
Սպառողական վարկեր	30,706,766	(3,976,763)	26,730,003	22,503,549	(1,224,167)	21,279,382
<i>Առևտրային վարկեր</i>						
Ֆինանսական կազմակերպություններ	902,476	(2,047)	900,429	-	-	-
Գյուղատնտեսություն	2,148,528	(163,778)	1,984,750	1,380,739	(110,425)	1,270,314
Այլ	684,061	(14,519)	669,542	953,967	(45,239)	908,728
Ընդամենը	39,296,642	(4,333,763)	34,962,879	29,138,612	(1,516,824)	27,621,788

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 5,913 հազար դրամ (2018թ.՝ 37,045 հազար դրամ): Ընկերությունը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է ՀՀ դրամով վարկերի համար 29.58% (2018թ.՝ 25.80%) և ԱՄՆ դոլարով վարկերի համար 12.61% (2018թ.՝ 13.46%):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թվով տասը վարկառուներին տրամադրված վարկերի գումարը կազմում է 1,442,895 հազար դրամ (2018թ.՝ 664,777 հազար դրամ), ինչը կազմում է համախառն վարկային պորտֆելի 4.31%-ը (2018թ.՝ 2.28%-ը): Նշված գումարների գծով արժեզրկումից պահուստը կազմում է 55,827 հազար դրամ (2018թ.՝ 103,245 հազար դրամ): Տաս վարկառուներից մեկը հանդիսանում է Ընկերության հետ կապակցված ֆինանսական կազմակերպություն, որին տրամադրված վարկը կազմում է 902,476 հազար դրամ, պահուստը 2,047 հազար դրամ (ծանոթագրություն 27):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

2019

	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	251,323	697,839	411,998	1,361,160
<i>Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝</i>				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	5,486	(5,486)	-	-
- ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(5,940)	10,864	(4,924)	-
- ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(10,423)	(71,164)	81,587	-
<i>Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում</i>	(206,216)	(530,405)	756,128	19,507
<i>Նոր վարկերի կորուստների գծով պահուստների վերաչափում</i>	299,464	943,032	815,831	2,058,327
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	714,425	714,425
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	333,694	1,044,680	2,775,045	4,153,419

	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
<i>Առևտրային վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	91,777	46,101	17,786	155,664
<i>Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝</i>				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	-	-	-	-
- ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(207)	207	-	-
- ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(845)	-	845	-
<i>Կորուստների գծով պահուստների զույգ վերաչափում</i>	(70,640)	(40,745)	3,236	(108,149)
<i>Նոր վարկերի կորուստների գծով պահուստների վերաչափում</i>	81,019	43,507	23,116	147,642
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(14,813)	(14,813)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	101,104	49,070	30,170	180,344

	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	301,629	642,591	360,753	1,304,973
<i>Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝</i>				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	39,485	(39,485)	-	-
- ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(11,792)	37,529	(25,737)	-
- ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(4,631)	(60,440)	65,071	-
<i>Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում</i>	(73,368)	117,644	453,980	498,256
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(442,069)	(442,069)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	251,323	697,839	411,998	1,361,160

	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
<i>Առևտրային վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	134,390	23,279	417	158,086
<i>Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝</i>				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	2,310	(2,310)	-	-
- գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(921)	921	-	-
- գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(1,630)	(1,270)	2,900	-
<i>Կորուստների գծով պահուստների զույգ վերաչափում</i>	(42,372)	25,481	(142,881)	(159,772)
Զուտ վերականգնում	-	-	157,350	157,350
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>91,777</u>	<u>46,101</u>	<u>17,786</u>	<u>155,664</u>

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել պորտֆելի համախառն չափի աճով և պարտքային ռիսկի աճի հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 31.1.2 ծանոթագրությունում:

Ինչպես նշված է 28 ծանոթագրությունում, 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է 30 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 31 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է 27 ծանոթագրությունում:

17 Հիմնական միջոցներ

	Հոդ և շենքեր	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Փոխադրա- միջոց- ներ	Համա- կարգ- չային տեխ- նիկա	Գույք և գրասե- նյակային տեխնիկա	Այլ հիմնա- կան միջոց- ներ	Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցներում	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>								
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	87,764	-	148,591	167,829	77,911	97,069	104,367	683,531
Ավելացում	3,475	-	-	55,359	17,851	22,883	2,654	102,222
Օտարում	-	-	-	(8,469)	(630)	(1,534)	(1,163)	(11,795)
Վերադասակարգում	38,891	-	-	-	-	-	(38,891)	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	130,130	-	148,591	214,720	95,132	118,418	66,967	773,958
ՖՀՄՍ 16-ի կիրառում	-	487,421	-	-	-	-	-	487,421
Ավելացում	-	361,127	356	38,891	17,102	27,188	24,256	468,920
Օտարում	-	-	-	(3,667)	(2,579)	(549)	-	(6,795)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	130,130	848,548	148,947	249,944	109,655	145,057	91,223	1,723,504
<i>Կուրսակված մաշվածություն</i>								
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	12,996	-	124,196	104,660	39,786	30,545	11,627	323,810
Տարվա ծախս	6,512	-	6,431	86,186	6,629	16,366	3,409	125,533
Օտարում	-	-	-	(8,468)	(630)	(1,534)	(329)	(10,961)
Վերադասակարգում	189	-	-	-	-	-	(189)	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,697	-	130,627	182,378	45,785	45,377	14,518	438,382
Տարվա ծախս	6,538	98,555	6,338	42,524	12,842	13,754	3,463	184,014
Օտարում	-	-	-	(3,667)	(2,302)	(549)	-	(6,518)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,235	98,555	136,965	221,235	56,325	58,582	17,981	615,878
<i>Հաշվեկշիռային արժեք</i>								
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	110,433	-	17,964	32,342	49,347	73,041	52,449	335,576
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	103,895	749,993	11,982	28,709	53,330	86,475	73,242	1,107,626

Վարձակալված հիմնական միջոցներ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալված մասնաճյուղերի տարածքների հետ կապված 749,993 հազար դրամ գումարով օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներառված են հիմնական միջոցներում (տես՝ ծանոթագրություն 26):

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 290,274 հազար դրամ (2018թ. 182,120 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 103,895 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հող և շենքեր գրավադրած են մեկ առևտրային բանկում՝ որպես վարկային պարտավորությունների ապահովման միջոց (տես՝ ծանոթագրություն 20):

Պայմանագրային պարտավորություններ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի 2,187 հազար դրամի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների գնման գծով (2018թ.՝ 3,136 հազար դրամ):

18 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Լիցենզիաներ և վստահագրեր	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	32,120	8,424	40,544
Ավելացում	17,635	-	17,635
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	49,755	8,424	58,179
Ավելացում	8,183	-	8,183
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	57,938	8,424	66,362
<i>Կուտակված ամորտիզացիա</i>			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	6,932	2,175	9,107
Մասհանումներ	17,809	847	18,656
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,741	3,022	27,763
Մասհանումներ	6,559	848	7,407
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,300	3,870	35,170
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,014	5,402	30,416
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,638	4,554	31,192

2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվների գնման գծով (2018թ. չունի):

19 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	21,209	20,094
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(2,610)	(9,143)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	18,599	10,951
Մատակարարներին տրված կանխավճարներ հիմնական միջոցների և նյութական ակտիվների ձեռքբերման համար	23,954	16,812
Կանխավճարներ հարկերի և տուրքերի գծով	236	-
Առհաշիվ տրված գումարներ աշխատակիցներին	5,212	63
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	185	331
Պաշարներ	16,993	10,773
Բռնագանձված ակտիվներ	114,779	149,780
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	161,359	177,759
Ընդամենը այլ ակտիվներ	179,958	188,710

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019	2018
	Ակնկալվող պարտքային կորուստներ	Ակնկալվող պարտքային կորուստներ
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	9,143	5,155
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	16,583	(7,565)
Զուտ (դուրսգրում)/վերականգնում	(23,116)	11,553
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,610	9,143

Տարվա ընթացքում Ընկերության կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Անշարժ գույք	114,779	149,780
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	114,779	149,780

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Ընկերության քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Ընկերությունը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

20 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Վարկեր բանկերից	8,412,779	5,480,917
Վարկեր վարկային կազմակերպություններից	340,813	60,278
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	8,753,592	5,541,195

Բանկերից վարկերն իրենցից ներկայացնում են ՀՀ առևտրային բանկերի վարկերի և վարկային գծերի օգտագործված մասը: Բոլոր վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի 2,638,350 հազար դրամի չափով պարտավորությունն ապահովված է Ընկերության անշարժ գույքերի գրավադրմամբ 103,895 հազար դրամ գումարի չափով (տես՝ ծանոթագրություն՝ 17), իսկ մնացած վարկերը՝ Ընկերության բաժնետերերին և վերջիններիս հետ կապակցված կողմ հադիսացող անձանց պատկանող անշարժ գույքերի գրավով:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.46% (2018թ.՝ 9.38%), իսկ ԱՄՆ դոլարով պարտավորությունների գծով՝ 7.38% (2018թ.՝ 7.79%):

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2018թ.՝ նույնպես):

21 Փոխառություններ և վարկեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Փոխառություններ բաժնետերերից	17,709,663	18,322,681
Վարկեր ՀՀ կառավարությունից	140,107	170,554
Այլ փոխառություններ	139,185	201,309
Ընդամենը փոխառություններ և վարկեր	17,988,955	18,694,544

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամով փոխառությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 9.56% (2018թ.՝ 10.78%), ԱՄՆ դոլարով փոխառությունների համար՝ 6.48% (2018թ.՝ 6.19%):

ՀՀ կառավարությունից փոխառությունները ներառում են վարկեր՝ ստացված Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից «Գյուղատնտեսական վարկեր» ծրագրի շրջանակներում:

Փոխառություններն ու վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2018թ.՝ նույնպես):

22 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Պարտատոմսեր	599,148	603,387
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	599,148	603,387

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության թողարկված տոկոսային պարտատոմսերն ունեն հետևյալ պայմանները.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը			%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
		Քանակ					
20.07.2018	AMD	10,000	10,000	10.0	20.07.2020	100,000,000	
20.07.2018	USD	100	10,000	6.9	20.07.2020	1,000,000	

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերն ունեն 10.25% (2018թ.՝ 10.25%) միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք ՀՀ դրամով պարտատոմսերի համար, ԱՄՆ դոլարով պարտքային արժեթղթերի համար՝ 7.02% (2018թ.՝ 7.02%):

Տարվա ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս:

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2018թ.՝ նույնպես):

23 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Վճարվելիք գումարներ	116,369	95,840
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	163,568	134,773
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	279,937	230,613
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	50,538	44,495
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	50,538	44,495
Ընդամենը այլ պարտավորություններ	330,475	275,108

24 Սեփական կապիտալ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 7,000,000 հազար դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,400,000 հասարակ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով:

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	2019թ.	2018թ.	Բաժնեմասը վճարված կապիտալում, %
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Վճարված բաժնետիրական կապիտալ	
Վիգեն Բաղայան	3,500,000	1,500,000	50%
Վահե Բաղայան	3,500,000	1,500,000	50%
	7,000,000	3,000,000	100%

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել (2018թ.՝ ոչինչ):

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերն ունեն մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2019թ. ընթացքում Ընկերությունն ավելացրել է բաժնետիրական կապիտալը 4,000,000 հազար դրամով (2018թ.՝ 1,000,000 հազար դրամով):

2019թ. ընթացքում Ընկերությունը չի վճարել է շահաբաժիններ (2018թ. տարեկան արդյունքներով վճարել է 910,000 հազար դրամի շահաբաժին):

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումից հետո պետք է ստեղծի գլխավոր պահուստ՝ ընդհանուր ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով՝ կանոնադրական

կապիտալի 15%-ի չափով: Կանոնադրությամբ նախատեսվում է պահուստի հատկացում ոչ պակաս քան Ընկերության տարեկան շահույթի 5%-ի չափով:

25 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ընկերությանը ներկայացվող դատական հայցերի առումով Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխավորություններ

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով՝ Ընկերությունը որպես վարձակալ (Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն)

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

Մինչև 1 տարի

Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով

31 դեկտեմբերի 2018թ.

21,062

21,062

Կապիտալ բնույթի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 17 և 18 ծանոթագրություններում:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Ընկերությունը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

26 Վարձակալություններ

Ընկերությունը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Ընկերությունը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տես ծանոթագրություն 17):

Գույքի վարձակալությունները երկարաժամկետ են և ունեն մինչև 10 տարի վարձակալության ժամկետ: Վարձակալության վճարները ֆիքսված են:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Ընկերությունը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Ընկերությանն արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Ընկերությունը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ստորև աղյուսակում նկարագրված են Ընկերության վարձակալական գործառույթներն ըստ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված օգտագործման իրավունքի ձևով ակտիվների տիպերի՝

Վարձակալված օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Վարձակալված օգտագործման իրավունքի ձևով ակտիվների քանակ		Մնացորդային վարձակալական ժամկետ	Երկարացման հնարավորությամբ վարձակալությունների քանակ	Ձեռք բերման հնարավորությամբ վարձակալությունների քանակ	Գործակցին կապված փոփոխուն վարձակալությունների քանակ	Դադարեցման հնարավորությամբ վարձակալությունների քանակ
	Մնացորդային ժամկետ	Մնացորդային ժամկետ	Մնացորդային ժամկետ	Մնացորդային ժամկետ	Մնացորդային ժամկետ	Մնացորդային ժամկետ	Մնացորդային ժամկետ
Գրասենյակային շենք	1	10 տարի	10 տարի	1	-	-	-
Մասնաճյուղեր	26	1.5-9 տարի	5 տարի	9	-	-	17

Ստորև ներկայացված է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ըստ դասերի.

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ		Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ավելացում	Մաշվածություն	Ավելացում	Մաշվածություն
Գրասենյակային շենք	-	310,636	(5,867)	304,769
Մասնաճյուղեր	487,421	50,491	(92,688)	445,225
Ընդամենը	487,421	361,127	(98,555)	749,993

Վարձակալության գծով պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.
ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը (հունվարի 1-ի դրությամբ)	487,421
Ավելացում	361,127
Տոկոսի կուտակում	52,498
Վճարումներ	(125,465)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	775,581

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալված մասնաճյուղերի և գրասենյակային տարածքների հետ կապված 749,993 հազար դրամ գումարով օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներառված են հիմնական միջոցներում (տես՝ ծանոթագրություն 17):

2019թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 10% (2018թ.՝ չի կիրառվել):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 30-ում:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գործառնական վարձակալության գծով պարտավորվածությունները տես՝ ծանոթագրություն 25:

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Ընկերությունն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի կարճաժամկետ վարձակալությունների գծով ապագա պարտավորվածություններ, և այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարը կազմում է 11,720 հազար դրամ:

27 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը,

ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերությունը վերջնական վերահսկող են հանդիսանում Բաղայան եղբայրները:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում:

Կապակցված կողմերի հետ գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

	2019թ.		2018թ.	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
<i>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</i>				
<i>Հաճախորդներին տրված վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ (համախառն)	-	973	-	-
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	917,345	28	-	7,113
Տարվա ընթացքում մարված վարկեր	(14,869)	(1,001)	-	(6,140)
Մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ (համախառն)	902,476	-	-	973
Արժեզրկումից պահուստ	(2,047)	-	-	(14)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	900,429	-	-	959
<i>Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ</i>				
<i>Վարձակալված օֆիսային տարածքներ</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
ՖՀՄՍ 16-ի կիրառում	473,353	-	-	-
Տարվա ընթացքում վարձակալված	361,127	-	-	-
Տարվա ընթացքում ամորտիզացված	(88,368)	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	746,112	-	-	-
<i>Վարկեր և փոխառություններ</i>				
<i>Փոխառություններ բաժնետերերից</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	18,271,073	-	15,862,157	-
Տարվա ընթացքում ստացված	31,450,653	-	16,031,830	-
Տարվա ընթացքում վճարված	(32,012,063)	-	(13,622,914)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,709,663	-	18,271,073	-

Հազար ՀՀ դրամ

	2019թ.		2018թ.	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
<i>Թողարկված պարտքային արժեթղթեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	389	-	-
Տարվա ընթացքում թողարկված	-	25	-	389
Տարվա ընթացքում վճարված	-	(28)	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	386	-	389
<i>Վարձակալության գծով պարտավորություններ</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
ՖՀՄՍ 16-ի կիրառում	473,354	-	-	-
Տարվա ընթացքում ստանձնած	361,127	-	-	-
Տարվա ընթացքում զեղչատուկուսի մաշեցում	51,670	-	-	-
Տարվա ընթացքում մարված	(114,665)	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	771,486	-	-	-
<i>Ներգրավված վարկերի ապահովան համար անշարժ գույքի գրավադրում</i>				
	4,889,821	-	-	-
<i>Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյուքների մասին հաշվետվություն</i>				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	17,897	20	-	198
Արժեզրկման (ծախս)/հակադարձում	(2,047)	14	-	(14)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիա	(88,368)	-	-	-
Տոկոսային ծախսեր փոխառությունների գծով	(1,762,800)	-	(1,855,947)	-
Տոկոսային ծախսեր թողարկված արժեթղթերի գծով	-	(25)	-	(13)
Տոկոսային ծախսեր վարձակալության գծով	(51,670)	-	-	-
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	-	(114,120)	-
Ակտիվների կարճաժամկետ վարձակալության ծախսեր	(15,960)	-	-	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2019թ.	2018թ.
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ պարգևատրումներ	85,360	77,522
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	85,360	77,522

28 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):

Մակարդակ 2՝ Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

28.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ	-	2,015,248	-	2,015,248	2,015,248
Հաճախորդներին տրված վարկեր	-	34,962,879	-	34,962,879	34,962,879
Այլ ֆինանսական ակտիվներ	-	18,599	-	18,599	18,599
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	8,753,592	-	8,753,592	8,753,592
Վարկեր և փոխառություններ	-	17,988,955	-	17,988,955	17,988,955
Թողարկված պարտքային արժեթղթեր	494,645	104,503	-	599,148	599,148
Վարձակալության գծով պարտավորություններ	-	775,581	-	775,581	775,581
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	279,937	-	279,937	279,937

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ	-	1,784,782	-	1,784,782	1,784,782
Հաճախորդներին տրված վարկեր	-	27,621,788	-	27,621,788	27,621,788
Այլ ֆինանսական ակտիվներ	-	10,951	-	10,951	10,951
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	5,541,195	-	5,541,195	5,541,195
Վարկեր և փոխառություններ	-	18,694,544	-	18,694,544	18,694,544
Թողարկված պարտքային արժեթղթեր	498,814	104,573	-	603,387	603,387
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	230,613	-	230,613	230,613

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է՝ ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով, և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են՝ ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք անվանական տոկոսադրույքերը կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 5.5% մինչև 24% տարեկան (2018թ.՝ 10% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Վարկեր և փոխառություններ

Ներգրված վարկերի և փոխառությունների իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող վարկերի համար առաջարկվող դրույքաչափերը:

29 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

2019 և 2018թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնք ներկայացված են զուտ արժեքով կամ կհաշվանցվեն համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրի:

30 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 31.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ	2,015,248	-	2,015,248	-	-	-	2,015,248
Հաճախորդներին տրված վարկեր	346,010	2,871,129	3,217,139	28,775,931	2,969,809	31,745,740	34,962,879
Այլ ֆինանսական ակտիվներ	18,599	-	18,599	-	-	-	18,599
	<u>2,379,857</u>	<u>2,871,129</u>	<u>5,250,986</u>	<u>28,775,931</u>	<u>2,969,809</u>	<u>31,745,740</u>	<u>36,996,726</u>
Պարտավորություններ							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	25,070	2,974,805	2,999,875	5,433,835	319,882	5,753,717	8,753,592
Վարկեր և փոխառություններ	5,108	3,635,159	3,640,267	130,114	14,218,574	14,348,688	17,988,955
Թողարկված պարտքային արժեթղթեր	19,448	579,700	599,148	-	-	-	599,148
Վարձակալության գծով պարտավորություններ	79,900	98,662	178,562	425,595	171,424	597,019	775,581
Այլ ֆինանսական պարտավորություններ	279,937	-	279,937	-	-	-	279,937
	<u>409,463</u>	<u>7,288,326</u>	<u>7,697,789</u>	<u>5,989,544</u>	<u>14,709,880</u>	<u>20,699,424</u>	<u>28,397,213</u>
Զուտ Դիրք	<u>1,970,394</u>	<u>(4,417,197)</u>	<u>(2,446,803)</u>	<u>22,786,387</u>	<u>(11,740,071)</u>	<u>11,046,316</u>	<u>8,599,513</u>
Կուտակված ճեղքվածք	<u>1,970,394</u>	<u>(2,446,803)</u>		<u>20,339,584</u>	<u>8,599,513</u>		

	Ցպահանջ և մինչև 1 ամիս		Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի		5 տարուց ավելի		12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	5 տարուց ավելի	5 տարուց ավելի	5 տարուց ավելի	5 տարուց ավելի	
Ակտիվներ									
Դրամական միջոցներ	1,784,782	-	1,784,782	-	-	-	-	-	1,784,782
Հաճախորդներին տրված վարկեր	361,460	5,387,732	5,749,192	19,222,730	2,649,866	21,872,596	21,872,596	27,621,788	
Այլ ֆինանսական ակտիվներ	10,951	-	10,951	-	-	-	-	-	10,951
	<u>2,157,193</u>	<u>5,387,732</u>	<u>7,544,925</u>	<u>19,222,730</u>	<u>2,649,866</u>	<u>21,872,596</u>	<u>21,872,596</u>	<u>29,417,521</u>	
Պարտավորություններ									
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,684	1,310,640	1,324,324	4,188,031	28,840	4,216,871	4,216,871	5,541,195	
Վարկեր և փոխառություններ	3,218	3,673,448	3,676,666	14,005,128	1,012,750	15,017,878	15,017,878	18,694,544	
Թողարկված պարտքային արժեթղթեր	19,612	583,775	603,387	-	-	-	-	603,387	
Այլ ֆինանսական պարտավորություններ	230,613	-	230,613	-	-	-	-	230,613	
	<u>267,127</u>	<u>5,567,863</u>	<u>5,834,990</u>	<u>18,193,159</u>	<u>1,041,590</u>	<u>19,234,749</u>	<u>19,234,749</u>	<u>25,069,739</u>	
Զուտ Դիրք	<u>1,890,066</u>	<u>(180,131)</u>	<u>1,709,935</u>	<u>1,029,571</u>	<u>1,608,276</u>	<u>2,637,847</u>	<u>2,637,847</u>	<u>4,347,782</u>	
Կուտակված ճեղքվածք	<u>1,890,066</u>	<u>1,709,935</u>		<u>2,739,506</u>	<u>4,347,782</u>				

31 Ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Ռիսկերի կառավարումը Ընկերությունը իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով:

Կարևորագույն ռիսկերն են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Ընկերության Վարչության կողմից՝ ըստ Ընկերության Ընդհանուր ժողովի հաստատած վարկային քաղաքականության և ներքին կանոնակարգերի: Ընկերության վարչության կազմում ընդգրկված են Ընկերության գլխավոր գործադիր տնօրենը,

նրա տեղակալները և գլխավոր հաշվապահը: Ընկերության Վարչությունը նույնականացնում է, գնահատում և միջոցներ է ձեռնարկում զսպելու ֆինանսական ռիսկերը:

Ընկերության խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար: Ընկերության Վարչությունը սահմանում է տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների սակագները: Իրականացնում է գործառնական ռիսկերի կառավարման ընթացիկ աշխատանքները:

Ներքին աուդիտ

Ընկերության կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Ընկերության գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ընկերության Խորհրդին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Ընկերության ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Ընկերության գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

31.1 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, ինչը Ընկերությանը կարող է կորուստներ պատճառել: Պարտքային ռիսկը Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ընկերության պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Ընկերության ղեկավարությանը:

31.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Ընկերության՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 31.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ	2019թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ներքին վարկանիշեր				
<i>Դրամական միջոցներ</i>				
Բարձր	1,619,539	-	-	1,619,539
Ստանդարտ	395,709	-	-	395,709
Համախառն հաշվեկշռային արժեք	2,015,248	-	-	2,015,248
Արժեզրկումից պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	2,015,248	-	-	2,015,248
<i>Հաճախորդներին տրված վարկեր</i>				
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Բարձր	22,099,515	-	-	22,099,515
Ստանդարտ	25,750	4,090,731	-	4,116,481
Ցածր	-	1,484,600	-	1,484,600
Չաշխատող	-	-	7,860,981	7,860,981
Համախառն հաշվեկշռային արժեք	22,125,265	5,575,331	7,860,981	35,561,577
Արժեզրկումից պահուստ	(333,694)	(1,044,680)	(2,775,045)	(4,153,419)
Զուտ հաշվեկշռային արժեք	21,791,571	4,530,651	5,085,936	31,408,158
<i>Հաճախորդներին տրված վարկեր</i>				
<i>Առևտրային վարկեր</i>				
Բարձր	3,389,640	-	-	3,389,640
Ստանդարտ	168	201,635	-	201,803
Ցածր	-	66,557	-	66,557
Չաշխատող	-	-	77,065	77,065
Համախառն հաշվեկշռային արժեք	3,389,808	268,192	77,065	3,735,065
Արժեզրկումից պահուստ	(101,104)	(49,070)	(30,170)	(180,344)
Զուտ հաշվեկշռային արժեք	3,288,704	219,122	46,895	3,554,721

Հազար ՀՀ դրամ	2018թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ներքին վարկանիշեր				
<i>Դրամական միջոցներ</i>				
Բարձր	1,292,168	-	-	1,292,168
Ստանդարտ	492,811	-	-	492,811
Համախառն հաշվեկշռային արժեք	1,784,979	-	-	1,784,979
Արժեզրկումից պահուստ	(197)	-	-	(197)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,784,782	-	-	1,784,782
<i>Հաճախորդներին տրված վարկեր</i>				
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Բարձր	21,074,226	-	-	21,074,226
Ստանդարտ	62,171	2,901,583	-	2,963,754
Ցածր	913	1,910,826	-	1,911,739
Չաշխատող	-	-	854,187	854,187
Համախառն հաշվեկշռային արժեք	21,137,310	4,812,409	854,187	26,803,906
Արժեզրկումից պահուստ	(251,323)	(697,839)	(411,998)	(1,361,160)
Զուտ հաշվեկշռային արժեք	20,885,987	4,114,570	442,189	25,442,746
<i>Հաճախորդներին տրված վարկեր</i>				
<i>Առևտրային վարկեր</i>				
Բարձր	2,042,696	-	-	2,042,696
Ստանդարտ	328	213,119	-	213,447
Ցածր	-	27,496	-	27,496
Չաշխատող	-	-	51,067	51,067
Համախառն հաշվեկշռային արժեք	2,043,024	240,615	51,067	2,334,706
Արժեզրկումից պահուստ	(91,777)	(46,101)	(17,786)	(155,664)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,951,247	194,514	33,281	2,179,042

31.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Ընկերության՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Ընկերությունը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Ընկերությունը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Ընկերությունը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց՝ վարկերի 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց՝ 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունն ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունն ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր- գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Էական վարթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Ընկերության կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցե մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Ընկերությունը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են դեֆոլտի ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված) գործոններով, որոնք մատնանշում են դեֆոլտի ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հաճախորդներին տրված վարկերի, վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորությունների համար միջին 12-ամսյա PD-ները ըստ յուրաքանչյուր վարկանիշի.

Հազար ՀՀ դրամ	12-ամսյա PD-ի միջակայք	
	Վարկանիշ	
Հիփոթեքային և սպառողական վարկեր	Ստանդարտ	0.51-38.23%
	Ոչ ստանդարտ	29.75-86.86%
	Չաշխատող	100%
Վարկեր կոմերցիոն հաճախորդներին	Ստանդարտ	3.49%
	Ոչ ստանդարտ	45.37%
	Չաշխատող	100%

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Ընկերության գնահատման համակարգի քարտեզագրումը և գործընկերների արտաքին վարկանիշները.

Միջազգային արտաքին վարկանիշային գործակալության (S&P) վարկանիշ	Վարկանիշ	12-ամսյա PD
AAA -ից A-	Բարձր	0.51-1.38%
BBB+ -ից B-	Ստանդարտ	18.53-34.78%
CCC+ to CC	Ոչ ստանդարտ	51.66-91.78%
D	Չաշխատող	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Ընկերությունը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և բանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեթղթ/իրական արժեթղթ՝ այլ համապատասխան ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Ընկերությունը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),

- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Դեֆոլտի սահմանում և «առողջացում»

Ընկերությունը համարում է ֆինանսական գործիքը դեֆոլտի ենթարկված, և, հետևաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Ընկերությունը միջբանկային հաշիվները համարում է դեֆոլտի ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Ընկերությունը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Ընկերությունը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ դեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն դեֆոլտում է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Ընկերության քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Ընկերության՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չափաստող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Ընկերությունը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Ընկերությունը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ճախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Ընկերության՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Ընկերությունը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Ընկերությունը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.4 ծանոթագրությունում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Փուլ 2-ում և Փուլ 3-ում ներառված ակտիվները, որոնք փոփոխվել են, և, հետևաբար, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համարվում են վերանայված՝ Ընկերության կողմից փոփոխությունների գծով կրած կորուստների հետ միասին:

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեք	28,123	221,444
Փոփոխությունից զուտ վնաս	(9,503)	(70,969)

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտ հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար՝ սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական գեղջերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Դեֆոլտի դեպքում ռիսկի փակ գտնվող գումար (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար դեֆոլտի ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում դեֆոլտի պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ

Ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման հիմնվելով Ընկերության դեֆոլտների վերջին տվյալների վերլուծության վրա:

Կանխատեսվող տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Ընկերությունը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Ընկերությունը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը ակնկալվող պարտքային կորուստների վրա հաշվարկելու համար Ընկերությունն օգտագործում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակ որպես ելակետային տվյալներ իր մոդելների համար, այդ թվում՝

- ՀՆԱ-ի աճ (արտահայտված ՀՀ դրամով),
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանֆերտներ,
- Գործազրկության մակարդակ,
- Ընկերության չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում
- Առևտուր
- Արդյունաբերություն (աճի տեմպ %)

Արժեզրկման գնահատման քաղաքականությունը մինչև 2019թ. հունվարի 1

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական միջոցների հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Ընկերությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական միջոցների հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական

իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

31.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ	ՏՀՁԿ	Ոչ ՏՀՁԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ	2,015,248	-	-	2,015,248
Հաճախորդներին տրված վարկեր	34,075,891	884,432	2,556	34,962,879
Այլ ֆինանսական ակտիվներ	18,599	-	-	18,599
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>36,109,738</u>	<u>884,432</u>	<u>2,556</u>	<u>36,996,726</u>
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>28,929,342</u>	<u>486,814</u>	<u>1,365</u>	<u>29,417,521</u>

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի.

Հազար ՀՀ դրամ	Ֆինան- սական հատված	Արդյու- նաբերու- թյուն	Շինա- րարու- թյուն	Առևտուր	Սպառու- ղական ուղորս	Գյուղա- տնտե- սություն	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ	2,015,248	-	-	-	-	-	-	-	2,015,248
Հաճախորդներին տրված վարկեր	900,429	149,642	16,034	377,004	26,730,003	1,984,750	4,678,156	126,861	34,962,879
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	-	18,599	18,599
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>2,915,677</u>	<u>149,642</u>	<u>16,034</u>	<u>377,004</u>	<u>26,730,003</u>	<u>1,984,750</u>	<u>4,678,156</u>	<u>145,460</u>	<u>36,996,726</u>
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1,784,782</u>	<u>166,185</u>	<u>77,299</u>	<u>490,492</u>	<u>21,279,381</u>	<u>1,270,314</u>	<u>4,163,365</u>	<u>185,703</u>	<u>29,417,521</u>

31.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևյալն են.

- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք,
- գործառնական ակտիվներ, շրջանառվող միջոցներ,
- ավտոմեքենաներ
- ոսկի
- երաշխիքներ:

Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշտության դեպքում, ըստ հիմնական համաձայնագրի, պահանջում լրացուցիչ գրավ:

Ընկերությունը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի կորուստների գծով պահուստը ճանաչված չէ գրավի առկայության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Ընկերությունը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Անշարժ գույք	5,711,362	5,666,805
Շարժական գույք	154,097	80,084
Ոսկու գրավ	31,940,505	22,819,713
Խմբակային երաշխավորությամբ	1,098,595	487,780
Առանց ապահովության	392,083	84,230
Ընդամենը վարկեր (համախառն)	39,296,642	29,138,612

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

31.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Ընկերությունը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել առևտրային պորտֆել: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Ընկերությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

31.2.1 Շուկայական ռիսկ՝ Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքների արժեքը տատանվում է արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2019թ.		2018թ.	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	+10	(148,095)	+10	(21,629)
ԱՄՆ դոլար	(10)	148,095	(10)	21,629
Եվրո	+10	33,875	+10	9,557
Եվրո	(10)	(33,875)	(10)	(9,557)

Ընկերության արտաբյուջայի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2019թ.

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ	1,064,707	750,660	199,881	2,015,248
Հաճախորդներին տրված վարկեր	27,052,919	7,909,960	-	34,962,879
Այլ ֆինանսական ակտիվներ	17,310	1,289	-	18,599
	<u>28,134,936</u>	<u>8,661,909</u>	<u>199,881</u>	<u>36,996,726</u>
<i>Պարտավորություններ</i>				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	340,813	8,412,779	-	8,753,592
Վարկեր և փոխառություններ	17,122,961	865,994	-	17,988,955
Թողարկված պարտքային արժեթղթեր	104,510	494,638	-	599,148
Վարձակալության գծով պարտավորություններ	775,581	-	-	775,581
Այլ ֆինանսական պարտավորություններ	279,879	58	-	279,937
Ընդամենը	<u>18,623,744</u>	<u>9,773,469</u>	<u>-</u>	<u>28,397,213</u>
Զուտ դիրք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>9,511,192</u>	<u>(1,111,560)</u>	<u>199,881</u>	<u>8,599,513</u>
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	22,065,151	7,071,991	280,379	29,417,521
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	17,885,032	7,184,707	-	25,069,739
Զուտ դիրք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>4,180,119</u>	<u>(112,716)</u>	<u>280,379</u>	<u>4,347,782</u>

Ազատ փոխարկելի արտաբյուջայի ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ռուսական ռուբլուն:

31.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի գսպման նպատակով Ընկերությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան:

Ստորև ներկայացվում է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես Ծանոթագրություն 30-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

31 դեկտեմբերի 2019թ.

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	31 դեկտեմբերի 2019թ.		5 տարուց ավելի	Ընդամենը	Հաշվեկշռա- յին արժեք
		1-12 ամիս	1-5 տարի			
<i>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</i>						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	99,050	3,419,326	6,199,889	358,444	10,076,709	8,753,592
Վարկեր և փոխառություններ	6,363	6,611,088	5,266,316	21,209,977	33,093,744	17,988,955
Թողարկված պարտքային արժեթղթեր	60,624	601,332	-	-	661,956	599,148
Վարձակալության գծով պարտավորություններ	14,100	141,543	569,597	377,026	1,102,266	775,581
Այլ ֆինանսական պարտավորություններ	279,937	-	-	-	279,937	279,937
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	460,074	10,773,289	12,035,802	21,845,447	45,214,612	28,397,213

31 դեկտեմբերի 2018թ.

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	31 դեկտեմբերի 2018թ.		5 տարուց ավելի	Ընդամենը	Հաշվեկշռա- յին արժեք
		1-12 ամիս	1-5 տարի			
<i>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</i>						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,684	1,349,180	5,012,036	82,773	6,457,673	5,541,195
Վարկեր և փոխառություններ	835,550	4,187,627	17,503,123	1,617,961	24,144,261	18,694,544
Թողարկված պարտքային արժեթղթեր	19,612	690,276	-	-	709,888	603,387
Այլ ֆինանսական պարտավորություններ	230,613	-	-	-	230,613	230,613
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	1,099,459	6,227,083	22,515,159	1,700,734	31,542,435	25,069,739

31.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Ընկերության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Ընկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Ընկերության Խորհրդին:

32 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2019թ.

	Պարտավորություններ ֆինանսական կազմակերպ. նկատմամբ	Վարկեր և փոխառու- թյուններ	Թողարկ- ված արժե- թղթեր	Վարձակալության գծով պարտավո- րություններ	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	5,541,195	18,694,544	603,387	-	24,839,126
Դրամային հոսքերից	3,274,220	3,299,483	-	(125,465)	6,448,238
Ստացված գումար	15,677,735	31,725,566	-	-	47,403,301
Վճարված գումար	(12,403,515)	(28,426,083)	-	-	(40,829,598)
Ոչ դրամային հոսքերից	(61,823)	(4,005,072)	(4,239)	901,046	829,912
ՖՀՄՍ 16-ի կիրառման արդյունք	-	-	-	848,548	848,548
Կապիտալի համալրում	-	(4,000,000)	-	-	-
Տոկոսների հաշվեգրումներ	13,528	-	(108)	52,498	65,918
Փոխարժեքային տարբերություն	(75,351)	(5,072)	(4,131)	-	(84,554)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,753,592	17,988,955	599,148	775,581	28,117,276

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2018թ.

	Պարտավորություններ ֆինանսական կազմակերպ. նկատմամբ	Վարկեր և փոխառություններ	Թողարկված արժեթղթեր	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	4,539,471	16,210,959	-	20,750,430
Դրամային հոսքերից	814,693	2,471,657	603,387	3,889,737
Ստացված գումար	13,689,829	16,508,995	607,941	30,806,765
Վճարված գումար	(12,875,136)	(14,037,338)	(4,554)	(26,917,028)
Ոչ դրամային հոսքերից	187,031	11,928	-	198,959
Փոխարժեքային տարբերություն	187,031	11,928	-	198,959
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,541,195	18,694,544	603,387	24,839,126

ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար սահմանել է կանոնադրական կապիտալի նվազագույն չափ 150,000 հազար դրամի չափով և այն ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար, որոնք իրենց կանոնադրության համաձայն կանխիկ ձևով գնում և (կամ) վաճառում են արտարժույթ, նորմատիվային կապիտալի նվազագույն չափ՝ մեկ միլիարդ ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ

Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա վնասը, գլխավոր պահուստը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2019 և 2018թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	2019թ.	2018թ.
Հիմնական կապիտալ	6,859,494	4,643,882
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	6,859,494	4,643,882
Ռիսկով կշռված ակտիվներ	37,823,486	32,103,855
Կապիտալի համարժեքության նորմատիվ	18.1%	14.5%

ՀՀ կենտրոնական բանկի կողմից կանխիկ ձևով արտարժույթի առուվաճառք իրականացնող, ինչպես նաև պարտատոմս թողարկող վարկային կազմակերպությունների համար սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

33 Գործառնական սեզմենտներ

Ընկերության գործառնությունները բավականին ինտեգրված են և կազմում են մեկ գործարար սեզմենտ ՖՀՄՍ 8 Գործառնական սեզմենտներ ստանդարտի պահանջների: Ընկերության գլխավոր գործառնական որոշումներ կայացնող մարմնի կողմից իրականացվում են որոշումներ միասնական արդյունքների հիման վրա, և բացակայում է որևէ գործառնական սեզմենտի առանձնացում ընդհանուր գործառնություններից: Ընկերության ակտիվները հիմնականում տեղաբաշխված են Հայաստանի Հանրապետության տարածքում: Ընկերության եկամուտները ստացվում են Հայաստանյան աղբյուրներից:

34 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համաճարակ: Կորոնավիրուսի բռնկման վերջնական ազդեցությունն այս պահին անհայտ է, սակայն այն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա: COVID-19-ի հետ կապված զարգացող իրավիճակը կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ընկերության գործառնությունների ծավալի վրա: Այն կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկական անձ, այնպես էլ իրավաբանական անձ հանդիսացող վարկառուների կողմից վարկային հարաբերությունների արդյունքում ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու անկարողությամբ և այլ հանգամանքներով:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ազդեցությունը:

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ
վարկային կազմակերպություն փակ
բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2018թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0012

Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964

Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC

8/1 Vagharshyan Str.

0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964

F + 374 10 260 961

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական

հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

- *ՖՀՄՍ 9-ի առաջին անգամ կիրառումը*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների 4.4 ծանոթագրությունում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ 30.1 ծանոթագրությունում:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՄԽ) թողարկել է ՖՀՄՍ 9-ը «Ֆինանսական գործիքներ», որը փոխարինում է ՀՀՄՍ 39-ին «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»: ՖՀՄՍ 9-ի ներդրման արդյունքում առաջացող հիմնական փոփոխություններն են. Ընկերության արժեզրկումից կորուստները ներկայում հիմնված են ակնկալվող կորուստների, այլ ոչ թե փաստացի կորուստների մոդելի վրա, Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման փոփոխությունները, որոնք մանրամասն նկարագրված են ֆինանսական հաշվետվություններին կից 4.4 ծանոթագրությունում:

Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում, ֆինանսական ակտիվները դասակարգվել են, իսկ արժեզրկումից կորուստները հաշվառվել են համաձայն ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ»: Սա համարվում է աուդիտի առանցքային հարց, քանի որ ՖՀՄՍ 9-ը նոր և բարդ հաշվապահական հաշվառման ստանդարտ է, որը պահանջում է էական դատողություններ ֆինանսական ակտիվների դասակարգման, ինչպես նաև արժեզրկման պահուստների որոշման համար:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են բիզնես մոդելի գնահատումը, որի շրջանակում պահվում են ակտիվները, գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները հիմնավորված են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներով, ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Ընկերության ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք, ինչպես հարկն է, չեն արտացոլվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման և դասակարգման հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- ուսումնասիրվել է Ընկերության՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ,
- դիտարկվել և ստուգվել են Ընկերության՝ բիզնես մոդելի գնահատումը և պայմանագրային այն դրամական միջոցների հոսքերի թեստավորումը, որոնք առաջացնում են «միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ» հանդիսացող դրամական հոսքեր (SPPI թեստ)
- ստուգվել են սկզբնական մնացորդների ճշգրտումների համապատասխանությունը:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- ուսումնասիրվել է Ընկերության՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ,
 - գնահատվել է արժեզրկման պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը, ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, պարտքային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
 - գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը, ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
 - ստուգվել է Ընկերության՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերը տարբեր փուլերում դասակարգելու հիմքերի համապատասխանությունը:
 - որպես ռիսկերի օրինակ՝ ստուգվել է Ընկերության փուլավորման ճշտությունը
 - գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Ընկերության կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
 - Ընկերության ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրության համար մատչելի տեղեկատվություն:
 - ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացրել ընթացակարգեր՝ վարկի որակի էական վատթարացման ռիսկերը գնահատելու և անհատական գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկների ժամանակին բացահայտելու նպատակով:
 - ստուգվել են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում ընդգրկված վարկերի, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Տեսական հիմնավորումները ընդունվել են, իսկ մոդելների մաթեմատիկական ճշտությունը թեստավորվել,
 - արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով ընդունվել են նման տվյալների ընտրության գործընթացը, Ընկերության համար դրա համապատասխանությունը և նման տվյալների նկատմամբ վերահսկողությունն ու կառավարումը,
 - մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ թեստավորում պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել),
 - ստուգվել է սկզբնական մնացորդների ճշգրտումների համապատասխանությունը:
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:


- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:


Կառավարման օղակներում ներգրավված անձանց ներկայացված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հանրային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցերը չպետք է ներկայացվեն աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրանց ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրանց ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Անկախ աուդիտի առաջադրանքի պատասխանատուն հանդիսանում է Արմեն Հովհաննիսյանը:

Գագիկ Գյուլբուդադյան
Տնօրեն



Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու



12 ապրիլի 2019թ.



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2018թ.	2017թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	7	6,382,862	6,002,978
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	7	(2,332,905)	(1,955,434)
Զուտ տոկոսային եկամուտներ		4,049,957	4,047,544
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	8	243	706
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	8	(23,257)	(7,425)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		(23,014)	(6,719)
Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ	9	196,014	144,425
Այլ եկամուտներ	10	97,561	226,666
Արժեզրկման գծով (ծախսեր)/հակադարձում	11	(331,019)	73,068
Անձնակազմի գծով ծախսեր	12	(1,498,746)	(1,396,709)
Հիմնական միջոցների մաշվածություն	17	(125,533)	(91,056)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	18	(18,656)	(3,833)
Այլ ծախսեր	13	(508,461)	(469,866)
Շահույթ մինչև հարկումը		1,838,103	2,523,520
Շահութահարկի գծով ծախս	14	(356,781)	(513,302)
Տարվա շահույթ		1,481,322	2,010,218
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,481,322	2,010,218

13-ից 73 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ	15	1,784,782	1,389,657
Հաճախորդներին տրված վարկեր	16	27,621,788	22,641,666
Հիմնական միջոցներ	17	335,576	359,721
Ոչ նյութական ակտիվներ	18	30,416	31,437
Հետաձգված հարկային ակտիվ	14	47,126	-
Այլ ակտիվներ	19	188,710	163,143
Ընդամենը՝ ակտիվներ		<u>30,008,398</u>	<u>24,585,624</u>
<i>Պարտավորություններ և սեփական կապիտալ</i>			
<i>Պարտավորություններ</i>			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	20	5,541,195	4,539,471
Վարկեր և փոխառություններ	21	18,694,544	16,210,959
Թողարկված պարտքային արժեթղթեր	22	603,387	-
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		250,918	367,278
Հետաձգված հարկային պարտավորություն	14	-	12,333
Այլ պարտավորություններ	23	275,108	233,529
Ընդամենը՝ պարտավորություններ		<u>25,365,152</u>	<u>21,363,570</u>
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	24	3,000,000	2,000,000
Գլխավոր պահուստ		308,755	259,755
Չբաշխված շահույթ		1,334,491	962,299
Ընդամենը՝ սեփական կապիտալ		<u>4,643,246</u>	<u>3,222,054</u>
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		<u>30,008,398</u>	<u>24,585,624</u>

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 8-ից 73 էջերում, ստորագրվել են Ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2019թ. ապրիլի 12-ին:

Հակոբ Ղոնջեյան

Գործադիր տնօրեն

Լիլիա Մովսիսյան

Գլխավոր հաշվապահ

13-ից 73 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,000,000	259,755	962,299	3,222,054
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը (ծանոթ. 6)	-	-	(150,130)	(150,130)
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	2,000,000	259,755	812,169	3,071,924
Տարվա շահույթ	-	-	1,481,322	1,481,322
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,481,322	1,481,322
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,000,000	-	-	1,000,000
Հատկացում պահուստին	-	49,000	(49,000)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(910,000)	(910,000)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	1,000,000	49,000	(959,000)	90,000
Հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,000,000	308,755	1,334,491	4,643,246
Հաշվեկշիռը 2017թ. հունվար 1-ի դրությամբ	2,000,000	90,348	2,333,230	4,423,578
Տարվա շահույթ	-	-	2,010,218	2,010,218
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	2,010,218	2,010,218
Հատկացում պահուստին	-	169,407	(169,407)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(3,211,742)	(3,211,742)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	169,407	(3,381,149)	(3,211,742)
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,000,000	259,755	962,299	3,222,054

13-ից 73 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահույթ մինչև հարկումը	1,838,103	2,523,520
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	144,189	94,889
Հնարավոր կորուստների արժեզրկման ծախս/(փոխհատուցում)	331,019	(73,068)
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթային վերագնահատումից զուտ (օգուտ)/վնաս	13,710	(23,234)
Ստացվելիք տոկոսներ	(47,323)	19,687
Վճարվելիք տոկոսներ	222,075	189,623
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	2,501,773	2,731,417
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Հաճախորդներին տրված վարկեր	(5,451,937)	(4,470,233)
Այլ ակտիվներ	(23,273)	5,215
<i>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Այլ պարտավորություններ	41,574	70,740
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը	(2,931,863)	(1,662,861)
Վճարված շահութահարկ	(495,068)	(401,536)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(3,426,931)	(2,064,397)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2018թ.	2017թ.
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների առք	(102,222)	(158,661)
Ոչ նյութական ակտիվների առք	(17,635)	(4,486)
Հիմնական միջոցների վաճառք	834	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(119,023)	(163,147)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	1,016,786	1,673,234
Վարկեր և փոխառություններ	2,292,294	4,328,188
Պարտքային արժեթղթերի թողարկում	580,657	-
Բաժնետիրական կապիտալի թողարկում	1,000,000	-
Շահաբաժիններ բաժնետերերին	(910,000)	(3,211,742)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	3,979,737	2,789,680
<i>Դրամական միջոցների զուտ անձ</i>	<u>433,783</u>	<u>562,136</u>
Դրամական միջոցներ տարվա սկզբի դրությամբ	1,389,657	820,777
Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը	(197)	-
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	(38,461)	6,744
Դրամական միջոցներ տարվա վերջի դրությամբ (ծանթ. 15)	<u>1,784,782</u>	<u>1,389,657</u>
Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	6,335,539	6,022,665
Վճարված տոկոսներ	(2,130,442)	(1,765,811)

13-ից 73 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2011թ. հոկտեմբերին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2011թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N266 Ա որոշմամբ, թիվ 129 գրանցման վկայականով:

Ընկերությունը ստեղծվել է մանր և միջին ձեռնարկություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց վարկեր և փոխառություններ տրամադրելու նպատակով:

Ընկերության գլխավոր գրասենյակը և 10 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 10 մասնաճյուղերը և 1 ներկայացուցչությունը՝ ՀՀ տարբեր մարզերում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ 0047, ք.Երևան, Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան 20:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական ու տնտեսական բարեփոխումները, և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս բարեփոխումներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միությունում զարգացումներից, որի հետ շարունակվում է ՀՀ տնտեսության ինտեգրումը:

Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ

համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար (նախքան 2018թ. հունվարի 1-ը՝ վաճառքի համար մատչելի ակտիվների համար): Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ին 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերությունը 2017թ-ի համար չի վերաներկայացրել ՖՀՄՍ 9-ի շրջանակում ֆինանսական գործիքների վերաբերյալ համեմատական տեղեկատվությունը: Հետևաբար, 2017թ. համեմատական տեղեկատվությունը ներկայացվում է ՀՀՄՍ 39-ի համաձայն և համադրելի չէ 2018թ. ներկայացված տեղեկատվության հետ: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի ներդրման հետևանքով առաջացած տարբերությունները ճանաչվել են անմիջապես չբաշխված շահույթում և բացահայտվել 6 ծանոթագրությունում:

Դասակարգման և չափման փոփոխություններ

ՖՀՄՍ 9-ի պահանջով դասակարգման և չափման կատեգորիան որոշելու համար բոլոր ֆինանսական ակտիվները, բացառությամբ բաժնային գործիքների և ածանցյալների, պետք է գնահատվեն կազմակերպության ակտիվների կառավարման թիզնես մոդելի և գործիքների պայմանագրային դրամական միջոցների հոսքերի բնութագրերի համադրությամբ:

ՀՀՄՍ 39-ի համաձայն ֆինանսական ակտիվների (իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, վաճառքի համար մատչելի, մինչև մարման ժամկետը պահվող և ամորտիզացված արժեքով) չափման դասակարգումները փոխարինվել են հետևյալով՝

- պարտքային գործիքներ ամորտիզացված արժեքով,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ, որոնց ապաճանաչումից օգուտը կամ վնասը փոխանցվում է շահույթին կամ վնասին,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքներ, որոնց ապաճանաչումից օգուտը կամ վնասը չի փոխանցվում շահույթին կամ վնասին,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական պարտավորությունների հաշվառումը հիմնականում շարունակում է մնալ այնպիսին, ինչպիսին եղել է ՀՀՄՍ 39-ի համաձայն, բացառությամբ կազմակերպության իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորությունների գծով սեփական պարտքային ռիսկի մասով առաջացող օգուտի կամ վնասի հաշվառմանը: Այս փոփոխությունները արտացոլվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և հետագա ապադասակարգման դեպքում չեն տեղափոխվում շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն:

Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգումը բացատրվում է 4.4.2 ծանոթագրությունում: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի կիրառման քանակական ազդեցությունը բացահայտվում է ծանոթագրություն 6-ում:

Արժեզրկման հաշվարկի փոփոխություններ

ՖՀՄՍ 9-ի ներդրումը հիմնավոր կերպով փոխել է Ընկերության՝ վարկերի գծով արժեզրկման հաշվառումը փոխարինելով ՀՀՄՍ 39-ի «կրած կորուստների» մոդելը՝ ապագայի վրա հիմնված «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: ՖՀՄՍ 9-ը պահանջում է Ընկերությունից ճանաչել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չհաշվառվող բոլոր վարկերի և այլ պարտքային ֆինանսական ակտիվների ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով ակնկալվող պարտքային կորուստները: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ բաժնային գործիքների համար արժեզրկումից կորուստ չի հաշվարկվում: Պահուստը որոշվում է ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա, որը կապված է հաջորդ 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ: Եթե ֆինանսական ակտիվը համապատասխանում է գնված կամ ստեղծված արժեզրկված ֆինանսական ակտիվի սահմանմանը, ապա պահուստը հաշվարկվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների փոփոխության հիման վրա:

Ընկերության արժեզրկման գնահատման մանրամասները բացահայտվում են 30.1.2 ծանոթագրությունում: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի կիրառման քանակական ազդեցությունը բացահայտվում է ծանոթագրության 6-ում:

ՖՀՄՍ 7

ՖՀՄՍ 9-ի և ՀՀՄՍ 39-ի միջև տարբերություններն արտացոլելու համար ՖՀՄՍ 7 *Ֆինանսական գործիքներ. բացահայտումներն* արդիականացվել են, և Ընկերությունն այն ընդունել է ՖՀՄՍ 9-ի հետ միասին՝ 2018թ. հունվարի 1-ից սկսվող տարվա համար: Փոփոխությունները ներառում են անցումային բացահայտումներ, ինչպես նկարագրված է ծանոթագրություն 6-ում, ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների վերաբերյալ որակական և քանակական տեղեկատվություն, ինչպիսիք են օգտագործված ենթադրություններն ու ելակետային տվյալները՝ նշված ծանոթագրություն 30.1.2-ում:

Ներքոհիշյալ այլ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2018թ-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» և «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ». պարզաբանումներ (ՖՀՄՍ 15 փոփոխություններ)*
- *«Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման» գործարքների դասակարգում և չափում (ՖՀՄՍ 2 փոփոխություններ)*
- *2014-2017թթ. ՖՀՄՍ տարեկան բարեփոխումներ. ՖՀՄՍ 1 և ՀՀՄՍ 28 փոփոխություններ*
- *ՖՀՄՍԿ 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ»:*

3.5 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ 16, «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը կփոխարինի ՀՀՄՍ 17-ին՝ «Վարձակալություն» և նրա 3 մեկնաբանություններին: Այն ամբողջացնում է ՀՀՄՍ-ի՝ վարձակալության հաշվառման վերանայման երկարաժամկետ ծրագիրը: Վարձակալությունը կարտացոլվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ճանաչելով օգտագործման իրավունքը որպես ակտիվ և վարձակալության գծով պարտավորությունը: ՖՀՄՍ 16-ը նախատեսում է 2 կարևոր պարզեցում ցածրարժեք ակտիվների և կարճաժամկետ՝ 12 ամիս կամ պակաս ժամկետով վարձակալությունների համար:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառում, այնուամենայնիվ, Ընկերությունը որոշել է այն վաղաժամ չկիրառել:

Ղեկավարությունը ներկայում գնահատում է ստանդարտի լիարժեք ազդեցությունը: Մինչ այժմ Ընկերությունը՝

- որոշել է օգտվել գործնական նպատակահարմարությունից՝ չկատարելու առկա վարձակալությունների ամբողջական վերանայում և կիրառելու ՖՀՄՍ 16-ը միայն նոր կամ փոփոխված պայմանագրերի դեպքում: Քանի որ որոշ վարձակալություններ կփոխվեն կամ կնորացվեն 2019թ., Ընկերությունը վերագնահատել է այդ վարձակալությունները և սահմանել, որ դրանք պետք է հաշվառվեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ճանաչելով օգտագործման իրավունքը որպես ակտիվ,
- գնահատել է, որ ամենաէական ազդեցությունը կլինի Ընկերության կողմից ակտիվի՝ որպես օգտագործման իրավունքի և գրասենյակային ու արտադրական շենքերի վարձակալության գծով պարտավորությունը ճանաչելու անհրաժեշտությունը, որոնք ներկայում հաշվարկվում են որպես գործառնական վարձակալություն: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ապագա վարձավճարների նվազագույն չափը կազմել է 21,062 հազար դրամ: Սա կնշանակի, որ վերը նշված արժեքի բնույթը գործառնական վարձակալության ծախսից կփոխվի մաշվածության և տոկոսային ծախսի:
- կանխորոշել է, որ ընթացիկ ֆինանսական վարձակալությունը էական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա,

Ընկերությունը նախատեսում է ներդնել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից սկսած՝ կիրառելով ստանդարտի նորացված հետադարձ մոտեցումը: Ըստ այս մոտեցման՝ ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման համապարփակ ազդեցությունը ճանաչվում է որպես սեփական կապիտալի ճշգրտում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Համեմատական տեղեկատվություն չի ներկայացվում:

Այս անցումային մոտեցման ընտրությունը հանգեցնում է քաղաքականության վերաբերյալ Ընկերության կողմից հետագա որոշումների կայացմանը, քանզի կան մի քանի այլ անցումային

մեղմացումներ, որոնք կարող են կիրառվել: Դրանք վերաբերում են այն վարձակալություններին, որոնք նախկինում գործել են և կարող են կիրառվել վարձակալություն առ վարձակալություն հիմքով: Ընկերությունը ներկայում գնահատում է անցումային այս մյուս մեղմացումների կիրառման ազդեցությունը:

ՖՀՄՍ 16-ը էական փոփոխություններ չի կատարել վարձատուների հաշվառման գծով, և, հետևաբար, Ընկերությունը չի ակնկալում որևէ փոփոխություն այն վարձակալությունների դեպքում, երբ ինքը հանդես է գալիս որպես վարձատու:

Այլ սրանդարտներ

- ՖՀՄՄ 23 «Անորոշություն շահութահարկի մոտեցումների շուրջ» (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից),
- ՖՀՄՍ 9 (փոփոխություններ) «Ֆինանսական գործիքներ» - Կանխավճարների առանձնահատկությունները՝ բացասական փոխհատուցմամբ (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից),
- ՀՀՄՍ 19 (փոփոխություններ) «Աշխատակիցների հատուցումներ - Պլանի փոփոխություն, կրճատում կամ մարում (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից)
- 2015-2017թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից):

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Ե՛վ ՖՀՄՍ 9-ի, և՛ ՀՀՄՍ 39-ի համաձայն՝ տոկոսային եկամուտը հաշվառվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ամորտիզացված արժեքով չափվող բոլոր ֆինանսական գործիքների, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ինչպես նաև ՀՀՄՍ 39-ի համաձայն՝ մինչև մարման ժամկետը պահվող կամ վաճառքի համար մատչելի դասակարկվող տոկոսակիր ֆինանսական ակտիվների տոկոսային եկամուտը նույնպես հաշվառվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքը ճշտությամբ զեղչում է գնահատված ապագա դրամական մուտքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի կամ անհրաժեշտության դեպքում՝ ավելի կարճ ժամանակահատվածի ընթացքում, մինչև ֆինանսական ակտիվի զուտ հաշվեկշռային արժեք:

Արդյունավետ տոկոսադրույքը (և, հետևաբար, ակտիվի ամորտիզացված արժեքը) հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելավճար, գանձումներ և ծախսեր, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են: Ընկերությունը ճանաչում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով հատուցադրույքը, որը ներկայացնում է վարկի ակնկալվող գործողության ժամկետի նկատմամբ կայուն հատուցադրույքի լավագույն

գնահատումը: Այսպիսով, այն ճանաչում է տարբեր փուլերում գանձվող պոտենցիալ տարբեր տոկոսադրույքների ազդեցությունը և գործիքի կյանքի ընթացքում այլ ազդեցությունները (ներառյալ կանխավճարները, տուգանքները և գանձումները):

Եթե ֆինանսական ակտիվի գծով դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ակնկալիքները վերանայվում են պարտքային ռիսկից չբխող պատճառներով, ապա հաշվեկշռում ճշգրտումը հաշվառվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի դրական կամ բացասական ճշգրտում տոկոսային եկամտի ավելացմամբ կամ նվազմամբ: Ճշգրտումը հետագայում ամորտիզացվում է տոկոսային և նմանատիպ եկամտի միջոցով շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս ծանոթագրություն 4.4.6-ում:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը:

Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեզրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հողվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հողվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	483.75	484.10
<< դրամ/1 Եվրո	553.65	580.10

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուղվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Ընկերությունն սկզբնապես ճանաչում է վարկերը, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Ընկերության՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են դրանց ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ՝ 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող քաղաքականություն

Սկզբնական ճանաչման դեպքում ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» կազմված է փողի ժամանակային արժեքի և պարտքային ռիսկի փոխհատուցումից, այլ ռիսկերի և ֆինանսական ակտիվի պահպանման հետ կապված ծախսերի փոխհատուցումից (օրինակ՝ իրացվելիության ռիսկ և վարչական ծախսեր), ինչպես նաև շահույթի մարժայից: Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Ընկերությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Գնահատման ժամանակ Ընկերությունը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման առանձնահատկությունները,
- վաղաժամկետ մարման և երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Ընկերության պահանջը (օրինակ՝ առանց ռեզրեսի պահանջի իրավունքի ակտիվների պայմանավորվածություններ) և
- առանձնահատկությունները, որոնք փոխում են դրամի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Ընկերություն փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական ակտիվներ՝ մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական ակտիվները հետևյալ դասերից մեկում.

- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- մինչև մարման ժամկետը պահվող,
- վաճառքի համար մատչելի և
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և այս դասի շրջանակում՝ որպես
 - առևտրային նպատակներով պահվող կամ
 - նախորոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա տարածվող հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված փոխհատուցման գումարի տարբերությունը (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում

ճանաչված ցանկացած կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

2018 թվականի հունվարի 1-ից իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային բաժնային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակային օգուտ/վնաս չի ճանաչվում շահույթում կամ վնասում այդ արժեթղթերի ապաճանաչման դեպքում: Մասնակցությունն ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում, որն առաջանում է կամ պահպանվում է Ընկերության կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ընկերությունը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Ընկերությունը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Ընկերությունը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան սպասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են առոչինչ: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տես 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով:

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն

հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տես 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվել են փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով և ակտիվը չի ապաճանաչվել, ապա ակտիվի արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով մինչև փոփոխությունը կիրառվող տոկոսադրույքը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմաններով հիմնավորված նոր ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն գուման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Ընկերության առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող քաղաքականություն

Ընկերությունը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Ընկերությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց

համար Ընկերությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

Ընկերությունը համարում է, որ պարտքային արժեթղթերը ունեն ցածր պարտքային ռիսկ այն դեպքում, երբ վեջինիս պարտքային ռիսկի վարկանիշը համապատասխանում է համընդհանուր ընդունված «ներդրումային» վարկանիշի սահմանմանը:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք պայմանավորված են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում տեղի ունեցող դեֆոլտ առաջացնող իրադարձություններով:

Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում դեֆոլտի բոլոր հնարավոր դեպքերի հետևանքով:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Ընկերությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 30.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Ընկերությունը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Ընկերությունը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Ընկերությունը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված խումբ - ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային

եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները դեֆոլտի հավանականության, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի, դեֆոլտի ժամանակ վնասի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

- **Դեֆոլտի հավանականություն (PD):** Այն տվյալ ժամանակահավաժում դեֆոլտի հավանականության գնահատումն է: Դեֆոլտ կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակաշրջանի միայն որոշակի ժամանակահատվածում, եթե պարտականությունը նախկինում չի ապաճանաչվել և շարունակում է մնալ պորտֆելում:
- **Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD):** Այն ներկայացնում է դեֆոլտի ապագա ամսաթվի դրությամբ ռիսկի ենթարկված գումարի չափի գնահատումը՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ռիսկի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսագումարների մարումը՝ անկախ նրանից պայմանագրով նախատեսված է, թե ոչ, պարտավորության սպասվող օգտագոծումը և չկատարված վճարումների հաշվեգրված տոկոսները:
- **Վնասը դիֆոլտի ժամանակ (LGD):** Այն արտահայտում է վնասի չափը, որը առաջանում է տվյալ ժամանակահատվածում վարկի դիֆոլտային կարգավիճակում: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն հույս ունի ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը: Որպես կանոն, այն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի (EAD) նկատմամբ տոկոսով:

Դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը և դեֆոլտի ժամանակ վնասը ավելի մանրամասն բացահայտվում են 30.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տես՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում

Ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- էմիտենտի կամ փոխառուի էական ֆինանսական դժվարություններ,
- պայմանագրային պայմանների խախտում, օրինակ՝ դեֆոլտ կամ վճարման ուշացում,
- վարկերի կամ փոխատվությունների պայմանների այնպիսի վերանայում, որը Ընկերությունն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորման հավանականություն,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Փոխառուի ֆինանսական դժվարությունների հետևանքով վերանայված վարկը սովորաբար դիտարկվում է որպես արժեզրկված, միայն եթե առկա չէ վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր չստանալու ռիսկը էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- երկրի կարողությունը մուտք գործել կապիտալ շուկաներ նոր պարտքի թողարկման համար:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների (FVOCI) արժեզրկումից կորուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այդ ակտիվների հաարժեքը հավասար է իրենց իրական արժեքին: Այնուամենայնիվ, արժեզրկումից կորուստները բացահայտվում և ճանաչվում են իրական արժեքի ճշգրտման պահուստում,
- վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
 - վարկային պարտավորվածության չօգտագործված մասի գծով գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Ընկերությունը գնահատում է վարկային պարտավորվածությունների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակտնկալվում է օգտագործել: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
 - եթե ֆինանսական գործիքը ունի ինչպես օգտագործված, այնպես էլ չօգտագործված բաղադրիչ և Ընկերությունը հնարավորություն չունի վարկերի տրամադրման պարտավորվածության ակնկալվող պարտքային կորուստները առանձնացնել

օգտագործված բաղադրիչի ակնկալվող պարտքային կորուստներից, ապա Ընկերությունը ներկայացնում է ակնկալվող պարտքային կորուստների համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի համախառն գումարի նկատմամբ արժեզրկումից կորուստների ցանկացած գերազանցում ներկայացվում է պահուստի տեսքով:

- Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Ընկերության պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Այս նպատակով Ընկերությունը գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող վճարումների ներկա արժեքի հիման վրա՝ փոխառուի կրած կորուստները փոխհատուցելու նպատակով: Կրճատումները զեղչվում են դիսկոլ ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխիքային պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստների շրջանակում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Ընկերությունը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Ընկերության պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

Մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Ընկերությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում

արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են պարտքային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Ընկերությունը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Ընկերությանը, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Ընկերության ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում պարտքային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական միջոցների հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական միջոցների հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Ընկերության կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Ընկերությանը: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Ընկերությունը չի կարող կանխատեսել՝ ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Ընկերությունը փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

4.5 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են կանխիկ դրամից և ՀՀ առևտրային բանկերում հաշիվներից:

Դրամական միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն՝ Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.8 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	20	5
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Համակարգիչներ և կապի միջոցներ	1	100
Գույք և գրասենյակային սարքավորումներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները բավարարում են ակտիվի չանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.9 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.10 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.11 Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.12 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.13 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում,

հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Քիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Ընկերությունը գնահատում է այն քիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.4.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 27):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում կանխատեսվող տեղեկատվության ներառումը (տես 30.1.2 ծանոթագրություն), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ 25 ծանոթագրությունը:

6 Անցման բացահայտում

Ստորև նկարագրվում է ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և չբաշխված շահույթի վրա՝ ներառյալ ՀՀՄՍ 39-ի կրած պարտքային կորուստների հաշվարկների՝ ՖՀՄՍ 9-ի ակնկալվող պարտքային կորուստներով փոխարինման ազդեցությունը:

Հետևյալ աղյուսակում ներկայացվում են Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար ՀՀՄՍ 39-ի համաձայն չափման դասերը և ՖՀՄՍ 9-ի ներքո նոր չափման դասերը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	Սկզբնական դասակարգում ՀՀՄՍ 39-ի համաձայն	Նոր դասակարգում ՖՀՄ 9-ի համաձայն	Սկզբնական հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն	Նոր հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	1,389,657	1,389,560
Վարկեր հաճախորդներին	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	22,641,666	22,459,256
Այլ ֆինանսական ակտիվներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	13,076	7,921
Ընդամենը ֆինանսական ակտիվներ			24,044,399	23,856,737
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	4,539,471	4,539,471
Վարկեր և փոխառություններ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	16,210,959	16,210,959
Այլ ֆինանսական պարտավորություններ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	198,355	198,355
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ			20,948,785	20,948,785

ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվեկշռային արժեքների համադրումը ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված մնացորդների միջև ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերադասակարգում	Վերաչափում (ակնկալվող պարտքային կորուստներ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
<i>Ամորտիզացված արժեք</i>				
<i>Դրանմական միջոցներ</i>				
Տարեսկզբի մնացորդ	1,389,657			
Վերաչափում		-	(97)	
Տարեվերջի մնացորդ				1,389,560
<i>Վարկեր հաճախորդներին</i>				
Տարեսկզբի մնացորդ	22,641,666			
Վերաչափում		-	(182,410)	
Տարեվերջի մնացորդ				22,459,256
<i>Այլ ֆինանսական ակտիվներ</i>				
Տարեսկզբի մնացորդ	13,076			
Վերաչափում		-	(5,155)	
Տարեվերջի մնացորդ				7,921
Ընդամենը ամորտիզացված արժեք	24,044,399	-	(187,662)	23,856,737
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
<i>Ամորտիզացված արժեք</i>				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,539,471	-	-	4,539,471
Վարկեր և փոխառություններ	16,210,959	-	-	16,210,959
Այլ ֆինանսական պարտավորություններ	198,355	-	-	198,355
Ընդամենը ամորտիզացված արժեք	20,948,785	-	-	20,948,785

ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը պահուստների և չբաշխված շահույթի վրա ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

Պահուստներ և չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթ

Տարեվերջի մնացորդ ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31)	962,299
ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում	(187,662)
Հետաձգված հարկ	37,532
Տարեսկզբի մնացորդ ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1)	812,169

Ընդամենը սեփական կապիտալի փոփոխություններ ՖՀՄՍ 9-ի ներդրման հետևանքով (150,130)

Հետևյալ աղյուսակը համադրում է.

- ՀՀՄՍ 39-ի համաձայն ֆինանսական ակտիվների արժեզրկումից վերջնական պահուստը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:
- ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների սկզբնական պահուստը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	ՀՀՄՍ 39 համաձայն վարկերի գծով կորուստների պահուստ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերաչափում	ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստներ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Արժեզրկումից պահուստ</i>			
Դրամական միջոցներ	-	97	97
ՀՀՄՍ 39-ի համաձայն վարկեր և դեբիտորական պարտքեր/ ՖՀՄՍ 9-ի համաձայն ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվներ	1,280,649	182,410	1,463,059
Այլ ակտիվներ	-	5,155	5,155
Ընդամենը արժեզրկումից պահուստ	1,280,649	187,662	1,468,311

7 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.
Հաճախորդներին տրված վարկեր	6,382,666	6,002,714
Եկամուտներ բանկային հաշիվներից	196	246
Այլ	-	18
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6,382,862	6,002,978

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	383,322	275,853
Վարկեր և փոխառություններ	1,929,993	1,679,581
Թողարկված պարտքային արժեթղթեր	19,590	-
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	2,332,905	1,955,434

8 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.
Ապահովագրական գործակալի գործունեությունից	243	706
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	243	706
Դրամարկղային գործառնություններ	2,088	1,257
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	7,041	1,234
Վարկային գծի տրամադրման միջնորդավճար	14,048	4,718
Այլ վճարներ	80	216
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	23,257	7,425

9 Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.
Արտարժույթի առջ ու վաճառքից զուտ եկամուտ	209,724	121,191
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթային վերագնահատումից զուտ եկամուտ	(13,710)	23,234
Ընդամենը արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ	196,014	144,425

10 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.
Տույժերից և տուգանքներից եկամուտ	92,661	221,993
Այլ եկամուտներ	4,900	4,673
Ընդամենը այլ եկամուտներ	97,561	226,666

11 Արժեզրկման ծախս/(հակադարձում)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ		Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ		Ընդամենը 2018թ.	Ընդամենը 2017թ.
		12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	պարտքային կորուստներ	պարտքային կորուստներ	պարտքային կորուստներ		
Դրամական միջոցներ	15	100	-	-	-	100	-
Վարկեր հաճախորդներին	16	(115,740)	143,125	311,099	338,484	(73,068)	
Այլ ֆինանսական ակտիվներ	19	(7,565)	-	-	(7,565)	-	
Ընդամենը արժեզրկման ծախս		(123,205)	143,125	311,099	331,019	(73,068)	

12 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Աշխատակիցների հատուցումներ՝ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	1,498,400	1,393,306
Անձնակազմի ուսուցման ծախսեր	346	3,403
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	1,498,746	1,396,709

13 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների պահպանման և սպասարկման ծախսեր	24,981	20,687
Գովազդի ծախսեր	32,949	31,707
Գործուղման ծախսեր	3,545	3,383
Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր	14,947	13,433
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	143,160	137,946
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	15,582	15,968
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	11,640	2,421
Անվտանգության գծով ծախսեր	56,226	53,057
Ներկայացուցչական ծախսեր	1,475	829
Գրասենյակային ծախսեր	38,023	69,091
Ինկասացիոն ծախսեր	5,236	6,124
Ֆինանսական համակարգի հաշտարարին վճարներ	17,225	13,614
Կոմունալ ծախսեր	31,031	27,180
ԱՔՐԱ-ի գծով ծախս	9,653	9,886
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	28,968	18,940
Վարկային պարտավորվածությունների զիջման ծախսեր	59,635	36,700
Արժեթղթերով գործարքներ	2,672	-
Այլ ծախսեր	11,513	8,900
Ընդամենը այլ ծախսեր	508,461	469,866

14 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Ընթացիկ հարկի գծով ծախս	378,708	492,703
Հետաձգված հարկ	(21,927)	20,599
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	356,781	513,302

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2017թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	Արդյունավետ		Արդյունավետ	
	2018	դրույքաչափ (%)	2017	դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	1,838,103		2,523,520	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	367,621	20	504,704	20
Չհարկվող եկամուտ	-	-	(336)	-
Չնվազեցվող ծախսեր	(11,893)	(1)	14,963	(1)
Արտարժույթի (դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	2,742	-	(4,647)	-
Շահութահարկի այլ արտոնություններ	(1,689)	-	(1,382)	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	356,781	19	513,302	19

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2017թ.			31 դեկտեմբերի 2018թ.		
	Չուտ հետաձգված հարկ	ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը	Շահույթում կամ վնասում ճանաչված	Չուտ հետաձգված հարկ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ	-	19	(13,086)	(13,067)	-	(13,067)
Հաճախորդներին տրված վարկեր	(37,154)	36,482	37,154	36,482	36,482	-
Այլ ակտիվներ	-	1,031	(1,513)	(482)	-	(482)
Վարկեր և փոխառություններ	3,209	-	(3,209)	-	-	-
Այլ պարտավորություններ	21,612	-	2,581	24,193	24,193	-
Հետաձգված հարկ	(12,333)	37,532	21,927	47,126	60,675	(13,549)

Հազար ՀՀ դրամ

	2016թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	2017թ.
Վարկեր և փոխառություններ	3,530	(321)	3,209
Այլ պարտավորություններ	12,000	9,612	21,612
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	15,530	9,291	24,821
Վարկեր հաճախորդներին	(6,636)	(30,518)	(37,154)
Այլ ակտիվներ	(628)	628	-
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(7,264)	(29,890)	(37,154)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	8,266	(20,599)	(12,333)

15 Դրամական միջոցներ

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Կանխիկ դրամական միջոցներ	1,292,168	1,308,578
Բանկային հաշիվներ	492,811	81,079
	1,784,979	1,389,657
Արժեզրկումից պահուստ	(197)	-
Ընդամենը դրամական միջոցներ	1,784,782	1,389,657

Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

	2018թ.	2017թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Դրամական միջոցներ		
2018թ. հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	97	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	100	-
Մնացորդը տարվա վերջի դրությամբ	197	-

2018թ. ընթացքում իրականացված անկանխիկ գործառնությունները ներկայացնում են վարկային պարտավորությունների մարումներ գրավների բռնագանձման միջոցով 15,950 հազար դրամ գումարով (2017թ.՝ 8,815 հազար դրամ):

16 Վարկեր հաճախորդներին

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.			31 դեկտեմբերի 2017թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային ն արժեք	Արժեզրկմա ն պահուստ	Հաշվեկշռային արժեք
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>						
Հիփոթեքային վարկեր	4,300,357	(136,993)	4,163,364	2,864,279	(73,452)	2,790,827
Սպառողական վարկեր	22,503,549	(1,224,167)	21,279,382	19,403,521	(1,156,240)	18,247,281
<i>Առևտրային վարկեր</i>						
Այլ	2,334,706	(155,664)	2,179,042	1,654,515	(50,957)	1,603,558
Ընդամենը	29,138,612	(1,516,824)	27,621,788	23,922,315	(1,280,649)	22,641,666

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 37,045 հազար դրամ (2017թ.՝ 8,815 հազար դրամ): Ընկերությունը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքները կազմում են ՀՀ դրամով վարկերի համար 25.80% և ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ 13.46% (2017թ.՝ համապատասխանաբար 28.62% և 13.46%):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թվով տասը վարկառուներին տրամադրված վարկերի գումարը կազմում է 664,777 հազար դրամ (2017թ.՝ 651,245 հազար դրամ), ինչը կազմում է համախառն վարկային պորտֆելի 2.28%-ը (2017թ.՝ 2.72%-ը): Նշված գումարների գծով արժեզրկումից պահուստը կազմում է 103,245 հազար դրամ (2017թ.՝ 37,845 հազար դրամ):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

2018թ.

	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալ- վող պարտքային կորուստներ (չարժե- զրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալ- վող պարտքային կորուստներ (արժե- զրկված ակտիվներ)	Ընդամենը
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	301,629	642,591	360,753	1,304,973
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	39,485	(39,485)	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(11,792)	37,529	(25,737)	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(4,631)	(60,440)	65,071	-
<i>Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում</i>	<i>(73,368)</i>	<i>117,644</i>	<i>453,980</i>	<i>498,256</i>
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(442,069)	(442,069)
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	251,323	697,839	411,998	1,361,160

	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալ- վող պարտքային կորուստներ (չարժե- գրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատված ի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժե-	Ընդամենը
<i>Առևտրային վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	134,390	23,279	417	158,086
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	2,310	(2,310)	-	-
- փոխանցում գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեգրկված ակտիվներ)	(921)	921	-	-
- փոխանցում գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեգրկված ակտիվներ)	(1,630)	(1,270)	2,900	-
<i>Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում</i>	<i>(42,372)</i>	<i>25,481</i>	<i>(142,881)</i>	<i>(159,772)</i>
Վերականգնում տարվա ընթացքում	-	-	157,350	157,350
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	91,777	46,101	17,786	155,664

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել պորտֆելի համախառն չափի աճով և պարտքային ռիսկի աճի եւ տնտեսական պայմանների վատթարացման հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 30.1.2 ծանոթագրությունում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀՄՍ 39-ի համաձայն վարկերի արժեզրկումից կորուստների գծով պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2017		
	Հիփոթեքային և սպառողական վարկեր	Առևտրային վարկեր	Ընդամենը
2017թ. հունվարի 1 դրությամբ	1,118,583	126,005	1,244,588
Տարվա հակադարձում	(21,969)	(51,099)	(73,068)
(Դուրսգրում)/Վերականգնում	133,078	(23,949)	109,129
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,229,692	50,957	1,280,649
Անհատական արժեզրկում	-	-	-
Խմբային արժեզրկում	1,229,692	50,957	1,280,649
	1,229,692	50,957	1,280,649

Ինչպես նշված է 27 ծանոթագրությունում, 2018թ. դեկտեմբերի 31-ի և 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է 29 ծանոթագրությունում:

Վարկային պորտֆելին ներհատուկ պարտքային, արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկերը բացահայտված են 30 ծանոթագրությունում:

Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 26 ծանոթագրությունում:

17 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Փոխա- դրա- միջոցներ	Համա- կարգչային տեխնիկա	Գույք և գրասենյա- կային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Կապիտալ ներդրում- ներ վարձա- կալված հիմնական միջոցներում	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>							
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	86,304	146,388	140,083	44,281	54,440	54,097	525,593
Ավելացում	1,460	2,203	28,105	33,935	42,722	50,270	158,695
Օտարում	-	-	(359)	(305)	(93)	-	(757)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	87,764	148,591	167,829	77,911	97,069	104,367	683,531
Ավելացում	3,475	-	55,359	17,851	22,883	2,654	102,222
Օտարում	-	-	(8,468)	(630)	(1,534)	(1,163)	(11,795)
Վերադասակարգում	38,891	-	-	-	-	(38,891)	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	130,130	148,591	214,720	95,132	118,418	66,967	773,958
<i>Կուտակված մաշվածություն</i>							
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	8,601	96,621	68,905	29,866	20,826	8,658	233,477
Տարվա ծախս	4,395	27,575	36,080	10,225	9,812	2,969	91,056
Օտարում	-	-	(325)	(305)	(93)	-	(723)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,996	124,196	104,660	39,786	30,545	11,627	323,810
Տարվա ծախս	6,512	6,431	86,186	6,629	16,366	3,409	125,533
Օտարում	-	-	(8,468)	(630)	(1,534)	(329)	(10,961)
Վերադասակարգում	189	-	-	-	-	(189)	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,697	130,627	182,378	45,785	45,377	14,518	438,382
<i>Հաշվեկշիռային արժեք</i>							
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	74,768	24,395	63,169	38,125	66,524	92,740	359,721
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	110,433	17,964	32,342	49,347	73,041	52,449	335,576

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկսնական արժեքը կազմում է 182,120 հազար դրամ (2017թ.՝ 103,141 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության շենքերը գրավադրած են առևտրային բանկում՝ որպես վարկային գծի ապահովման միջոց (տես՝ ծանոթագրություն 20):

Պայմանագրային պարտավորություններ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի պայմանագրային պարտավորություններ 3,136 հազար դրամ գումարի չափով (2017թ.՝ 6,888 հազար դրամ) հիմնական միջոցների գնման գծով:

18 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	Լիցենզիաներ և վստահագրեր	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	27,634	8,424	36,058
Ավելացում	4,486	-	4,486
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,120	8,424	40,544
Ավելացում	17,635	-	17,635
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	49,755	8,424	58,179
<i>Կուտակված ամորտիզացիա</i>			
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	3,941	1,333	5,274
Մասհանումներ	2,991	842	3,833
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,932	2,175	9,107
Մասհանումներ	17,809	847	18,656
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,741	3,022	27,763
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,188	6,249	31,437
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,014	5,402	30,416

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

19 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Դերիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	20,094	13,076
Արժեզրկումից պահուստ	(9,143)	-
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	10,951	13,076
Մատակարարներին տրված կանխավճարներ հիմնական միջոցների և նյութական ակտիվների ձեռքբերման համար	16,812	8,525
Կանխավճարներ հարկերի և տուրքերի գծով	-	51
Առհաշիվ տրված գումարներ աշխատակիցներին	63	-
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	331	4,261
Պաշարներ	10,773	10,854
Բռնագանձված ակտիվներ	149,780	126,367
Այլ ակտիվներ	-	9
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	177,759	150,067
Ընդամենը այլ ակտիվներ	188,710	163,143

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2018	2017
	Ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	5,155	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(7,565)	-
Զուտ վերականգնում	11,553	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,143	-

Ընկերության կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների տնօրինման արդյունքում տարվա ընթացքում ձեռք բերված ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Անշարժ գույք	149,780	126,367
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	149,780	126,367

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Ընկերության քաղաքականությունն է հետամուտ լինել գրավի իրացմանը պատշաճ կերպով և ժամկետներում: Ընկերությունը հիմնականում չի օգտագործում գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են սկզբնական արժեքի և իրական արժեքի հանած վաճառքի ծախսումներից նվազագույնով:

20 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Վարկեր բանկերից	5,480,917	3,885,213
Վարկեր վարկային կազմակերպություններից	60,278	654,258
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,541,195	4,539,471

Բանկերից վարկերն իրենցից ներկայացնում են ՀՀ առևտրային բանկերի վարկերի և վարկային գծերի օգտագործված մասը: Բոլոր վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի 1,693,125 հազար դրամի չափով պարտավորությունն ապահովված է Ընկերության բաժնետերերին և վերջիններիս հետ կապակցված կողմ հաղիսացող անձանց պատկանող գրավով:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի 193,719 հազար դրամի չափով պարտավորությունն ապահովված է Ընկերության անշարժ գույքերի գրավադրմամբ (տես՝ ծանոթագրություն՝ 17), իսկ մնացած գումարը՝ Ընկերության բաժնետերերին և վերջիններիս հետ կապակցված կողմ հաղիսացող անձանց պատկանող անշարժ գույքերի գրավով:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 9.38% (2017թ.՝ 8.30%), իսկ ԱՄՆ դոլարով պարտավորությունների գծով՝ 7.79% (2017թ.՝ 8.13%):

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2017թ.՝ նույնպես):

21 Փոխառություններ և վարկեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Փոխառություններ բաժնետերերից	18,322,681	15,862,157
Վարկեր ՀՀ կառավարությունից	170,554	172,451
Այլ փոխառություններ	201,309	176,351
Ընդամենը ստորադաս փոխառություն	18,694,544	16,210,959

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամով փոխառությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 10.78% (2017թ.՝ 13.10%), ԱՄՆ դոլարով փոխառությունների համար՝ 6.19% (2017թ.՝ 7.78%):

Բաժնետերերից ներգրավված փոխառություններն ունեն շուկայական տոկոսադրույքներ:

ՀՀ կառավարությունից փոխառությունները ներառում են վարկեր՝ ստացված Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից «Գյուղատնտեսական վարկեր» ծրագրի շրջանակներում:

Փոխառություններն ու վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2017թ.՝ նույնպես):

22 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Պարտատոմսեր	603,387	-
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	603,387	-

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Արժեքը մեկ պարտատոմս ի դիմաց			%	Պարտատոմս ի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
		Քանակ	Քանակ				
20.07.2018	AMD	10,000	10,000	10.0	20.07.2020	100,000,000	
20.07.2018	USD	100	10,000	6.9	20.07.2020	1,000,000	

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը ունեն 10.25% (2017թ.՝ 11.9 %) միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք ՀՀ դրամով պարտատոմսերի համար, ԱՄՆ դոլարով պարտքային արժեթղթերի համար՝ 7.02 % (2017թ.՝ ոչինչ):

Տարվա ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ:

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2017թ.՝ ոչինչ):

23 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Վճարվելիք գումարներ	95,840	72,225
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	134,773	126,130
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	230,613	198,355
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	44,495	35,174
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	44,495	35,174
Ընդամենը այլ պարտավորություններ	275,108	233,529

24 Սեփական կապիտալ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 3,000,000 հազար դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 600,000 հասարակ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով:

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.	Բաժնեմասը վճարված կապիտալում, %
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Վճարված բաժնետիրակա ն կապիտալ	
Վիգեն Բաղայան	1,500,000	1,000,000	50%
Վահե Բաղայան	1,500,000	1,000,000	50%
	<u>3,000,000</u>	<u>2,000,000</u>	<u>100%</u>

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել (2017թ.՝ ոչինչ):

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերն ունեն մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2018թ. ընթացքում Ընկերությունը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 1,000,000 հազար դրամով (2017թ.՝ ոչինչ):

2018թ. ընթացքում Ընկերությունը վճարել է շահաբաժիններ՝ 910,000 հազար դրամ 2017թ. տարեկան արդյունքներով:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ կազմակերպությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումից հետո պետք է ստեղծի գլխավոր պահուստ՝ ընդհանուր ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով՝ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: Կանոնադրությամբ նախատեսվում է պահուստի հատկացում ոչ պակաս քան Ընկերության տարեկան շահույթի 5%-ի չափով:

25 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է

իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել: Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ընկերությանը ներկայացվող դատական հայցերի առումով Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով՝ Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է վարձակալության պայմանագրեր տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.
Մինչև 1 տարի	21,062	21,047
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	21,062	21,047

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Ընկերությունը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

26 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող

հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, դեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերությունը վերջնական վերահսկող են հանդիսանում Բաղայան եղբայրները:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Կապակցված կողմերի հետ գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

	2018թ.		2017թ.	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
<i>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</i>				
<i>Հաճախորդներին տրված վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ (համախառն)	-	-	-	553
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	-	7,113	-	-
Տարվա ընթացքում մարված վարկեր	-	(6,140)	-	(553)
Մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ (համախառն)	-	973	-	-
Արժեզրկումից պահուստ	-	(14)	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	959	-	-
<i>Վարկեր և փոխառություններ</i>				
<i>Փոխառություններ բաժնետերերից</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	15,862,157	-	11,581,023	-
Տարվա ընթացքում ստացված	16,031,830	-	12,986,193	-
Տարվա ընթացքում վճարված	(13,622,914)	-	(8,705,059)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,271,073	-	15,862,157	-
<i>Թողարկված պարտքային արժեթղթեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում թողարկված	-	389	-	-
Տարվա ընթացքում վճարված	-	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	389	-	-
<i>Ներգրավված վարկային գծերի ապահովան համար անշարժ գույքի գրավադրում</i>				
-	-	-	1,901,600	-
<i>Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</i>				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	-	198	-	44
Արժեզրկման (ծախս)/հակադարձում	-	(14)	-	11
Տոկոսային ծախսեր փոխառությունների գծով	1,855,947	-	1,666,255	-
Տոկոսային ծախսեր թողարկված արժեթղթերի գծով	-	13	-	-
Վարձակալության գծով ծախսեր	114,120	-	113,940	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ պարգևատրումներ	77,522	82,594
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	77,522	82,594

27 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված)։

Մակարդակ 2՝ Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող)։

Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ)։

27.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ	-	1,784,782	-	1,784,782	1,784,782
Հաճախորդներին տրված վարկեր	-	27,621,788	-	27,621,788	27,621,788
Այլ ֆինանսական ակտիվներ	-	10,951	-	10,951	10,951
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	5,541,195	-	5,541,195	5,541,195
Վարկեր և փոխառություններ	-	18,694,544	-	18,694,544	18,694,544
Թողարկված պարտքային արժեթղթեր	498,814	104,573	-	603,387	603,387
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	230,613	-	230,613	230,613

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ	-	1,389,657	-	1,389,657	1,389,657
Հաճախորդներին տրված վարկեր	-	22,641,666	-	22,641,666	22,641,666
Այլ ֆինանսական ակտիվներ	-	13,076	-	13,076	13,076
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	4,539,471	-	4,539,471	4,539,471
Վարկեր և փոխառություններ	-	16,210,959	-	16,210,959	16,210,959
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	198,355	-	198,355	198,355

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք անվանական տոկոսադրույքերը կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 10% մինչև 24% տարեկան (2017թ.՝ 10% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Վարկեր և փոխառություններ

Ներգրված վարկերի և փոխառությունների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով՝ զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող վարկերի համար առաջարկվող դրույքաչափերը:

28 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնք ներկայացված են զուտ արժեքով կամ կհաշվանցվեն համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրի:

29 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 30.3-ում:

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2018թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս		Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
	1-ից մինչև 12 ամիս						
<i>Ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ	1,784,782	-	1,784,782	-	-	-	1,784,782
Հաճախորդներին տրված վարկեր	361,460	5,387,732	5,749,192	19,222,730	2,649,866	21,872,596	27,621,788
Այլ ֆինանսական ակտիվներ	10,951	-	10,951	-	-	-	10,951
	2,157,193	5,387,732	7,544,925	19,222,730	2,649,866	21,872,596	29,417,521
<i>Պարտավորություններ</i>							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,684	1,310,640	1,324,324	4,188,031	28,840	4,216,871	5,541,195
Վարկեր և փոխառություններ	3,218	3,673,448	3,676,666	14,005,128	1,012,750	15,017,878	18,694,544
Թողարկված պարտքային արժեթղթեր	19,612	583,775	603,387	-	-	-	603,387
Այլ ֆինանսական պարտավորություններ	230,613	-	230,613	-	-	-	230,613
	267,127	5,567,863	5,834,990	18,193,159	1,041,590	19,234,749	25,069,739
Զուտ Դիրք	1,890,066	(180,131)	1,709,935	1,029,571	1,608,276	2,637,847	4,347,782
Կուտակված ճեղքվածք	1,890,066	1,709,935		2,739,506	4,347,782		

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա- գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա- հանրա- գումար	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ	1,389,657	-	1,389,657	-	-	-	1,389,657
Հաճախորդներին տրված վարկեր	572	349,604	350,176	20,637,997	1,653,493	22,291,490	22,641,666
Այլ ֆինանսական ակտիվներ	13,076	-	13,076	-	-	-	13,076
	<u>1,403,305</u>	<u>349,604</u>	<u>1,752,909</u>	<u>20,637,997</u>	<u>1,653,493</u>	<u>22,291,490</u>	<u>24,044,399</u>
<i>Պարտավորություններ</i>							
Պարտավորություններ ֆինան- սական կազմակերպությունների նկատմամբ	-	898,060	898,060	3,641,411	-	3,641,411	4,539,471
Վարկեր և փոխառություններ	15,781	3,701,869	3,717,650	12,493,309	-	12,493,309	16,210,959
Այլ ֆինանսական պարտավորություններ	198,355	-	198,355	-	-	-	198,355
	<u>214,136</u>	<u>4,599,929</u>	<u>4,814,065</u>	<u>16,134,720</u>	<u>-</u>	<u>16,134,720</u>	<u>20,948,785</u>
Զուտ Դիրք	<u>1,189,169</u>	<u>(4,250,325)</u>	<u>(3,061,156)</u>	<u>4,503,277</u>	<u>1,653,493</u>	<u>6,156,770</u>	<u>3,095,614</u>
Կուտակված ճեղքվածք	<u>1,189,169</u>	<u>(3,061,156)</u>		<u>1,442,121</u>	<u>3,095,614</u>		

30 Ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Ռիսկերի կառավարումը Ընկերությունը իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով:

Կարևորագույն ռիսկերն են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Ընկերության Վարչության կողմից՝ ըստ Ընկերության Ընդհանուր ժողովի հաստատած վարկային քաղաքականության և ներքին կանոնակարգերի: Ընկերության վարչության կազմում ընդգրկված են Ընկերության գլխավոր գործադիր տնօրենը, նրա տեղակալները և գլխավոր հաշվապահը: Ընկերության Վարչությունը նույնականացնում է, գնահատում և միջոցներ է ձեռնարկում զսպելու ֆինանսական ռիսկերը:

Ընկերության խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար: Ընկերության Վարչությունը սահմանում է տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների սակագները: Իրականացնում է գործառնական ռիսկերի կառավարման ընթացիկ աշխատանքները:

Ներքին աուդիտ

Ընկերության կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Ընկերության գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ընկերության Խորհրդին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Ընկերության ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Ընկերության գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

30.1 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, ինչը Ընկերությանը կարող է կորուստներ պատճառել: Պարտքային ռիսկը Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ընկերության պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Ընկերության ղեկավարությանը:

30.1.1 Վարկերի որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Ընկերության՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքային պայմանագրերի գումարները:

Հազար ՀՀ դրամ			2018թ.	2017թ.	
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3		
Ներքին վարկանիշեր	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)		
			Ընդամենը	Ընդամենը	
<i>Դրամական միջոցներ</i>					
Բարձր	1,292,168	-	-	1,292,168	1,308,578
Ստանդարտ	492,811	-	-	492,811	81,079
Համախառն հաշվեկշռային արժեք	1,784,979	-	-	1,784,979	1,389,657
Արժեզրկումից պահուստ	(197)	-	-	(197)	-
Զուտ հաշվեկշռային արժեք	1,784,782	-	-	1,784,782	1,389,657
<i>Հաճախորդներին տրված վարկեր</i>					
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>					
Բարձր	21,074,226	-	-	21,074,226	18,408,009
Ստանդարտ	62,171	2,901,583	-	2,963,754	1,868,881
Ցածր	913	1,910,826	-	1,911,739	1,502,955
Չաշխատող	-	-	854,187	854,187	487,955
Համախառն հաշվեկշռային արժեք	21,137,310	4,812,409	854,187	26,803,906	22,267,800
Արժեզրկումից պահուստ	(251,323)	(697,839)	(411,998)	(1,361,160)	(1,229,692)
Զուտ հաշվեկշռային արժեք	20,885,987	4,114,570	442,189	25,442,746	21,038,108
<i>Հաճախորդներին տրված վարկեր</i>					
<i>Առևտրային վարկեր</i>					
Բարձր	2,042,696	-	-	2,042,696	1,575,749
Ստանդարտ	328	213,119	-	213,447	14,381
Ցածր	-	27,496	-	27,496	58,104
Չաշխատող	-	-	51,067	51,067	6,281
Համախառն հաշվեկշռային արժեք	2,043,024	240,615	51,067	2,334,706	1,654,515
Արժեզրկումից պահուստ	(91,777)	(46,101)	(17,786)	(155,664)	(50,957)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,951,247	194,514	33,281	2,179,042	1,603,558

30.1.2 Արժեզրկման գնահատում

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող քաղաքականություն

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Ընկերության՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Ընկերությունը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Ընկերությունը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Ընկերությունը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի

համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Էական վարդաբացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Ընկերության կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցե մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Ընկերությունը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են դեֆոլտի ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված) գործոններով, որոնք մատնանշում են դեֆոլտի ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Խմբային կամ անհատական գնահատում

Ընկերությունը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեթղթ/իրական արժեթղթ՝ այլ համապատասխան ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես ձեռքբերված կամ ստեղծված արժեգրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Ընկերությունը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Դեֆոլտի սահմանում և «առողջացում»

Ընկերությունը համարում է ֆինանսական գործիքը դեֆոլտի ենթարկված, և, հետևաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեգրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Ընկերությունը միջբանկային հաշիվները համարում է դեֆոլտի ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Ընկերությունը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Ընկերությունը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ դեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն դեֆոլտում է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Ընկերության քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվ՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Ընկերության՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Ընկերությունը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Ընկերությունը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ կանխատեսվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Ընկերության՝ վերանայված վարկերի

վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Ընկերությունը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Ընկերությունը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.4 ծանոթագրությունում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Փուլ 2-ում և Փուլ 3-ում ներառված ակտիվները, որոնք փոփոխվել են, և, հետևաբար, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համարվում են վերանայված՝ Ընկերության կողմից փոփոխությունների գծով կրած կորուստների հետ միասին:

Հազար ՀՀ դրամ

2018

Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեք

221,444

Փոփոխությունից զուտ վնաս

(70,969)

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտ հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է

պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական գեղջերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տրակ գտնվող գումար (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար դեֆոլտի ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում դեֆոլտի պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Ընկերության դեֆոլտների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Ընկերությունը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Ընկերությունը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը ակնկալվող պարտքային կորուստների վրա հաշվարկելու համար Ընկերությունն օգտագործում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակ որպես ելակետային տվյալներ իր մոդելների համար, այդ թվում՝

- ՀՆԱ-ի աճ (արտահայտված ՀՀ դրամով),
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանֆերտներ,
- Գործազրկության մակարդակ,
- Ընկերության չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում
- Առևտուր
- Արդյունաբերություն (աճի տեմպ %)

Արժեզրկման գնահատման քաղաքականությունը մինչև 2018թ. հունվարի 1

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական միջոցների հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Ընկերությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխասվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական միջոցների հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չեն:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ

2017թ.

	Մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր					
Առևտուր	-	-	55,441	6,281	61,722
Սպառողական	1,864,041	898,682	596,594	483,717	3,843,034
Գյուղատնտեսություն	14,381	-	2,663	-	17,044
Հիփոթեք	4,840	7,679	-	4,239	16,758
	<u>1,883,262</u>	<u>906,361</u>	<u>654,698</u>	<u>494,237</u>	<u>3,938,558</u>

30.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ	ՏՀԶԿ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ	1,784,782	-	-	1,784,782
Հաճախորդներին տրված վարկեր	27,133,609	486,814	1,365	27,621,788
Այլ ֆինանսական ակտիվներ	10,951	-	-	10,951
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>28,929,342</u>	<u>486,814</u>	<u>1,365</u>	<u>29,417,521</u>
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>23,802,749</u>	<u>5,957</u>	<u>235,693</u>	<u>24,044,399</u>

Ակտիվները դասակարգվում են, հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Տնտեսության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2018 և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության՝ պարտքային դիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի.

Հազար ՀՀ դրամ	Ֆինանսական նաբերություն	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական ոլորտ	Գյուղատնտեսություն	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ	1,784,782	-	-	-	-	-	-	-	1,784,782
Հաճախորդներին տրված վարկեր	-	166,185	77,299	490,492	21,279,381	1,270,314	4,163,365	174,752	27,621,788
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	-	10,951	10,951
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1,784,782</u>	<u>166,185</u>	<u>77,299</u>	<u>490,492</u>	<u>21,279,381</u>	<u>1,270,314</u>	<u>4,163,365</u>	<u>185,703</u>	<u>29,417,521</u>
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1,389,657</u>	<u>187,766</u>	<u>62,089</u>	<u>406,106</u>	<u>18,247,281</u>	<u>665,526</u>	<u>2,790,827</u>	<u>295,147</u>	<u>24,044,399</u>

30.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային դիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևյալն են.

- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք,
- գործառնական ակտիվներ, շրջանառվող միջոցներ,
- ավտոմեքենաներ
- ոսկի
- երաշխիքներ,

Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշտության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Ընկերությունը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի կորուստների գծով պահուստը ճանաչված չէ գրավի առկայության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Ընկերությունը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեքը կամ հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում:

Հաճախորդներին տրամադրված վարկերի գծով համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Անշարժ գույք	5,666,805	4,332,525
Շարժական գույք	80,084	100,419
Ոսկու գրավ	22,819,713	18,954,517
Խմբակային երաշխավորությամբ	487,780	236,421
Կազմակերպությունների երաշխիքներ	-	289,971
Առանց ապահովության	84,230	8,462
Ընդամենը վարկեր (համախառն)	29,138,612	23,922,315

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

30.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Ընկերությունը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել առևտրային պորտֆել: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Ընկերությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

30.2.1 Շուկայական ռիսկ՝ Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքների արժեքը տատանվում է արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և

պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2018թ.		2017թ.	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
Արտարժույթ				
ԱՄՆ դոլար	+10	(21,629)	+10	(34,455)
ԱՄՆ դոլար	(10)	21,629	(10)	34,455
Եվրո	+10	9,557	+10	7,024
Եվրո	(10)	(9,557)	(10)	(7,024)

Ընկերության արտարժույթի դիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ	795,021	709,382	280,379	1,784,782
Հաճախորդներին տրված վարկեր	21,259,179	6,362,609	-	27,621,788
Այլ ֆինանսական ակտիվներ	10,951	-	-	10,951
	<u>22,065,151</u>	<u>7,071,991</u>	<u>280,379</u>	<u>29,417,521</u>
<i>Պարտավորություններ</i>				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	60,278	5,480,917	-	5,541,195
Վարկեր և փոխառություններ	17,489,568	1,204,976	-	18,694,544
Թողարկված պարտքային արժեթղթեր	104,573	498,814	-	603,387
Այլ ֆինանսական պարտավորություններ	230,613	-	-	230,613
	<u>17,885,032</u>	<u>7,184,707</u>	<u>-</u>	<u>25,069,739</u>
Զուտ դիրք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>4,180,119</u>	<u>(112,716)</u>	<u>280,379</u>	<u>4,347,782</u>
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	<u>19,195,935</u>	<u>4,673,115</u>	<u>175,349</u>	<u>24,044,399</u>
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	<u>16,004,327</u>	<u>4,944,458</u>	<u>-</u>	<u>20,948,785</u>
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>3,191,608</u>	<u>(271,343)</u>	<u>175,349</u>	<u>3,095,614</u>

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն:

30.3 Իրացվելիության դիսկ

Իրացվելիության դիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս դիսկի զսպման նպատակով Ընկերությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության դիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան:

Ստորև ներկայացվում է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես Ծանոթագրություն 29-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

31 դեկտեմբերի 2018թ.

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	5 տարուց ավելի			Ընդամենը
		1-12 ամիս	1-5 տարի		
<i>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</i>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,684	1,349,180	5,012,036	82,773	6,457,673
Վարկեր և փոխառություններ	835,550	4,187,627	17,503,123	1,617,961	24,144,261
Թողարկված պարտքային արժեթղթեր	19,612	690,276	-	-	709,888
Այլ ֆինանսական պարտավորություններ	230,613	-	-	-	230,613
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	1,099,459	6,227,083	22,515,159	1,700,734	31,542,435

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1-12 ամիս	1-5 տարի	Ընդամենը Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինան- սական կազմակերպությունների նկատմամբ	-	939,392	4,178,992	5,118,384
Վարկեր և փոխառություններ	17,092	4,451,721	17,578,475	22,047,288
Այլ ֆինանսական պարտավորություններ	198,355	-	-	198,355
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	215,447	5,391,113	21,757,467	27,364,027

30.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,

- ռիսկերի մեղմացում:

Ընկերության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Ընկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Ընկերության Խորհրդին:

31 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների փոփոխություն

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ .

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2018թ.

	Պարտավորություններ			Ընդամենը
	Ֆինանսական կազմակերպ. նկատմամբ	Վարկեր և փոխառություններ	Թողարկված արժեթղթեր	
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	4,539,471	16,210,959	-	20,750,430
Դրամային հոսքերից	814,693	2,471,657	603,387	3,889,737
Ստացված գումար	13,689,829	16,508,995	607,941	30,806,765
Վճարված գումար	(12,875,136)	(14,037,338)	(4,554)	(26,917,028)
Ոչ դրամային հոսքերից	187,031	11,928	-	198,959
Փոխարժեքային տարբերություն	187,031	11,928	-	198,959
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,541,195	18,694,544	603,387	24,839,126

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2017թ.

	Պարտավորություններ		Ընդամենը
	Ֆինանսական կազմակերպ. նկատմամբ	Վարկեր և փոխառություններ	
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	2,864,523	11,697,534	14,562,057
Դրամային հոսքերից	1,581,563	4,419,859	6,001,422
Ստացված գումար	6,565,030	13,173,881	19,738,911
Վճարված գումար	(4,983,467)	(8,754,022)	(13,737,489)
Ոչ դրամային հոսքերից	93,385	93,566	186,951
Փոխարժեքային տարբերություն	93,385	93,566	186,951
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,539,471	16,210,959	20,750,430

32 Կապիտալի համարժեքություն

ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար սահմանել է կանոնադրական կապիտալի նվազագույն չափ 150,000 հազար դրամի չափով և այն ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար, որոնք իրենց կանոնադրության համաձայն կանխիկ ձևով գնում և (կամ) վաճառում են արտարժույթ, նորմատիվային կապիտալի նվազագույն չափ՝ մեկ միլիարդ ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման և այլ պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	2018թ.	2017թ.
Հիմնական կապիտալ	4,643,882	2,982,882
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	4,643,882	2,982,882
Ռիսկով կշռված ակտիվներ	32,103,855	25,383,945
Կապիտալի համարժեքության նորմատիվ	14.5%	11.8%

ՀՀ կենտրոնական բանկի կողմից կանխիկ ձևով արտարժույթի առուվաճառք իրականացնող, ինչպես նաև թողարկող վարկային կազմակերպությունների համար սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

33 Գործառնական սեզմենտներ

Ընկերության գործառնությունները բավականին ինտեգրված են և կազմում են մեկ գործարար սեզմենտ ՖՀՄՍ 8 Գործառնական սեզմենտներ ստանդարտի պահանջների: Ընկերության գլխավոր գործառնական որոշումներ կայացնող մարմնի կողմից իրականացվում են որոշումներ միասնական արդյունքների հիման վրա, և բացակայում է որևէ գործառնական սեզմենտի առանձնացում ընդհանուր գործառնություններից: Ընկերության ակտիվները հիմնականում տեղաբաշխված են Հայաստանի Հանրապետության տարածքում: Ընկերության եկամուտները ստացվում են Հայաստանյան աղբյուրներից:

**Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորի և եզրակացություն**

**«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ
վարկային կազմակերպություն փակ
բաժնետիրական ընկերություն**

31 դեկտեմբերի 2017թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0012

Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964

Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC

8/1 Vagharshyan Str.

0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964

F + 374 10 260 961

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:



Grant Thornton

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:



Grant Thornton

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Գագիկ Գյուլբուդայան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

20 հունիսի 2018թ.



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	6,002,978	6,416,952
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(1,955,434)	(1,741,541)
Զուտ տոկոսային եկամուտներ		4,047,544	4,675,411
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	706	637
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(7,425)	(7,398)
Զուտ կոմիսիոն և այլ ծախսեր		(6,719)	(6,761)
Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ	8	144,425	95,832
Այլ եկամուտներ	9	226,666	246,356
Արժեզրկման (ծախս)/փոխհատուցում	10	73,068	(396,094)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(1,396,709)	(1,225,492)
Հիմնական միջոցների մաշվածություն	16	(91,056)	(81,744)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	17	(3,833)	(2,845)
Այլ ծախսեր	12	(469,866)	(391,283)
Շահույթ մինչև հարկումը		2,523,520	2,913,380
Շահութահարկի գծով ծախս	13	(513,302)	(580,150)
Տարվա շահույթ		2,010,218	2,333,230
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		2,010,218	2,333,230

11-ից 54 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	14	1,389,657	820,777
Հաճախորդներին տրված վարկեր	15	22,641,666	18,104,105
Հիմնական միջոցներ	16	359,721	292,116
Ոչ նյութական ակտիվներ	17	31,437	30,784
Հետաձգված հարկային ակտիվ	13	-	8,266
Այլ ակտիվներ	18	163,143	168,372
		<u>24,585,624</u>	<u>19,424,420</u>
Ընդամենը՝ ակտիվներ			
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19	4,539,471	2,864,523
Փոխառություններ և վարկեր	20	16,210,959	11,697,534
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		367,278	276,111
Հետաձգված հարկային պարտավորություն	13	12,333	-
Այլ պարտավորություններ	21	233,529	162,674
		<u>21,363,570</u>	<u>15,000,842</u>
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	22	2,000,000	2,000,000
Գլխավոր պահուստներ		259,755	90,348
Չբաշխված շահույթ		962,299	2,333,230
		<u>3,222,054</u>	<u>4,423,578</u>
		<u>24,585,624</u>	<u>19,424,420</u>

Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 6-ից 54 էջերում, ստորագրվել են Ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2018թ. հունիսի 20-ին:

Հակոբ Ղոնջեյան
Գործադիր տնօրեն



Վարդան Բաբայան
Գլխավոր հաշվապահ

11-ից 54 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2016թ. հունվար 1-ի դրությամբ	2,000,000	4,800	1,793,174	3,797,974
Հատկացում պահուստին	-	85,548	(85,548)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(1,707,626)	(1,707,626)
<i>Սեփականապրերերի հետ գործարքներ</i>	-	85,548	(1,793,174)	(1,707,626)
Տարվա շահույթ	-	-	2,333,230	2,333,230
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	2,333,230	2,333,230
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,000,000	90,348	2,333,230	4,423,578
Հատկացում պահուստին	-	169,407	(169,407)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(3,211,742)	(3,211,742)
<i>Սեփականապրերերի հետ գործարքներ</i>	-	169,407	(3,381,149)	(3,211,742)
Տարվա շահույթ	-	-	2,010,218	2,010,218
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	2,010,218	2,010,218
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,000,000	259,755	962,299	3,222,054

11-ից 54 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահույթ մինչև հարկումը	2,523,520	2,913,380
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	94,889	84,589
Վարկերի հնարավոր կորուստների արժեզրկման ծախս/(փոխհատուցում)	(73,068)	396,094
Այլ ակտիվների օտարումից վնաս	-	339
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթային վերագնահատումից զուտ եկամուտ	(23,234)	(7,971)
Ստացվելիք տոկոսներ	19,687	(83,325)
Վճարվելիք տոկոսներ	189,623	343,012
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	<u>2,731,417</u>	<u>3,646,118</u>
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Հաճախորդներին տրված վարկեր	(4,470,233)	(3,348,957)
Այլ ակտիվներ	5,215	(3,403)
<i>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Այլ պարտավորություններ	70,740	20,097
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	<u>(1,662,861)</u>	<u>313,855</u>
Վճարված շահութահարկ	(401,536)	(704,733)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	<u>(2,064,397)</u>	<u>(390,878)</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների առք	(158,661)	(74,154)
Ոչ նյութական ակտիվների առք	(4,486)	(10,430)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	<u>(163,147)</u>	<u>(84,584)</u>
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	1,673,234	1,870,854
Փոխառություններ և վարկեր	4,328,188	468,249
Շահաբաժիններ բաժնետերերին	(3,211,742)	(1,707,626)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	<u>2,789,680</u>	<u>631,477</u>
<i>Դրամական միջոցների զուտ աճ</i>	<u>562,136</u>	<u>156,015</u>
Դրամական միջոցներ տարվա սկզբի դրությամբ	820,777	665,055
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	6,744	(293)
Դրամական միջոցներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 14)	<u>1,389,657</u>	<u>820,777</u>
<i>Լրացուցիչ տեղեկատվություն</i>		
Ստացված տոկոսներ	6,022,665	6,333,627
Վճարված տոկոսներ	(1,765,811)	(1,398,529)

11-ից 54 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2011թ. հոկտեմբերին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2011թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N266 Ա որոշմամբ, թիվ 129 գրանցման վկայականով:

Ընկերությունը ստեղծվել է մանր և միջին ձեռնարկություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց վարկեր և փոխառություններ տրամադրելու նպատակով:

Ընկերության գլխավոր գրասենյակը և 11 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 9 մասնաճյուղերը և 1 ներկայացուցչությունը՝ ՀՀ տարբեր մարզերում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ 0047, ք.Երևան, Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան 20:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական ու տնտեսական բարեփոխումները, և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս բարեփոխումներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միությունում զարգացումներից, որի հետ շարունակվում է ՀՀ տնտեսության ինտեգրումը:

Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական

ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2017թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերությունն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել: Չնայած ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2017թ-ին՝ դրանք որևէ էական ազդեցություն չունեն Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՄ 7 փոփոխություններ)*
- *Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում չիրացված կորուստների համար (ՀՀՄՄ 12 փոփոխություններ)*
- *2012-2014թթ. ՖՀՄՄ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով (ՖՀՄՄ 12 փոփոխություններ)*

3.5 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Դեկլարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

ՖՀՄՄ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

2014թ. հուլիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՄԽ) թողարկել է ՖՀՄՄ 9-ի («Ֆինանսական գործիքներ») վերջնական տարբերակը: ՖՀՄՄ 9-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ: Այն փոխարինում է ՀՀՄՄ 39-ին («Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»):

2017թ. հոկտեմբերին ՀՀՄՄԽ-ն թողարկել է «*Բացասական փոխհատուցմամբ կանխավճարի առանձնահատկությունները*» (ՖՀՄՍ 9 փոփոխություններ): Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ:

Ընկերությունը կկիրառի 2014թ. հուլիսին թողարկված ՖՀՄՍ 9-ը սկզբնապես 2018թ. հունվարի 1-ին և նույն ամսաթվին կընդունի նաև 2017թ. հոկտեմբերին ՀՀՄՄԽ-ի թողարկած ՖՀՄՍ 9 փոփոխությունները:

Նոր ստանդարտի կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության սեփական կապիտալի սկզբնական մնացորդի վրա 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Ընկերության գնահատումը դեռ նախնական է, քանի որ ոչ բոլոր անցումային աշխատանքներն են ավարտված: Մասնավորապես Ընկերությունը դեռ չի ավարտվել ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան հաշվապահական գործընթացների վերանայման և ներքին վերահսկողության փոփոխությունների աշխատանքները, ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկման մոդելների մշակումը և ամփոփումը, ինչպես նաև կարող են փոփոխվել նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, կիրառված ենթադրությունները, դատողությունները և գնահատման մեթոդները մինչև Ընկերությունը կամփոփի իր առաջին ֆինանսական հաշվետվությունները, որոնք կներառեն սկզբնական կիրառման ամսաթիվը:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգում

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր մոտեցում, որը արտացոլում է այդ ակտիվների կառավարման համար օգտագործվող բիզնես մոդելը և դրանց հետ կապված դրամական միջոցների հոսքերի առանձնահատկությունները: ՖՀՄՍ 9-ը ֆինանսական ակտիվների համար ներառում է երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL): Ընկերությունը, բաժնային գործիքների համար, որոնք չեն պահվում առևտրային նպատակներով, սկզբնական ճանաչման պահին կարող է կատարել իրականան արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափելու անհակադարձելի ընտրություն: Այս ընտրությունը յուրաքանչյուր ներդրման համար կատարվում է առանձին: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվները դասակարգվում են վերը նշված դասերից մեկում: ՖՀՄՍ 9-ի կիրառմամբ դադարեցվում են ՀՀՄՍ 39-ով սահմանվող՝ մինչև մարման ժամկետը պահվող, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի և իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների դասակարգումները:

ՖՀՄՍ 9-ը կանդադարանա 1 հունվարի 2018թ-ի դրությամբ պահվող ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա հետևյալ կերպ.

- Հաճախորդներին տրված վարկերը, որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգված են որպես վարկեր և դեբիտորական պարտքեր և չափվում են ամորտիզացված արժեքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի ընդհանուր առմամբ նույնպես կչափվեն ամորտիզացված արժեքով,
- Մինչև մարման ժամկետը պահվող պարտքային գործիքները (արժեթղթերը), որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն չափվում են ամորտիզացված արժեքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի ընդհանուր առմամբ նույնպես կչափվեն ամորտիզացված արժեքով,
- ՀՀՄՍ 39-ի համաձայն վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքները, համաձայն ՖՀՄՍ 9-ի կչափվեն ամորտիզացված արժեքով, իրականան արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) կամ իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով (FVTPL)՝ կախված կոնկրետ հանգամանքներից,
- Բաժնային գործիքների մեծ մասը, որոնք համաձայն ՀՀՄՍ 39-ի դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, համաձայն ՖՀՄՍ 9-ի կչափվեն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI):

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգման և չափման գնահատումը պարտադիր չէ, որ կներկայացնի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա այնպես, ինչպես կլինի 2018թ-ի հունվարի 1-ին, քանի որ ՖՀՄՍ 9-ը պահանջում է, որ բիզնես մոդելի գնահատումը կատարվի սկզբնական կիրառման օրվա դրությամբ գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա, որը Ընկերության համար հանդիսանալու է 2018թ-ի հունվարի 1-ը:

ՖՀՄՍ 9-ը հիմնականում պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման համար ՀՀՄՍ 39-ի ներկա պահանջները:

Այնուամենայնիվ, համաձայն ՀՀՄՍ 39-ի ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները սահմանված իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով (FVTPL-ով)՝ ճանաչվում են շահույթ և վնասում, մինչդեռ ՖՀՄՍ 9-ի համաձայն իրական արժեքի այդ փոփոխությունները հիմնականում կներկայացվեն հետևյալ կերպ.

- Պարտավորության սեփական վարկային ռիսկին վերագրելի իրական արժեքի փոփոխության գումարը կներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (OCI), և
- իրական արժեքի փոփոխության մնացած գումարը կներկայացվի շահույթ և վնասում:

Ֆինանսական ակտիվների, վարկերի տրամադրման պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի արժեքը

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ի «կրած կորուստների» մոդելը՝ ապագայի վրա հիմնված «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: Նոր արժեքը կման մոդելի կիրառումը Ընկերությունից կպահանջի զգալի մասնագիտական դատողություններ, թե ինչպես են տնտեսական գործոնների փոփոխություններն ազդում հավանականությամբ կշռված ակնկալվող պարտքային կորուստների վրա:

Բանկը ակնկալվող պարտքային կորուստների պահուստ կճանաչի ստորև նշված այն ֆինանսական գործիքների գծով, որոնք չեն հանդիսանում իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով հաշվառվող.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր,
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր:

ՖՀՄՍ 9-ի համաձայն բաժնային ֆինանսական գործիքների համար արժեքը կման չի հաշվարկվում:

ՖՀՄՍ 9-ի արժեքը կման պահանջները բարդ են և կպահանջեն ղեկավարության դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, հատկապես հետևյալ ոլորտներում.

- գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էական է աճել,
- ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մեջ կանխատեսվող մակրոտնտեսական տեղեկատվության ընդգրկում,
- դեֆոլտի սահմանում:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հիմնական մուտքային տարրերն են հանդիսանալու հետևյալ փոփոխականները.

- դեֆոլտի հավանականություն (PD),
- դեֆոլտի դեպքում վնասի գործակից (LGD),
- դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD):

Ընկերությունը այս ցուցանիշները կստանա ներքին վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից, որոնք օգտագործվում են կարգավորող մոդելներում: Կանխատեսվող տեղեկատվությունը արտացոլելու համար՝ դրանք կճշգրտվեն:

ՖՀՄՍ 9-ի ուժի մեջ մտնելու հետ կապված Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ամենաէական ազդեցությունն ակնկալվում է, որ կլինի արժեզրկման նոր պահանջների հետևանքով: ՖՀՄՍ 9-ի նոր արժեզրկման մոդելի կիրառումը կհանգեցնի ֆինանսական գործիքների համար արժեզրկումից կորուստների ավելացմանը և փոփոխականությանը: Արժեզրկման նոր պահանջները առավել մեծ ազդեցություն կունենան երկարաժամկետ չապահովված վարկային գործիքների կորուստների պահուստի վրա:

Անցումային դրույթներ

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները հիմնականում կկիրառվեն հետադարձ, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

- Ընկերությունը օգտվում է ընտրության առավելությունից, որը թույլ է տալիս չվերահաշվարկել նախորդ ժամանակաշրջանների համեմատական տվյալները ֆինանսական գործիքների դասակարգման և գնահատման (ներառյալ արժեզրկման) փոփոխությունների առումով: ՖՀՄՍ 9-ի ընդունման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունները հիմնականում ճանաչվելու են չբաշխված շահույթում և պահուստներում 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ:
- Կիրականացվեն գնահատումներ այն փաստերի և հանգամանքների հիման վրա, որոնք առկա են սկզբնական կիրառման օրվանից՝ որոշելու բիզնես մոդելը, որի շրջանակում պահվում է ֆինանսական ակտիվը:

Եթե պարտքային գործիքները 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեն ցածր վարկային ռիսկ, ապա Ընկերությունը որոշելու է, որ վարկային ռիսկը էական չի աճել սկզբնական ճանաչումից հետո:

ՖՀՄՍ 15, Հաճախորդների հեղ պայմանագրերից հասույթ

ՖՀՄՍ 15-ը ներկայացնում է հասույթի ճանաչման նոր պահանջներ՝ փոխարինելով ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր», և որոշ հասույթի հետ կապված մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հսկողության վրա հիմնված հասույթի ճանաչման մոդել և տրամադրում է հավելյալ ուղղորդում մանրամասնորեն չլուսաբանված տարբեր բնագավառներում գործող ՖՀՄՍ-ների ներքո, այդ թվում, թե պայմանավորվածությունների համար ինչպես հաշվառել բազմաթիվ կատարողական պարտավորությունները, փոփոխական գնագոյացումը, հաճախորդների փոխհատուցման իրավունքները, մատակարարների հետգնման տարբերակները և այլ ընդհանուր բարդություններ:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններում: Ընկերության ղեկավարությունը դեռ չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16, Վարձակալություն

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,

- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը «Հաճախորդների հետ պայմանագրերից հատույթ», նույնպես կիրառվի: Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այլ ստանդարտներ

Հետևյալ փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները զգալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- 2014-2016թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-ՖՀՄՍ 1 և ՀՀՄՍ 28 փոփոխություններ (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ» (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 23 «Անորոշություն շահութահարկի մոտեցումների շուրջ» (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսակիր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը

շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

Ջուտ առևտրային եկամուտ

Ջուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2017թ. դեկտեմբերի 31	2016թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	484.10	483.94
ՀՀ դրամ/1 Եվրո	580.10	512.20

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գույքի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են կանխիկ դրամից և բանկերում հաշիվներից:

Դրամական միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է միայն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է

չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես վարկեր և դեբիտորական պարտքեր: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա, հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Ընկերությունն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ

ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Ընկերությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Ընկերությունը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Ընկերությանը, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Ընկերության ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական միջոցների հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական միջոցների հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Ընկերության կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Ընկերությանը: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեքկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեքկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեքկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

4.7 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Ընկերությունը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Ընկերության շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Ընկերության կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ

տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.8 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն՝ Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.9 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	20	5
Տրանսպորտային միջոցներ	5	20
Համակարգիչներ և կապի միջոցներ	3	33.33
Գույք և գրասենյակային սարքավորումներ	3	33.33
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները բավարարում են ակտիվի չանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.10 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ:

Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.11 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.12 Փոխառություններ և վարկեր

Փոխառությունները և վարկերը սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.13 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.14 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.15 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Ընկերության առևտրային գործունեությունը:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 25):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի

գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 24):

Վարկերի արժեզրկում

Ընկերությունը գնահատում է խնդրահարույց վարկերը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական միջոցների հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Ընկերությունը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական միջոցների հոսքերի նվազումները:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ 23 ծանոթագրությունը:

6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Հաճախորդներին տրված վարկեր	6,002,714	6,416,698
Եկամուտներ բանկային հաշիվներից	246	254
Այլ	18	-
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	<u>6,002,978</u>	<u>6,416,952</u>

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	275,853	224,060
Փոխառություններ և վարկեր	1,679,581	1,517,481
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	<u>1,955,434</u>	<u>1,741,541</u>

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ապահովագրական գործակալի գործունեությունից	706	637
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	<u>706</u>	<u>637</u>
Դրամարկղային գործառնություններ	1,257	1,425
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	1,234	874
Վարկային գծի տրամադրման միջնորդավճար	4,718	4,907
Այլ վճարներ	216	192
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	<u>7,425</u>	<u>7,398</u>

8 Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Արտարժույթի առջ ու վաճառքից զուտ եկամուտ	121,191	87,861
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթային վերագնահատումից զուտ եկամուտ	23,234	7,971
Ընդամենը արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ	<u>144,425</u>	<u>95,832</u>

9 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Տույժերից և տուգանքներից եկամուտ	221,993	244,908
Այլ եկամուտներ	4,673	1,448
Ընդամենը այլ եկամուտներ	<u>226,666</u>	<u>246,356</u>

10 Արժեզրկման (ծախս)/փոխհատուցում

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Հաճախորդներին տրված վարկեր (ծանոթ. 15)	73,068	(396,094)
Ընդամենը ակտիվների արժեզրկման (ծախս)/փոխհատուցում	<u>73,068</u>	<u>(396,094)</u>

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Աշխատակիցների հատուցումներ՝ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	1,393,306	1,223,588
Անձնակազմի ուսուցման ծախսեր	3,403	1,904
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	<u>1,396,709</u>	<u>1,225,492</u>

12 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախս	20,687	22,858
Գովազդի ծախսեր	31,707	11,556
Գործուղման ծախսեր	3,383	2,323
Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր	13,433	16,594
Վարձակալության գծով ծախսեր	137,946	114,667
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	15,968	19,507
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	2,421	14,286
Անվտանգության գծով ծախսեր	53,057	59,203
Բռնագանձված ակտիվների վաճառքից կորուստներ	-	339
Ներկայացուցչական ծախսեր	829	1,260
Գրասենյակային ծախսեր	69,091	31,681
Ինկասացիոն ծախսեր	6,124	4,838
Ֆինանսական համակարգի հաշտարարին վճարներ	13,614	12,379
Կոմունալ ծախսեր	27,180	23,285
ԱՔԲԱ-ի գծով ծախս	9,886	10,862
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	18,940	14,967
Վարկային պարտավորությունների զիջման ծախսեր	36,700	16,382
Այլ ծախսեր	8,900	14,296
Ընդամենը այլ ծախսեր	469,866	391,283

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ընթացիկ հարկի գծով ծախս	492,703	580,663
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	-	797
Հետաձգված հարկ	20,599	(1,310)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	513,302	580,150

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով **ծախսի** և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	Արդյունավետ դրույքաչափ (%)		Արդյունավետ դրույքաչափ (%)	
	2017		2016	
Շահույթ մինչև հարկումը	2,523,520		2,913,380	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	504,704	20	582,676	20
Չհարկվող եկամուտ	(336)	-	(5,905)	-
Չնվազեցվող ծախսեր	14,963	(1)	5,857	-
Արտարժույթի դրական փոխարժեքային տարբերություն	(4,647)	-	(1,594)	-
Նախորդ ժամանակաշրջանի հարկի ճշգրտում	-	-	797	-
Շահութահարկի այլ արտոնություններ	(1,382)	-	(1,681)	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	<u>513,302</u>	<u>19</u>	<u>580,150</u>	<u>20</u>

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Շահույթում կամ վնասում ճանաչված		Շահույթում կամ վնասում ճանաչված	
Այլ պարտավորություններ	12,000	9,612	21,612	
Վարկեր և փոխառություններ	3,530	(321)	3,209	
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	<u>15,530</u>	<u>9,291</u>	<u>24,821</u>	
Վարկեր հաճախորդներին	(6,636)	(30,518)	(37,154)	
Այլ ակտիվներ	(628)	628	-	
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	<u>(7,264)</u>	<u>(29,890)</u>	<u>(37,154)</u>	
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	<u>8,266</u>	<u>(20,599)</u>	<u>(12,333)</u>	

Հազար ՀՀ դրամ

	2016թ. հունվարի 1-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	8,400	3,600	12,000
Փոխառություններ և վարկեր	2,055	1,475	3,530
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	10,455	5,075	15,530
Վարկեր հաճախորդներին	(3,166)	(3,470)	(6,636)
Այլ ակտիվներ	(333)	(295)	(628)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(3,499)	(3,765)	(7,264)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	6,956	1,310	8,266

14 Դրամական միջոցներ

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	1,308,578	817,350
Բանկային հաշիվներ	81,079	3,427
Ընդամենը դրամական միջոցներ	1,389,657	820,777

2017թ. ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները.

- վարկային պարտավորությունների մարում գրավների բռնագանձման միջոցով 8,815 հազար դրամ գումարով (2016թ.՝ 20,610 հազար դրամ):

15 Վարկեր հաճախորդներին

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	23,922,315	19,344,735
Ֆակտորինգ	-	3,958
	23,922,315	19,348,693
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(1,280,649)	(1,244,588)
Ընդամենը վարկեր հաճախորդներին	22,641,666	18,104,105

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքները կազմում են ՀՀ դրամով վարկերի համար 28.62% և ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ 13.46% (2016թ.՝ համապատասխանաբար 42.08% և 16.58%):

2017թ. ընթացքում Ընկերությունը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց բռնագանձված գրավը: Այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 8,815 հազար

դրամ (2016թ.՝ 20,610 հազար դրամ): Ընկերությունը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թվով տասը վարկառուներին տրամադրված վարկերի գումարը կազմում է 651,245 հազար դրամ (2016թ.՝ 494,326 հազար դրամ), ինչը կազմում է համախառն վարկային պորտֆելի 2.72%-ը (2016թ.՝ 2.56%-ը): Նշված գումարների գծով արժեզրկումից պահուստը կազմում է 37,845 հազար դրամ (2016թ.՝ 46,111 հազար դրամ):

Տրամադրված վարկերի վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է ստորև.

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական ոլորտ	Գյուղատնտեսություն	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Վարկեր	191,598	63,356	428,790	19,403,521	682,943	2,864,279	287,828	23,922,315
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(3,832)	(1,267)	(22,684)	(1,156,240)	(17,417)	(73,452)	(5,757)	(1,280,649)
Զուտ վարկեր	187,766	62,089	406,106	18,247,281	665,526	2,790,827	282,071	22,641,666

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական ոլորտ	Գյուղատնտեսություն	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Վարկեր	144,032	38,747	329,100	17,039,550	405,515	1,308,573	83,176	19,348,693
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(10,193)	(2,325)	(22,727)	(1,040,442)	(78,978)	(78,141)	(11,782)	(1,244,588)
Զուտ վարկեր	133,839	36,422	306,373	15,999,108	326,537	1,230,432	71,394	18,104,105

Վարկերի գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

2017

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական ոլորտ	Գյուղատնտեսություն	Հիփոթեք	Սպասարկում	Ընդամենը
2017թ. հունվարի 1 դրությամբ	10,193	2,325	22,727	1,040,442	78,978	78,141	11,782	1,244,588
Տարվա ծախս/ (հակադարձում)	21,338	40,079	(43,082)	(97,016)	(99,499)	75,047	30,065	(73,068)
Զուտ (դուրսգրում)/ վերադարձ	(11,009)	(27,445)	42,866	77,890	56,376	(2,813)	(26,736)	112,270
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,522	14,959	22,511	1,021,316	35,855	150,375	15,111	1,280,649
Անհատական արժեզրկում	-	-	-	-	-	-	-	-
համբային արժեզրկում	20,522	14,959	22,511	1,021,316	35,855	150,375	15,111	1,280,649
	20,522	14,959	22,511	1,021,316	35,855	150,375	15,111	1,280,649

Հազար ՀՀ դրամ

	Արդյունա- բերու- թյուն	Շինարա- րություն	Առևտուր	Սպառո- ղական ուղրտ	Գյուղա- տնտե- սություն	Հիփոթեք	Սպա- սարկում	Ընդա- մենը
2016թ. հունվարի 1 դրությամբ	8,319	1,621	80,855	584,934	45,980	48,569	17,296	787,574
Տարվա ծախս/ (հակադարձում)	34,964	704	3,964	41,873	292,104	27,875	(5,390)	396,094
Զուտ (դուրսգրում)/ վերադարձ	(33,090)	-	(62,092)	413,635	(259,106)	1,697	(124)	60,920
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,193	2,325	22,727	1,040,442	78,978	78,141	11,782	1,244,588
Անհատական արժեզրկում	-	-	-	-	-	-	-	-
Խմբային արժեզրկում	10,193	2,325	22,727	1,040,442	78,978	78,141	11,782	1,244,588
	10,193	2,325	22,727	1,040,442	78,978	78,141	11,782	1,244,588

Տրամադրված վարկերի վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մասնավոր ձեռնարկություններ	460,791	410,696
Ֆիզիկական անձիք	22,933,336	18,696,601
Անհատ ձեռնարկատերեր	528,188	241,396
	23,922,315	19,348,693
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(1,280,649)	(1,244,588)
Ընդամենը վարկեր	22,641,666	18,104,105

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արդյունաբերություն	18,549	7,198
Շինարարություն	7,004	-
Առևտուր	-	7,566
Հիփոթեքային	2,855,592	1,301,515
Այլ սպառողական	836,164	690,379
Գյուղատնտեսական	647,926	345,477
Ոսկու գրավով	18,568,101	16,344,466
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր (համախառն)	22,933,336	18,696,601

Ինչպես նշված է 25 ծանոթագրությունում, 2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելին ներհատուկ այլ ռիսկերը բացահայտված են **28** ծանոթագրությունում:

Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 24 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է 27 ծանոթագրությունում:

16 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Փոխադրամիջոցներ	Համակարգչային տեխնիկա	Գույք և գրասենյակային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Կապիտալ ներդրումներ վարձակալված ՀՄ-ում	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>							
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	86,144	146,228	92,528	33,664	46,041	50,111	454,716
Ավելացում	160	160	49,022	11,089	9,209	5,090	74,730
Օտարում	-	-	(1,467)	(472)	(1,914)	-	(3,853)
Վերադասակարգում	-	-	-	-	1,104	(1,104)	-
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	86,304	146,388	140,083	44,281	54,440	54,097	525,593
Ավելացում	1,460	2,203	28,105	33,935	42,722	50,270	158,695
Օտարում	-	-	(359)	(305)	(93)	-	(757)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	87,764	148,591	167,829	77,911	97,069	104,367	683,531
<i>Կուրսակված մաշվածություն</i>							
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	4,279	67,247	42,382	21,340	13,755	6,007	155,010
Տարվա ծախս	4,322	29,374	27,933	8,998	8,414	2,703	81,744
Օտարում	-	-	(1,410)	(472)	(1,395)	-	(3,277)
Վերադասակարգում	-	-	-	-	52	(52)	-
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,601	96,621	68,905	29,866	20,826	8,658	233,477
Տարվա ծախս	4,395	27,575	36,080	10,225	9,812	2,969	91,056
Օտարում	-	-	(325)	(305)	(93)	-	(723)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,996	124,196	104,660	39,786	30,545	11,627	323,810
<i>Հաշվեկշիռային արժեք</i>							
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	77,703	49,767	71,178	14,415	33,614	45,439	292,116
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	74,768	24,395	63,169	38,125	66,524	92,740	359,721

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության շենքերը գրավադրած են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում՝ որպես վարկային գծի ապահովման միջոց (տես՝ ծանոթագրություն 19): Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկսնական արժեքը կազմում է 103,141 հազար դրամ (2016թ.՝ 37,545 հազար դրամ):

Պայմանագրային պարտավորություններ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի պայմանագրային պարտավորություններ 6,888 հազար դրամ գումարի չափով (2016թ.՝ չունի) բունկերային դռնի և հսկման համակարգի գնման գծով:

17 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	Լիցենզիաներ և վստահագրեր	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	17,204	8,424	25,628
Ավելացում	10,430	-	10,430
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,634	8,424	36,058
Ավելացում	4,486	-	4,486
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,120	8,424	40,544
<i>Կուտակված ամորտիզացիա</i>			
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	1,938	491	2,429
Մասհանումներ	2,003	842	2,845
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,941	1,333	5,274
Մասհանումներ	2,991	842	3,833
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,932	2,175	9,107
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,693	7,091	30,784
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,188	6,249	31,437

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

18 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	13,076	5,397
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	13,076	5,397
Մատակարարներին տրված կանխավճարներ հիմնական միջոցների և նյութական ակտիվների ձեռքբերման համար	8,525	7,895
Տրված այլ կանխավճարներ	-	854
Կանխավճարներ հարկերի և տուրքերի գծով	51	2,818
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	4,261	6,836
Պահեստ	10,854	10,048
Բռնագանձված ակտիվներ	126,367	134,524
Այլ ակտիվներ	9	-
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	150,067	162,975
Ընդամենը այլ ակտիվներ	163,143	168,372

Ընկերության կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների տնօրինման արդյունքում տարվա ընթացքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	126,367	134,206
Ոսկի	-	318
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	126,367	134,524

Ընկերության քաղաքականությունն է հետամուտ լինել գրավի իրացմանը պատշաճ կերպով և ժամկետներում: Ընկերությունը հիմնականում չի օգտագործում գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են սկզբնական արժեքի և իրական արժեքի հանաձ վաճառքի ծախսումներից նվազագույնով:

19 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր բանկերից	3,885,213	2,426,958
Վարկեր վարկային կազմակերպություններից	654,258	437,565
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	<u>4,539,471</u>	<u>2,864,523</u>

Բանկերից վարկերն իրենցից ներկայացնում են ՀՀ առևտրային բանկերի վարկերի և վարկային գծերի օգտագործված մասը: Բոլոր վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի 193,719 հազար դրամի չափով պարտավորությունն ապահովված է Ընկերության անշարժ գույքերի գրավադրմամբ (տես՝ ծանոթագրություն՝ 16), իսկ մնացած գումարը՝ Ընկերության բաժնետերերին և վերջիններիս հետ կապակցված կողմ հադիսացող անձանց պատկանող անշարժ գույքերի գրավով:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 8.30% (2016թ.՝ ՀՀ դրամով պարտավորություններ չեն եղել), իսկ ԱՄՆ դոլարով պարտավորությունների գծով՝ 8.13% (2016թ.՝ 9.51%):

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016թ.՝ նույնպես):

20 Փոխառություններ և վարկեր

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ բաժնետերերից	15,862,157	11,581,023
Վարկեր ՀՀ կառավարությունից	172,451	115,492
Այլ փոխառություններ	176,351	1,019
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	<u>16,210,959</u>	<u>11,697,534</u>

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամով փոխառությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 13.10% (2016թ.՝ 13.91%), ԱՄՆ դոլարով փոխառությունների համար՝ 7.78% (2016թ.՝ 10.47%):

Բաժնետերերից ներգրավված փոխառություններն ունեն շուկայական տոկոսադրույքներ:

ՀՀ կառավարությունից փոխառությունները ներառում են վարկեր՝ ստացված Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից «Գյուղատնտեսական վարկեր» ծրագրի շրջանակներում:

Փոխառություններն ու վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016թ.՝ նույնպես):

21 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վճարվելիք գումարներ	72,225	61,176
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	126,130	74,463
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	198,355	135,639
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	35,174	27,035
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	35,174	27,035
Ընդամենը այլ պարտավորություններ	233,529	162,674

22 Սեփական կապիտալ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 2,000,000 հազար դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 400,000 հասարակ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ

	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում, %
Վիգեն Բաղայան	1,000,000	50
Վահե Բաղայան	1,000,000	50
	2,000,000	100

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել (2016թ.՝ նույնպես):

2017թ. ընթացքում Ընկերությունը չի ավելացրել բաժնետիրական կապիտալը (2016թ.՝ նույնպես):

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերն ունեն մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2017թ. ընթացքում Ընկերությունը վճարել է շահաբաժիններ՝ 2,211,742 հազար դրամ 2016թ. տարեկան արդյունքներով և 1,000,000 հազար դրամ միջանկյալ շահաբաժին:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ կազմակերպությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումից հետո պետք է

ստեղծի գլխավոր պահուստ՝ ընդհանուր դիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված դիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով՝ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: Կանոնադրությամբ նախատեսվում է պահուստի հատկացում ոչ պակաս քան Ընկերության տարեկան շահույթի 5%-ի չափով:

23 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային դիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ընկերությանը ներկայացվող դատական հայցերի առումով Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բաժնետիրոջը տրամադրված երաշխավորություն	-	29,460
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	-	29,460

Տրամադրված երաշխավորությունների պարտքային ռիսկի առավելագույն չափը լավագույնս ներկայացված է այս պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարում:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով՝ Ընկերությունը որպես վարձակալող

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է վարձակալության պայմանագրեր տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	<u>2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Մինչև 1 տարի	21,047	14,022
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	<u>21,047</u>	<u>14,022</u>

Կապիտալ բնույթի պարտավորություններ

Ընկերությունը տարեվերջի դրությամբ չունի կապիտալ բնույթի պարտավորություններ:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Ընկերությունը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունը չունի սխալների կամ բացթողումների հետևանքով առաջացած պարտավորությունների ապահովագրում: Ներկայումս, Հայաստանում առկա չեն պարտավորությունների գծով ապահովագրական ծառայություններ:

24 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերությունը վերջնական վերահսկող են հանդիսանում Բաղայան եղբայրները:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում:

Ընկերության կապակցված կողմերի հետ գործարքները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակց- ված կողմեր	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակց- ված կողմեր
<i>Հաճախորդներին տրված վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ (համախառն)	553	-	3,541	-
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	-	-	1,000	-
Տարվա ընթացքում մարված վարկեր	(553)	-	(3,988)	-
Մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ (համախառն)	-	-	553	-
Արժեզրկումից պահուստ	-	-	(11)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	542	-
<i>Փոխառություններ և վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	11,581,023	-	10,883,237
Տարվա ընթացքում ստացված	-	12,986,193	-	8,504,435
Տարվա ընթացքում վճարված	-	(8,705,059)	-	(7,806,649)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	15,862,157	-	11,581,023
<i>Տրված երաշխավորություն</i>	-	-	-	29,460
<i>Ներգրավված վարկային գծերի ապահովման համար անշարժ գույքի գրավադրում</i>	1,901,600	-	1,901,600	-
<i>Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</i>				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	44	-	523	-
Տոկոսային ծախսեր փոխառությունների գծով	-	1,666,255	-	1,454,184
Արժեզրկման հակադարձում	11	-	24	-
Վարձակալության գծով ծախսեր	-	21,047	-	14,022

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Աշխատավարձ և պարգևատրումներ	82,594	109,840
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	82,594	109,840

25 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):

Մակարդակ 2՝ Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

25.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ	-	1,389,657	-	1,389,657	1,389,657
Հաճախորդներին տրված վարկեր	-	22,641,666	-	22,641,666	22,641,666
Այլ ակտիվներ	-	13,076	-	13,076	13,076
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	4,539,471	-	4,539,471	4,539,471
Փոխառություններ և վարկեր	-	16,210,959	-	16,210,959	16,210,959
Այլ պարտավորություններ	-	198,355	-	198,355	198,355

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ	-	820,777	-	820,777	820,777
Հաճախորդներին տրված վարկեր	-	18,104,105	-	18,104,105	18,104,105
Այլ ակտիվներ	-	5,397	-	5,397	5,397
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	2,864,523	-	2,864,523	2,864,523
Փոխառություններ և վարկեր	-	11,697,534	-	11,697,534	11,697,534
Այլ պարտավորություններ	-	135,639	-	135,639	135,639

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք անվանական տոկոսադրույքերը կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 10% մինչև 24% տարեկան (2016թ.՝ 12% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ներգրաված վարկեր և փոխառություններ

Ներգրաված վարկերի և փոխառությունների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով՝ զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող վարկերի համար առաջարկվող դրույքաչափերը:

26 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքներով իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնք ներկայացված են զուտ արժեքով կամ կհաշվանցվեն համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրի:

27 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 28.3-ում:

Հազար ՀՀ դրամ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ	1,389,657	-	1,389,657	-	-	-	1,389,657
Հաճախորդներին տրված վարկեր	572	349,604	350,176	20,637,997	1,653,493	22,291,490	22,641,666
Այլ ակտիվներ	13,076	-	13,076	-	-	-	13,076
	1,403,305	349,604	1,752,909	20,637,997	1,653,493	22,291,490	24,044,399
<i>Պարտավորություններ</i>							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	898,060	898,060	3,641,411	-	3,641,411	4,539,471
Վարկեր և փոխառություններ	15,781	3,701,869	3,717,650	12,493,309	-	12,493,309	16,210,959
Այլ պարտավորություններ	198,355	-	198,355	-	-	-	198,355
	214,136	4,599,929	4,814,065	16,134,720	-	16,134,720	20,948,785
Զուտ Դիրք	1,189,169	(4,250,325)	(3,061,156)	4,503,277	1,653,493	6,156,770	3,095,614
Կուտակված ճեղքվածք	1,189,169	(3,061,156)		1,442,121	3,095,614		

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա- գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա- հանրա- գումար	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ	820,777	-	820,777	-	-	-	820,777
Հաճախորդներին տրված վարկեր	996,755	15,019,094	16,015,849	2,045,109	43,147	2,088,256	18,104,105
Այլ ակտիվներ	5,397	-	5,397	-	-	-	5,397
	<u>1,822,929</u>	<u>15,019,094</u>	<u>16,842,023</u>	<u>2,045,109</u>	<u>43,147</u>	<u>2,088,256</u>	<u>18,930,279</u>
<i>Պարտավորություններ</i>							
Պարտավորություններ ֆինան- սական կազմակերպությունների նկատմամբ	9,277	435,546	444,823	2,419,700	-	2,419,700	2,864,523
Վարկեր և փոխառություններ	3	1,198,280	1,198,283	10,499,251	-	10,499,251	11,697,534
Այլ պարտավորություններ	135,639	-	135,639	-	-	-	135,639
	<u>144,919</u>	<u>1,633,826</u>	<u>1,778,745</u>	<u>12,918,951</u>	<u>-</u>	<u>12,918,951</u>	<u>14,697,696</u>
Զուտ Դիրք	<u><u>1,678,010</u></u>	<u><u>13,385,268</u></u>	<u><u>15,063,278</u></u>	<u><u>(10,873,842)</u></u>	<u><u>43,147</u></u>	<u><u>(10,830,695)</u></u>	<u><u>4,232,583</u></u>
Կուտակված ճեղքվածք	<u><u>1,678,010</u></u>	<u><u>15,063,278</u></u>		<u><u>4,189,436</u></u>	<u><u>4,232,583</u></u>		

28 Ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Ռիսկերի կառավարումը Ընկերությունը իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով:

Կարևորագույն ռիսկերն են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Ընկերության Վարչության կողմից՝ ըստ Ընկերության Ընդհանուր ժողովի հաստատած վարկային քաղաքականության և ներքին կանոնակարգերի: Ընկերության վարչության կազմում ընդգրկված են Ընկերության գլխավոր գործադիր տնօրենը, նրա տեղակալները և գլխավոր հաշվապահը: Ընկերության Վարչությունը նույնականացնում է, գնահատում և միջոցներ է ձեռնարկում զսպելու ֆինանսական ռիսկերը:

Ընկերության խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար: Ընկերության Վարչությունը սահմանում է տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների սակագները: Իրականացնում է գործառնական ռիսկերի կառավարման ընթացիկ աշխատանքները:

Ներքին աուդիտ

Ընկերության կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Ընկերության գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ընկերության Խորհրդին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Ընկերության ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Ընկերության գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

28.1 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, ինչը Ընկերությանը կարող է կորուստներ պատճառել: Պարտքային ռիսկը Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ընկերության պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Ընկերության ղեկավարությանը:

Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

28.1.1 Պարտքային դիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության՝ պարտքային դիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ	ՀՀ	ՏՀԶԿ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ	1,389,657	-	-	1,389,657
Հաճախորդներին տրված վարկեր	22,400,016	5,957	235,693	22,641,666
Այլ ակտիվներ	13,076	-	-	13,076
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>23,802,749</u>	<u>5,957</u>	<u>235,693</u>	<u>24,044,399</u>
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>18,859,260</u>	<u>4,260</u>	<u>66,759</u>	<u>18,930,279</u>

Ակտիվները դասակարգվում են, հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Տնտեսության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2017 և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության՝ պարտքային դիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի.

Հազար ՀՀ դրամ	Ֆինանսական նաբերուհատված	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական ոլորտ	Գյուղատնտեսություն	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ	1,389,657	-	-	-	-	-	-	-	1,389,657
Հաճախորդներին տրված վարկեր	-	187,766	62,089	406,106	18,247,281	665,526	2,790,827	282,071	22,641,666
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	-	13,076	13,076
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1,389,657</u>	<u>187,766</u>	<u>62,089</u>	<u>406,106</u>	<u>18,247,281</u>	<u>665,526</u>	<u>2,790,827</u>	<u>295,147</u>	<u>24,044,399</u>
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>820,777</u>	<u>133,839</u>	<u>26,422</u>	<u>306,373</u>	<u>16,004,505</u>	<u>326,537</u>	<u>1,230,432</u>	<u>71,394</u>	<u>18,930,279</u>

28.1.2 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով:

Մեկ վարկառուի զծով վարկային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, ավելի սահմանափակված է լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև օրական սահմանաչափերով կապված առևտրային գործարքների հետ, ինչպիսիք են արտարժույթային ֆորվարդի պայմանագրերը: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Պարտքային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Ընկերությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Ընկերությունը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները, շրջանառու միջոցները,
- Ավտոմեքենայի գրավադրում
- Ոսկու գրավադրում
- Երաշխիքներ:

Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Ընկերությունը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	4,332,525	2,353,393
Շարժական գույք	100,419	139,307
Ոսկու գրավ	18,954,517	16,349,171
Խմբակային երաշխավորությամբ	236,421	322,027
Կազմակերպությունների երաշխիքներ	289,971	180,553
Առանց ապահովության	8,462	4,242
Ընդամենը վարկեր (համախառն)	23,922,315	19,348,693

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները ենթակա են նույն վարկային ռիսկին, ինչ վարկերը:

28.1.3 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Ընկերությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ հիփոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չեն:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր					
Առևտուր	-	-	55,441	6,281	61,722
Սպառողական	1,864,041	898,682	596,594	483,717	3,843,034
Գյուղատնտեսություն	14,381	-	2,663	-	17,044
Հիփոթեքային	4,840	7,679	-	4,239	16,758
Ընդամենը	1,883,262	906,361	654,698	494,237	3,938,558

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր					
Արդյունաբերություն	-	-	53,400	10,721	64,121
Առևտուր	421	-	50,720	39,302	90,443
Սպառողական	1,866,806	1,033,420	706,177	507,424	4,113,827
Գյուղատնտեսություն	18,404	6,854	57	2,932	28,247
Հիփոթեքային	4,508	-	-	14,972	19,480
Ընդամենը	1,890,139	1,040,274	810,354	575,351	4,316,118

28.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Ընկերությունը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել առևտրային պորտֆել: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Ընկերությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

28.2.1 Շուկայական ռիսկ՝ Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքների արժեքը տատանվում է արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
Արտարժույթ				
ԱՄՆ դոլար	+10	(34,455)	+10	(68,744)
ԱՄՆ դոլար	(10)	34,455	(10)	68,744
Եվրո	+10	7,024	+10	(2,386)
Եվրո	(10)	(7,024)	(10)	2,386

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2017			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ	814,008	400,300	175,349	1,389,657
Հաճախորդներին տրված վարկեր	18,368,851	4,272,815	-	22,641,666
Այլ ակտիվներ	13,076	-	-	13,076
	19,195,935	4,673,115	175,349	24,044,399
<i>Պարտավորություններ</i>				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	168,147	4,371,324	-	4,539,471
Վարկեր և փոխառություններ	15,637,825	573,134	-	16,210,959
Այլ պարտավորություններ	198,355	-	-	198,355
Ընդամենը	16,004,327	4,944,458	-	20,948,785
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,191,608	(271,343)	175,349	3,095,614

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	16,718,600	2,191,229	20,450	18,930,279
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	11,832,154	2,865,542	-	14,697,696
Զուտ դիրք 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,886,446	(674,313)	20,450	4,232,583

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն: Ոչ փոխարկելի արժույթը՝ ռուսական ռուբլին:

28.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության ռիսկը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան:

Ստորև ներկայացվում է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես Ծանոթագրություն 27-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			Ընդամենը
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1-12 ամիս	1-5 տարի	
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	939,392	4,178,992	5,118,384
Վարկեր և փոխառություններ	17,092	4,451,721	17,578,475	22,047,288
Այլ պարտավորություններ	198,355	-	-	198,355
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	215,447	5,391,113	21,757,467	27,364,027

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	21,376	660,690	2,740,916	-	3,422,982
Վարկեր և փոխառություններ	9	1,349,042	13,936,691	-	15,285,742
Այլ պարտավորություններ	135,639	-	-	-	135,639
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	157,024	2,009,732	16,677,607	16,677,607	18,844,363
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	-	-	29,460	-	29,460

28.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Ընկերության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Ընկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Ընկերության Խորհրդին:

29 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների փոփոխություն

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պարտավորություններ ֆինանսական կազմակերպ. նկատմամբ	Փոխառություններ և վարկեր	Ընդամենը
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	2,864,523	11,697,534	14,562,057
Դրամային հոսքերից	1,581,563	4,419,859	6,001,422
Ստացված գումար	6,565,030	13,173,881	19,738,911
Վճարված գումար	(4,983,467)	(8,754,022)	(13,737,489)
Ոչ դրամային հոսքերից	93,385	93,566	186,951
Փոխարժեքային տարբերություն	93,385	93,566	186,951
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,539,471	16,210,959	20,750,430

30 Կապիտալի համարժեքություն

ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար սահմանել է կանոնադրական կապիտալի նվազագույն չափ 150,000 հազար դրամի չափով և այն ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար, որոնք իրենց կանոնադրության համաձայն կանխիկ ձևով գնում և (կամ) վաճառում են արտարժույթ, նորմատիվային կապիտալի նվազագույն չափ՝ մեկ միլիարդ ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 10%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման և այլ պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական կապիտալ	2,982,882	4,159,700
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	2,982,882	4,159,700
Ռիսկով կշռված ակտիվներ	25,383,945	20,251,707
Կապիտալի համարժեքության նորմատիվ	11.8%	20.5%

ՀՀ կենտրոնական բանկի կողմից կանխիկ ձևով արտարժույթի առուվաճառք իրականացնող, ինչպես նաև թողարկող վարկային կազմակերպությունների համար սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները: